ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2009 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1.

ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4

1.1. Դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանք 4

1.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն 4
1.1.2. Խորհրդատվություն..... 13
1.1.3. Ընդունելություն 17
1.1.4. Այցելություններ, արագ արձագանքում 17

1.2. Դրական արդյունքներով ավարտված գործեր 22

1.3. Իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն 26

1.4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտ 28

1.4.1. Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվական նյութերի ամենօրյա պատրաստում և տարածում..... 30
1.4.2. Հայաստանյան և արտերկրյա ԶԼՄ–ներում տեղ գտած մարդու իրավունքներին վերաբերող նյութերի ամենօրյա մոնիտորինգ..... 31
1.4.3. Մամուլի ասուլիսների, Պաշտպանի և նրա աշխատակազմի հետ հարցազրույցների կազմակերպում 32
1.4.4. Մարդու իրավունքների հանրային իրազեկման և բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված գործունեություն 33
1.4.5. Պաշտպանի կայքէջի վարում 34

1.5. Միջազգային համագործակցություն.....34

1.6. Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն.....39

ԲԱԺԻՆ 2.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 41

2.1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ 41

2.1.1. Խոշտանգումների արգելում..... 41
2.1.2. Արդար դատաքննության իրավունք 48
2.1.3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 52
2.1.4. Ընտրելու և ընտրվելու իրավունք 53

2.2. Տնտեսական և սոցիալական իրավունքներ.....54

2.2.1. Աշխատանքային իրավունքներ..... 54
2.2.2. Սոցիալական ապահովության իրավունք..... 60
2.2.3. Սեփականության իրավունք 65
2.2.4. Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունք 67

ԲԱԺԻՆ 3.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 71

3.1. ՀՀ Ազգային ժողով 71

3.2. ՀՀ կառավարություն 73

3.2.1. Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 79
3.2.2. ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն 81
3.3. ՀՀ ոստիկանություն.....82
3.4. ՀՀ դատախազություն 87
3.5. ՀՀ հատուկ քննչական ծառայություն 89
3.6. Դատական պրակտիկայի դիտարկում (մոնիտորինգ) 90
3.6.1. Օրենսդրական թերությունների ազդեցությունը արդար դատաքննության իրականացման արդյունավետության վրա 90
3.6.2. Գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու օրենսդրական դրույթի վերաբերյալ 92
3.6.3. Խափանման միջոց կալանքն ընտրելու կամ փոխելու վերաբերյալ իրավակիրառ պրակտիկան 93
3.6.4. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մեկնաբանությունները դատարանների կողմից 94
3.6.5. Անվճար իրավաբանական օգնության տրամադրման հիմնախնդիրը..... 95
3.6.6. Սեփականության իրավունքի պաշտպանությանն առնչվող խնդիրների վերաբերյալ 96
3.6.7. Փաստաբանների պաշտպանվածության վերաբերյալ..... 98
3.7. Դատական նիստերի դիտարկում (մոնիտորինգ).....100
3.7.1. ՀՀ դատարանները կայացրել են արդարացման դատավճիռներ 100
3.8. ՀՀ արդարադատության նախարարության համակարգի մարմիններ.....101
3.8.1. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն..... 101
3.8.2. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ 104
3.9. ՀՀ պաշտպանության նախարարություն.....105
3.10. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
/ենթակառուցվածքներ/.....107
3.10.1. Միգրացիոն գործակալություն 110
3.10.2. Ջրային տնտեսության պետական կոմիտե..... 112
3.11. ՀՀ կրթության և գիտության նախարարություն.....114
3.12. ՀՀ առողջապահության նախարարություն.....115
3.13. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 117
3.13.1. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական ծառայություն..... 118
3.13.2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն 122
3.13.3. Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով /ԲՍՓՀ/..... 122
3.13.4. Աշխատանքի պետական տեսչություն..... 123
3.14. ՀՀ ֆինանսների նախարարություն 123
3.15. ՀՀ բնապահպանության նախարարություն 124
3.16. Տրանսպորտի և կապի նախարարություն 128
3.17. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ.....130
3.17.1. Մարզպետարաններ..... 130

3.17.2. Երևանի քաղաքապետարան 133
3.17.3. Երևանի վարչական շրջաններ 142
3.17.4. Քաղաքապետարաններ 143
3.17.5. Գյուղապետարաններ 147
ԲԱԺԻՆ 4.
ՀԱՏՈՒԿ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 149
4.1. Զինակոչիկների և զինծառայողների իրավունքներ 149
4.2. Երեխաների իրավունքներ 162
4.3. Հաշմանդամների իրավունքներ 166
4.4. Փախստականների իրավունքներ 169
4.5. Ազգային փոքրամասնությունների իրավունքներ 171
4.6. Կանանց իրավունքներ 174

ԲԱԺԻՆ 1.
ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանք

1.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն

2009թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 4683 անձանցից ստացել է 3783 դիմում-բողոք, որից 1147-ը՝ գրավոր (դրանցից 42-ը կազմում են կոլեկտիվ դիմում-բողոքները՝ ներկայացված 942 դիմումատուի կողմից), իսկ 2636-ը՝ բանավոր: Նշված ժամանակահատվածում դրական լուծում է ստացել 78 դիմում-բողոք, ինչի արդյունքում վերականգնվել է 378 անձանց խախտված իրավունքը:

Աղյուսակ 1-ում ներկայացված է 2008 և 2009 թվականներին Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քանակական համեմատությունը՝ համաձայն միջին ամսական թվերի:

Աղյուսակ 1

Դիմում-բողոքների քանակական պատկերը

	ընդամենը		միջին ամսական			
	2008թ.	2009թ.	2008թ.	2009թ.	տարբերություն	% հարաբերություն
ընդամենը	4090	3783	341	315	-26	92,4 %
այդ թվում՝ գրավոր	1227	1147	102	96	-6	94.1 %
այդ թվում՝ բանավոր	2863	2636	239	220	-19	92.1 %
անձանցից	5806	4683	484	390	-94	80.6 %

Գրաֆիկ 1. Դիմում-բողոքների քանակական պատկերը միջին ամսական կտրվածքով



Աղյուսակ 1-ում բերված համեմատությունը ցույց է տալիս, որ 2009թ. Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ընդհանուր թվի միջին ամսական տոկոսային հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 7.6 տոկոսով, գրավոր դիմում-բողոքների թիվը՝ 5.9 տոկոսով, իսկ բանավորներինը՝ 7.9 տոկոսով: 19.4 տոկոսով նվազել է Պաշտպանին դիմող անձանց թիվը: Այս նվազումը հիմնականում պայմանավորված է Պաշտպանի կողմից քննարկման ոչ ենթակա բողոքների քանակի կրճատմամբ, ինչն իր հերթին վկայում է քաղաքացիների կողմից Պաշտպանի լիազորությունների և Պաշտպանի հաստատության դերի վերաբերյալ գիտելիքների բարձրացման մասին:

2009թ. ընթացքում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ դիմում-բողոքներ ստացվել են Երևան քաղաքի և Հայաստանի բոլոր մարզերի բնակիչներից, ինչի մասին վկայում է աղյուսակ 2-ում ներկայացված գրավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

Աղյուսակ 2

		2008թ.		2009թ.	
	մարզի անվանում	քանակ	%	քանակ	%
1.	Երևան /համայնք/	795	64.8	**704**	**61.4**
2.	Լոռի	49	6.8	**77**	**6.7**
3.	Կոտայք	67	5.4	**63**	**5.5**
4.	Շիրակ	68	4.4	**61**	**5.3**
5.	Արարատ	37	3.7	**41**	**3.6**
6.	Արմավիր	42	1.9	**35**	**3.1**
7.	Գեղարքունիք	45	2.6	**34**	**2.9**
8.	Տավուշ	22	1.7	**31**	**2.7**
9.	Արագածոտն	23	2	**21**	**1.8**
10.	Սյունիք	23	2.1	**16**	**1.4**
11.	Վայոց ձոր	13	1	**16**	**1.4**
12.	Անհայտ[1]	43	2.6	**48**	**4.2**
ընդամենը		**1227**	**100**	**1147**	**100**

Գրաֆիկ 2. Գրավոր դիմում-բողոքների քանակական և տոկոսային պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների 2009թ.



[1] Այստեղ նկատի են ունեցվել այն դիմում-բողոքները, որոնցում քաղաքացիները չեն նշել իրենց հասցեները:

Պաշտպանին հասցեագրված գրավոր դիմում-բողոքների թվաքանակի համեմատությունը ցույց է տալիս, որ ինչպես 2008թ., այնպես էլ 2009թ. գերակշռում են Երևան քաղաքից ստացվող դիմում-բողոքները: Աղյուսակից նաև երևում է, որ 2008թ. համեմատությամբ 2009 թվականին Վայոց Ձորի, Տավուշի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերից, ստացված դիմում-բողոքների տոկոսային հարաբերակցությունն աճ է արձանագրել: Միևնույն ժամանակ 2009թ. նվազել է Երևան քաղաքի և մնացած մարզերից ստացված դիմում-բողոքների քանակը:

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2009թ. ստացված գրավոր դիմում-բողոքների առնչությամբ ընդունված որոշումների, ինչպես նաև դիմումատուի խնդրանքով քննարկումը դադարեցված և ուսումնասիրության ընթացքում գտնվող դիմում-բողոքների մասին վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 3

Գրավոր դիմում-բողոքների առնչությամբ ընդունված որոշումները 2009թ.

		2009թ.	
	որոշում	**քանակ**	**%**
1.	ընդունվել են քննարկման	476	41.5
2.	ներկայացվել են իրավունքի պաշտպանության հնարավորությունները	132	11.5
3.	փոխանցվել են այլ մարմինների քննարկմանը	35	3.0
4.	քննարկման չեն ընդունվել	431	37.6
5.	քննարկումը դադարեցվել է դիմումատուի խնդրանքով	17	1.5
6.	ուսումնասիրության ընթացքում են առ 30.12.2009թ.	56	4.9

Գրաֆիկ 3. Դիմում-բողոքների քանակական պատկերը՝
ըստ կայացված որոշումների 2009թ.



2009թ. ընթացքում թեև նվազել են, սակայն շարունակվել են ստացվել այնպիսի դիմում-բողոքներ, որոնք ուղղված են ոչ պետական մարմինների և կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց դեմ, ինչպես նաև անանուն և այնպիսի բողոքներ, որոնք Պաշտպանի կարծիքով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում կամ դրանց վերականգնման պահանջ չեն ներկայացնում: Դրանց վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կայացվում է բողոքը չքննարկելու մասին որոշում /«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս, 9-րդ և 10-րդ հոդվածներ/:

Աղյուսակ 3-ում նշված 431 դիմումների կապակցությամբ կայացվել է բողոքը չքննարկելու վերաբերյալ որոշում՝ վերը նշված հիմնավորումներով: Բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս դիմողին բացատրվում է այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը, իսկ դատական ակտերի հիմնավորվածության և օրինականության դեմ բերված բողոքներով քաղաքացիներին պարզաբանվում են դրանցից բխող իրավական հետևանքները, ինչպես նաև՝ դատարանների անկախության և նրանց գործունեությանը միջամտելու անթույլատրելիության սկզբունքները:

2009թ. ընթացքում Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների կեսից ավելին կազմել են բանավորները: Դրանք ստացվել են Պաշտպանի կամ նրա աշխատակազմի լիազոր անձանց կողմից մարզեր, պետական հիմնարկներ և կազմակերպություններ կատարած այցելությունների ընթացքում, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիների

այցելության կամ հեռախոսով քաղաքացիներին բանավոր խորհրդատվության տրամադրման կապակցությամբ աշխատանքների կազմակերպման արդյունքում:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2009թ. բանավոր դիմում-բողոքներ ներկայացնողների մի մասը խուսափում է գրավոր բողոք ներկայացնելուց, ինչպես նաև իրենց անունը, ազգանունը, հասցեն արձանագրելուց՝ պատճառաբանելով, որ դիմում ներկայացնելը կարող է բացասաբար անդրադառնալ իրենց վրա: Վերը նշված փաստերն ու հիմնավորումները իրենց համապատասխան արտացոլումն են գտել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2008թ. տարեկան զեկույցում:

Աղյուսակ 4-ում նշված է դիմում-բողոքների վիճակագրական տվյալները՝ ըստ հանրային մարմինների: Աղյուսակից երևում է, որ 2009թ. առավել շատ թվով դիմում-բողոքներ ստացվել են ոստիկանության, դատարանների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Երևանի քաղաքապետարանի և ՀՀ արդարադատության նախարարության դեմ:

Աղյուսակ 4

Գրավոր դիմում-բողոքներն ըստ հանրային մարմինների 2009 թ.

	Հանրային մարմնի անվանում	**2009թ.**
1.	Ոստիկանություն	**225**
2.	Դատարաններ	**202**
3.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	**100**
4.	Երևանի քաղաքապետարան	84
5.	ՀՀ արդարադատության նախարարություն	82
6.	ՀՀ պաշտպանության նախարարություն	62
7.	Դատախազություն	35
8.	Երևանի վարչական տարածքներ	23
9.	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	22
10.	Մարզպետարաններ	20
11.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	19
12.	Գյուղապետարաններ	17
13.	Տարածքային կառավարման նախարարություն /ենթակառուցվածքներ/	17
14.	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	12
15.	ՀՀ կառավարություն	12
16.	ՀՀ առողջապահության նախարարություն	12
17.	Պետական եկամուտների կոմիտե	10
18.	Քաղաքապետարաններ /բացի Երևանի քաղաքապետարանից/	8

Գրաֆիկ 4. Գրավոր դիմում-բողոքներն ըստ հանրային մարմինների 2009 թ.



1 Ոստիկանություն [225]
2 Դատարաններ [202]
3 ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն [100]
4 Երևանի քաղաքապետարան [84]
5 ՀՀ արդարադատության նախարարություն [82]
6 ՀՀ պաշտպանության նախարարություն [62]
7 Դատախազություն [35]
8 Երևանի թաղապետարաններ [23]
9 ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն [22]
10 Մարզպետարաններ [20]
11 ՀՀ կրթության և գիտության նախարարություն [19]
12 Գյուղապետարաններ [17]
13 ՀՀ տարածքային կառավարման նախարարություն /ենթակառուցվածքներ [17]
14 ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե [12]
15 ՀՀ կառավարություն [12]
16 ՀՀ առողջապահության նախարարություն [12]
17 Պետական եկամուտների կոմիտե [10]
18 Քաղաքապետարաններ (բացի Երևանի քաղաքապետարանից) [8]

Աղյուսակ 5-ում նշված են հանրային մարմինների դեմ ուղղված դիմում-բողոքների վիճակագրական տվյալները՝ ըստ անձանց թվի: Աղյուսակ 5-ից երևում է, որ ըստ անձանց թվի 2009թ. առավել շատ թվով դիմում-բողոքներ ստացվել են ոստիկանության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կրթության և գիտության նախարարության, դատարանների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դեմ:

Աղյուսակ 5

Գրավոր դիմում-բողոքներն ըստ դիմած անձանց

	Հանրային մարմնի անվանում	**2009թ.**
1.	Ոստիկանություն	**420**
2.	Երևանի քաղաքապետարան	**301**
3.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	**233**
4.	Դատարաններ	138
5.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	118
6.	ՀՀ արդարադատության նախարարություն	84
7.	Երևանի թաղապետարաններ	81
8.	ՀՀ պաշտպանության նախարարություն	62
9.	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	45
10.	Դատախազություն	35
11.	Մարզպետարաններ	24
12.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն /ենթակառուցվածքներ/	22
13.	Քաղաքապետարաններ (բացի Երևանից)	21
14.	Հանրային հեռուստաընկերության խորհրուրդ	17
15.	Գյուղապետարաններ	17
16.	ՀՀ ԱԺ	16
17.	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	12
18.	ՀՀ առողջապահության նախարարություն	12

Գրաֆիկ 5. Գրավոր դիմում-բողոքներն ըստ դիմած անձանց 2009թ.



1 Ոստիկանություն [420]
2 Երևանի քաղաքապետարան [301]
3 ՀՀ կրթության և գիտության նախարարություն նախարարություն [233]
4 Դատարաններ [138]
5 ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն [118]
6 ՀՀ արդարադատության նախարարություն [84]
7 Երևանի թաղապետարաններ [81]
8 ՀՀ պաշտպանության նախարարություն [62]
9 ՀՀ ազգային անվտանգության ծառայություն [45]
10 Դատախազություն [35]
11 Մարզպետարաններ [24]
12 ՀՀ տարածքային կառավարման նախարարություն /ենթակառուցվածքներ/ [22]
13 Քաղաքապետարաններ (բացի Երևանից) [21]
14 Հանրային հեռուստաընկերության խորհուրդ [17]
15 Գյուղապետարաններ [17
16 ՀՀ ԱԺ [16]
17 ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե [12]
18 ՀՀ առողջապահության նախարարություն [12]

5

1.1.2. Խորհրդատվություն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղղություններից է քաղաքացիներին խորհրդատվություն տրամադրելը: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք) Պաշտպանի գործունեության ոլորտում տարբերակում է խորհրդատվության երկու տեսակ՝ պարտադիր և Պաշտպանի նախաձեռնությամբ իրականացվող:[2]

Պաշտպանը 2009թ.-ի ընթացքում 563 դեպքերում տրամադրել է պարտադիր խորհրդատվություն, որոնք իրականացվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հետևյալ դեպքերում և ձևերով.

1. դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունների ներկայացում (Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ),

2. բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս դիմողին այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգի պարզաբանում (Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս):

2009թ. ընթացքում Պաշտպանն իր նախաձեռնությամբ քաղաքացիներին խորհրդատվություն է տրամադրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ընդունելութունների ժամանակ, հեռախոսով, աշխատանքային գործուղումների ժամանակ: Այդպիսիք իրականացվել են նաև Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կողմից:

2009թ.-ին հիմնականում պահպանվել է հարցերի նույն շրջանակը, որոնցով Պաշտպանը խորհրդատվություն էր տրամադրել նախորդ տարիներին:

2009թ. ընթացքում Պաշտպանի կողմից իրականացված խորհրդատվական գործունեությունը, ըստ դրանցում արծարծված հարցերի բնույթի և ոլորտների, կարելի է դասակարգել հետևյալ խմբերի:

Առաջին խումբը կազմում են քաղաքացիական և քաղաքական իրավունքների խախտմանը վերաբերող դիմումները: Այդ կապակցությամբ տրամադրված խորհրդատվությունները հիմնականում առնչվել են խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի դրսևորումներին, ազատության և անձեռնմխելիության իրավունքի ոտնահարման, կամայական ձերբակալման և կալանավորման դեպքերին, կալանավորված անձանց փաստաբան չտրամադրելու հարցերին, ինչպես նաև՝ քաղաքացիություն ձեռք բերելու, անձնագիր ստանալու հարցերին:

[2] Պարտադիր և Պաշտպանի նախաձեռնությամբ իրականացվող խորհրդատվության դեպքերի և եղանակների իրավական վերլուծությունը առավել հանգամանորեն ներկայացված է «Մարդու իրավունքների պաշտպանի 2006թ. տարեկան զեկույցում» (էջեր 17-18):

Կալանավորված և դատապարտված անձանցից ստացվել են նաև բողոքներ, իրենց արդար դատաքննության իրավունքի խախտման վերաբերյալ:

Երկրորդ խումբը կազմում են սոցիալ-տնտեսական իրավունքների խախտմանը վերաբերող դիմումները: Այս կապակցությամբ տրամադրված խորհրդատվությունների շարքում գերակշռել են նպաստների, փախստականների բնակարանային հարցերի, հաշմանդամների իրավունքների, ԽՍՀՄ խնայբանկերում քաղաքացիների կողմից ներդրված ավանդների փոխհատուցման գործընթացի, սեփականության իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներով տրված պարզաբանումները:

Քաղաքացիներին խորհրդատվություն է տրամադրվել նաև կենսաթոշակի տեսակներին, մասնակի կենսաթոշակի նշանակման և տրամադրման առանձնահատկություններին, լիազորագրով կենսաթոշակ ստանալու իրավունքի իրականացմանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Պաշտպանի կողմից քաղաքացիներին տրամադրված խորհրդատվությունների շարքում առանձնանում են հաշմանդամների խնդիրներին առնչվող, այդ թվում՝ հաշմանդամության խմբի փոփոխմանը, հաշմանդամներին տրամադրվող արտոնություններին վերաբերող հարցերը:

Քաղաքացիների սեփականության իրավունքի խախտումների վերաբերյալ 2009թ. Պաշտպանի աշխատակազմը ստացել է ավելի քան 56 դիմում-բողոք: Այս հանգամանքը ևս վկայում է այն մասին, որ շարունակվում են անտեսվել այն մտահոգությունները, որոնք ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն արտահայտել է իր նախորդ զեկույցներում:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների կապակցությամբ խորհրդատվություն է տրամադրվել նաև ՀՀ հողային օրենսգրքի մի շարք դրույթների վերաբերյալ: Դրանք առնչվում են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու, այդպիսի հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու, ինչպես նաև նշված հողամասերից ՀՀ կառավարության կողմից սահմանված առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքերին: Պաշտպանին հասցեագրված մի շարք դիմումների կապակցությամբ ներկայացվել են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ սերվիտուտին վերաբերող դրույթները:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում առաջ են քաշվել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և նրա ստորաբաժանումների կողմից կատարված գործողությունների բողոքարկման ընթացակարգի հետ կապված հարցեր: Այսպիսի դեպքերում Պաշտպանի որոշմամբ ներկայացվել են ոլորտի իրավական կարգավորման

մասին տեղեկատվություն, ինչպես նաև տվյալ մարմնի գործողությունների (անգործության) բողոքարկման կարգը:

Ինչպես անցյալ տարի, այս տարի ևս ԽՍՀՄ խնայբանկում ներդրված ավանդների փոխհատուցման խնդիրը շարունակում է արդիական մնալ: Այդ մասին են վկայում տվյալ հարցի կապակցությամբ Պաշտպանին հասցեագրվող դիմում-բողոքները, որոնցով քաղաքացիները խնդրել են պարզաբանել, թե ի՞նչ կարգով է կատարվելու իրենց ներդրած ավանդների փոխհատուցումը:

Փախստականների բնակարանային հարցերը ևս շարունակում են ուշադրության կենտրոնում մնալ: Հարկ է նշել, սակայն, որ որոշ դեպքերում փախստական ընտանիքները շարունակում են իրենց բնակարանային պայմանների բարելավման հավակնորդ համարվել՝ առանց հաշվի առնելու ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափանիշներն ու չափորոշիչները:

Երրորդ խումբը կազմում են քրեական դատավարության ոլորտում անձի իրավունքների ապահովման վերաբերյալ խորհրդատվությունները, որոնք, ըստ իրենց բնույթի, կարելի է դասակարգել երեք ենթախմբի:

Առաջին ենթախմբում ներառվում են այն դեպքերը, որոնցով դիմումատուներին պարզաբանվել են իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները՝ կապված հանցագործության մասին հաղորդման առնչությամբ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդումը դադարեցնելու հետ:

Երկրորդ ենթախումբն են կազմում խորհրդատվություն տրամադրելու այն դեպքերը, որոնք կապված են եղել քրեական գործերի մինչդատական վարույթի ընթացքում ինչպես քրեական հետապնդման մարմինների, այնպես էլ դատարանի կողմից (խոսքը վերաբերում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը) անձի իրավունքների և ազատությունների խախտումներին:

Երրորդ ենթախումբը կազմող դեպքերով խորհրդատվություններ են տրամադրվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծված անկախ հանձնաժողովի գործունեության առնչությամբ:

Չորրորդ խումբը կազմում են զինծառայողների իրավունքներին և զինծառայության ոլորտին վերաբերող դիմումները: Այդ կապակցությամբ դիմումատուներին ներկայացվել են ՀՀ զինված ուժերում ծառայությանն առնչվող օրենսդրությանը, զինկոմիսարիատների գործողությունների (անգործության), զինծառայողների ու նրանց ընտանիքի անդամների իրավունքներին վերաբերող հարցերը: Խորհրդատվություններ են տրամադրվել նաև

արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների զինվորական հաշվառման կապակցությամբ իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցերի շուրջ:

Հինգերորդ խմբում ներառվել են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների միջազգային-իրավական պաշտպանության եղանակների վերաբերյալ տրված պարզաբանումները:

Շատ դեպքերում քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել ՀՀ դատարանների կայացրած վճիռներից, դատավճիռներից և որոշումներից՝ համարելով, որ դրանցով խախտվում են իրենց իրավունքները: Նման դեպքերում Պաշտպանի որոշմամբ նրանց ներկայացվել է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումը սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան: Միաժամանակ քաղաքացիներին տեղեկացվել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված վերջնական որոշման հետ համաձայն չլինելու դեպքում նրանք իրավունք ունեն վերջնական դատական ակտի հրապարակման պահից վեցամսյա ժամկետում դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Անհրաժեշտության դեպքում դիմումատուներին հանգամանորեն ներկայացվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու պայմաններն ու կարգը:

1.1.3. Ընդունելություն

Բնակչության հետ Պաշտպանի անմիջական շփումն ապահովելու և դիմումներին հնարավորինս արագ ու արդյունավետ արձագանքելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2009թ. ընթացքում նույնպես հատուկ ուշադրություն է հատկացվել քաղաքացիների ընդունելության կազմակերպմանն ու անցկացմանը: Հաշվետու ժամանակահատվածում իր աշխատակազմում Պաշտպանն ընդունել է 110 քաղաքացիների: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություններ են կազմակերպվել Պաշտպանի՝ ՀՀ մարզեր կատարած այցերի ընթացքում, որոնց մասին ազգաբնակչությունը նախօրոք տեղեկացվել է: Ընդունելության ընթացքում՝

– ընդունվել են գրավոր դիմումներ, եթե այցելուների կողմից առաջադրված հարցերը պահանջել են լրացուցիչ ուսումնասիրություններ կամ ստուգումներ:

– տրամադրվել է խորհրդատվություն:

2009թ.-ին աշխատանքներ են տարվել խախտված իրավունքների դեպքերին առավել արագ տեղեկանալու և արդյունավետ արձագանքելու ուղղությամբ: Այս առումով լայնորեն օգտագործվել են նաև ինտերնետային ցանցի հնարավորությունները:

1.1.4. Այցելություններ, արագ արձագանքում

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և/ կամ նրա ներկայացուցիչների կողմից 2009 թվականին կատարված բազմաթիվ այցելությունները հանդիսացել են հանրային մարմինների (պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց) գործունեության վերահսկողության արդյունավետ միջոցներից: Այցելություններն իրականացվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ կոնկրետ բողոքի հիման վրա կամ Պաշտպանի նախաձեռնությամբ: Երկու դեպքերում էլ այցելությունների արդյունավետությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ դրանք իրականացվել են առանց գործով շահագրգիռ անձանց նախապես տեղեկացնելու, ինչի շնորհիվ հնարավոր է եղել պարզել օբյեկտիվ իրավիճակը, հայտնաբերել իրավունքի խախտման դեպքեր կամ հավաստիանալ, որ ստացված տեղեկատվությունը իրականությանը չի համապատասխանում:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահման վայր այցելությունների ընթացքում կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ

անձինք ձերբակալվելուց հետո քսան և ավելի ժամ, որոշ դեպքերում՝ նույնիսկ երկու օր, պահվում են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարբեր բաժիններում, որից հետո միայն տեղափոխվում են ձերբակալված անձանց պահելու վայր: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133 հոդվածի համաձայն. «Ձերբակալված անձինք պահվում են ձերբակալվածներին պահելու վայրերում»:

ՀՀ ոստիկանության մի շարք մարզային վարչությունների բաժիններում կատարված ուսումնասիրությամբ էլ պարզվել է, որ հաճախակի են դեպքերը, երբ կալանավորված անձինք 3 օրվանից ավելի են պահվում ձերբակալվածներին պահելու վայրերում: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137 հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով»:

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ ոստիկանության համակարգի պաշտոնատար անձանց կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ինչպես նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների պահանջները:

Այդ կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պաշտոնական գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանության պետին: Ի պատասխան՝ Պաշտպանին է ուղարկվել «ՀՀ ոստիկանության մարմիններ բերված (ձերբակալված) անձանց իրավունքների պահպանության և պաշտպանության նկատմամբ գերատեսչական հսկողությունն ուժեղացնելու մասին» ՀՀ ոստիկանության պետի թիվ 2625-Ա հրամանը, որով հանձնարարվել է բոլոր ստորաբաժանումների պետերին խստորեն պահպանել ձերբակալված անձանց օրենքով սահմանված իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիքները սահմանող ՀՀ օենսդրության պահանջները: Հրամանի պահանջների կատարման պատասխանատվությունը դրվել է ստորաբաժանումների պետերի վրա:

Հարկ է նկատել, որ վերը նշված հրամանի ընդունումից հետո, Պաշտպանի աշխատակազմի կողմից կատարվող այցելություններով արձանագրվել է իրավիճակի փոփոխություն և եզակի են դարձել նախկինում համատարած բնույթ կրող նման իրավախախտման դեպքերը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրականացված ուսումնասիրություններով պարզվել է, որ մի շարք ՔԿՀ-ում առկա է գերբնակեցման խնդիր

(նաև օբյեկտիվ պատճառներով), որն իր մեջ պարունակում է կոռուպցիոն ռիսկեր՝ կապված կալանավորին ազատ խուց տեղափոխելու հետ: Մեծ թվով ՔԿՀ-ներ դեռևս անբավարար վիճակում են: Նշված խնդիրների կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարը 14.10.2009թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրով նախատեսվում է որոշ քրեակատարողական հիմնարկների փոխարեն նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական հիմնարկների կառուցում և անբավարար շենքային պայմաններ ունեցող քրեակատարողական հիմնարկների գործունեության դադարեցում: Սակայն նամակում այդ գործողությունների իրականացման համար որևէ կոնկրետ ժամանակահատված նշված չէ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մշտապես ուշադրության է արժանացրել երեխաների իրավունքների պաշտպանությանը՝ մի շարք միջոցառումների թվում նաև պարբերաբար այցելություններ կատարելով մանկատներ, գիշերօթիկ և երեխայի խնամքի ու դաստիարակության տարբեր հաստատություններ: Նպատակը դրանցում երեխաների իրավունքների պաշտպանության վիճակին ծանոթանալն է, ինչպես նաև դրանցում առկա խնդիրները վերհանելն ու պատկան մարմինների լուծմանը ներկայացնելը:[3]

ՀՀ մարզեր կատարած բոլոր այցելությունների ժամանակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են նաև մարզում տեղակայված ՀՀ ՊՆ զինվորական մասեր ու նրանց ստորաբաժանումներ, ծանոթացել ծառայություն անցնող անձանց պահման, կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմաններին, իրազեկել նրանց իրենց իրավունքների մասին, ինչպես նաև իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել զինծառայողներին հետաքրքրող հարցերի վերաբերյալ:[4]

Ինչպես նախորդ տարիներին՝ 2009 թվականին նույնպես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են մեծաթիվ գրավոր և բանավոր դիմում-բողոքներ, որոնցում բարձրացրած հարցերի լուծման արդյունավետ միջոցներից է հանդիսացել արագ արձագանքումը: Բազմաթիվ անգամ քաղաքացիները իրենց իրավունքների կամ ազատությունների պաշտպանության խնդրանքով Պաշտպանին են դիմել ոչ աշխատանքային օրերին, ինչպես նաև՝ գիշերային ժամերին: Քաղաքացիների կողմից Պաշպանին հասցեագրված ցանկացած գրավոր կամ հեռախոսազանգի միջոցով ստացված բանավոր բողոքների դեպքերում՝ Պաշտպանի անմիջական ղեկավարությամբ, աշխատակազմի աշխատակիցներից ձևավորվել են արագ արձագանքման խմբեր՝

[3] Այդ մասին մանրամասն տես սույն զեկույցի 4.2. պարագրաֆում, ինչպես նաև www.ombuds.am կայքէջում:
[4] Այդ մասին մանրամասն տես սույն զեկույցի 4.1. բաժնում:

ոստիկանության բաժանմունքներում ձերբակալված անձանց պահման, զանգվածային միջոցառումների անցկացման վայրեր կամ քրեակատարողական հիմնարկներ և զորամասեր այցելելու համար:

Գրեթե բոլոր զանգվածային կամ ոչ զանգվածային միջոցառումներին՝ հանրահավաքներին, երթերին և ցույցերին, անկախ դրանց անցկացման ժամից, Պաշտպանի ներկայացուցիչները ներկա են գտնվել:

Ազատ տեղաշարժվելու իրավունքի հնարավոր սահմանափակումների մասին քաղաքացիների բազմաթիվ ահազանգերի հիման վրա 2009թ. մարտի 1-ին և 2009թ. մայիսի 15-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ կատարվել են Երևան մտնող մայրուղիների դիտարկումներ:

Կատարված դիտարկումների ամբողջ ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման որևէ փաստ չի հայտնաբերվել, սակայն արձանագրվել է, որ մի շարք քաղաքներից դեպի Երևան մեկնող տրանսպորտի համար նախատեսված կայանատեղերում վաղ առավոտից, բացի տաքսի մեքենաներից, որևէ այլ տրանսպորտային միջոցներ չեն կայանել:[5]

2009 թվականին կայացած բազմաթիվ զանգվածային կամ ոչ զանգվածային միջոցառումների՝ հանրահավաքների, երթերի և ցույցերի ժամանակ Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբի կողմից կատարված դիտարկումներով արձանագրվել է, որ ՀՀ ոստիկանության աշխատակիցների գործողությունները հիմնականում բխել են «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի դրույթներից: Սակայն եղել են նաև դեպքեր, երբ հրապարակային միջոցառման անցկացումը ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից արգելվել է վերը նշված օրենքի 14-րդ հոդվածի պահանջների խախտմամբ: Այդ կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել ՀՀ ոստիկանությանն ուղղված հրապարակային հայտարարությամբ՝ առաջարկելով ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք նվազագույն միջամտություն են նախատեսում քաղաքացիների հավաքների ազատության իրավունքի իրականացմանը, ապահովել համապատասխան հասարակական նշանակության

[5] Այդ մասին տես նաև սույն զեկույցի 3.16. պարագրաֆում:

օբյեկտների ազատ ելումուտի համար անհրաժեշտ գոտին՝ չխոչընդոտելով քաղաքացիների խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի իրականացմանը:[6]

Բազմաթիվ են եղել քաղաքացիների կամ նրանց շահերը ներկայացնող փաստաբանների կողմից բողոքներն այն մասին, որ ՀՀ ոստիկանության տարբեր բաժինների աշխատակիցների կողմից գիշերային ժամերին անձինք տարվում և ապօրինի պահվում են բաժիններում, արգելվում է փաստաբանների հանդիպումը իրենց պաշտպանյալների հետ: Բոլոր այս դեպքերում ՀՀ ոստիկանության աշխատակիցները Պաշտպանի աշխատակազմի աշխատակցի հետ հեռախոսազրույցի ժամանակ հայտնել են, որ քաղաքացիների հայտնած այդ տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, սակայն այնուհետև նույն քաղաքացիները զանգահարել և հայտնել են, որ ոստիկանության աշխատակցի և Պաշտպանի աշխատակազմի աշխատակցի հեռախոսազրույցից հետո վերականգնվել են իրենց խախտված իրավունքները:

2009 թ. հաճախակիացել են նաև իրավապահ մարմինների աշխատակիցների՝ իբր ապօրինի գործողությունների վերաբերյալ քաղաքացիների կողմից Պաշտպանի աշխատակազմին իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հաղորդելու դեպքերը: Նման դեպքերի արդյունքում ոչ արդյունավետ են օգտագործվում Պաշտպանի աշխատակազմի նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսները, որոնք անսպառ չեն:

Բազմաթիվ են եղել նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գտնվող կալանավորված կամ դատապարտված անձանց կողմից՝ որպես իրենց իրավունքների պաշտպանության միջոց, հացադուլ հայտարարելու դեպքերը: Դրանց վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում տեղեկության ստացման բոլոր դեպքերում արագ արձագանքման խումբն այցելել է քրեակատարողական հիմնարկ և զրուցել հացադուլ հայտարարած անձանց հետ: Բոլոր այցելությունների ժամանակ արձանագրվել է, որ հացադուլ հայտարարած անձինք գտնվում են բժշկի մշտական հսկողության տակ և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի դեմ որևէ բողոք չունեն, իսկ հացադուլ հայտարարելու պատճառ է հանդիսացել իրենց անհիմն մեղադրանք առաջադրելը և անհիմն դատապարտելը:

[6] Տես՝ www.ombuds.am.

1.2. Դրական արդյունքներով ավարտված գործեր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, ում որոշումները պարտադիր բնույթ չեն կրում, չի կարող հանդես գալ որպես քաղաքացիների իրավունքների պաշտպանության մյուս հաստատություններին փոխարինող կառուցակարգ: Պաշտպանի որոշումները չեն դադարեցնում հանրային մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի գործողությունը:

Պաշտպանի գործունեության արդյունավետության հիմնական ցուցանիշները հենց մարդու և քաղաքացու իրավունքների վերականգնման փաստերն են:

Խնդիրն ավելի է բարդանում այն առումով, որ Պաշտպանը պետք է վերականգնի այն մարմինների կողմից մարդկանց խախտված իրավունքները, որոնք իսկ թույլ են տվել այդ խախտումները: Ուստի, այդ գործընթացում հաճախ Պաշտպանի միջամտությունը անհրաժեշտ, սակայն բավարար չէ վերջնական արդյունքի հասնելու համար, քանի որ խախտման հայտնաբերման մասին Պաշտպանի որոշումները պետք է նաև ընդունվեն և ի կատար ածվեն հասցեատեր պաշտոնատար անձանց կողմից: Մարդու խախտված իրավունքների լիարժեք վերականգնումը մեծապես կախված է նաև նրանից, թե խախտման վերաբերյալ Պաշտպանի խորհրդատվական բնույթ ունեցող որոշումները որքանո՞վ են կատարվում հասցեատեր պաշտոնյաների կողմից, որքանո՞վ են նրանք հավատարիմ մնում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված կարևորագույն սկզբունքներին. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» /3-րդ հոդվ./, «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով» /5-րդ հոդվ./:

Ստորև ներկայացվում են Պաշտպանի միջամտության արդյունքում դրական լուծում ստացած գործերից մի քանիսը.

Օրինակ 1.

Քաղաքացի Ա.Ա.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ կորցրել է անձնագիրը: Հայտնել է նաև, որ ՀՀ քաղաքացու նոր անձնագիր ստանալու խնդրով դիմել է Ոստիկանության անձնագրային համապատասխան բաժին, սակայն մերժվել է, քանի որ չի ներկայացրել այն բնակարանի սեփականության իրավունքի վկայականը, որտեղ ինքը հաշվառված է: Նշել է նաև, որ հաշվառված է քրոջ ամուսնու

բնակարանում, ով էլ հրաժարվում է իրեն տրամադրել բնակարանի սեփականության իրավունքի վկայականը:

Դիմումատուն միաժամանակ հայտնել է, որ առկա է Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայանքների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը, որով դատարանը մերժել է քրոջ ամուսնու հայցը՝ իրեն հաշվառումից դուրս հանելու պահանջի մասին:

Ի պատասխան Պաշտպանի հարցմանը, թե ինչու քաղաքացուն անձնագիր չի տրամադրվել (այն դեպքում, երբ վերջինս ութ ամիս շարունակ դիմել է ՀՀ ոստիկանության ԱՎ Մալաթիայի անձնագրային բաժանմունք, սակայն պատասխան չի ստացել) ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետն իր գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքացու անձնագրի կորստյան կապակցությամբ կազմվել է կորստյան գործ: 08.09.2009թ. ՀՀ ոստիկանության ԱՎ վարչության Մալաթիայի անձնագրային բաժանմունքի կողմից քաղաքացի Ա. Ա.ին հանձնվել է ՀՀ քաղաքացու AK սերիայի թիվ 0226353 անձնագիրը:

Օրինակ 2.

Քաղաքացի Ա. Ե.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ հանդիսանում է «Եհովայի վկա» կրոնական կազմակերպության անդամ և այլ-ընտրանքային ծառայությունից հրաժարվելու պատճառով ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 15.01.2007թ. դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քր. օր.-ի 327-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 2 տարի ժամկետով:

Դիմումատուն բողոքում է, որ ներկայումս զինկոմիասարիատն իրեն պարտադրում է զորակոչվել բանակ և զինկոմիսարիատ ներկայանալու համար ծանուցագիր է ստացել, այնինչ, անձը դատապարտվելուց հետո չպետք է զորակոչվի բանակ:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ զինվորական կոմիսար, գեներալ-մայոր Ս. Չալյանը հայտնել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի դատավճռով պատժի դատապարտված (անկախ այն կրելու կամ չկրելու հանգամանքից) անձինք երկրորդ անգամ այդ հոդվածով նախատեսված հանցակազմի (պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափում) սուբյեկտ չեն կարող համարվել, որի պատճառով փաստացի հնարավոր չէ պարտադրել անձին զորակոչվելու պարտադիր զինվորական (կամ այլընտրանքային) ծառայության, քանի որ դրանից կրկին անգամ հրաժարվելու դեպքում անձը այլևս չի կարող ենթարկվել քրեական

պատասխանատվության: Վերոգրյալի հիման վրա Ա. Ե.-ն սահմանված կարգով հաշվառվել է պահեստազորում:

Օրինակ 3.

ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Ա. Վ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իր վստահորդը, ով հանդիսանում է ԱՄԷ քաղաքացի, ս\թ սեպտեմբերի 1-ին ժամանել է Հայաստան: Մաքսային սահմանը հատելիս վերջինս հայտարարագրել է, որ հանրապետություն է ներմուծում 200.000 ԱՄՆ դոլար: Մաքսային ծառայության աշխատակիցը նրան բացատրել է, որ այդ գումարը չծախսելու դեպքում կարող է ետ տանել ԱՄԷ: Ս\թ սեպտեմբերի 15-ին ԱՄԷ վերադառնալիս ԱՄԷ քաղաքացին հայտնել է, որ իր ճամպրուկում ունի 120.000 ԱՄՆ դոլար: Մաքսային ծառայության աշխատակիցն արգելել է անցնել ՀՀ սահմանը, վերցրել է նրա անձնագիրը, 120.000 ԱՄՆ դոլարը և կազմել մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, որի բովանդակությունը իր վստահորդին պատշաճ չի բացատրվել:

Դիմումատուն միաժամանակ հայտնել է, որ ս\թ սեպտեմբերի 15-ի առավոտյան ժամը 07-ից մինչև երեկոյան ժամը 17:00-ը իր վստահորդը պահվել է Արարատյան մաքսատանը, զրկվել զանգահարելու, թարգմանչի և փաստաբանական ծառայություններից օգտվելու իրավունքներից:

Ա. Վ.-ի դիմումի կապակցությամբ Պաշտպանը գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահին, ով թիվ 24911/13-2 գրությամբ հայտնել է, որ ԱՄԷ քաղաքացու նկատմամբ 29.09.2009թ. կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին: Նրան վերադարձվել է ԱՄԷ քաղաքացու անձնագիրը և 120.000 ԱՄՆ դոլար կանխիկ գումարը:

Օրինակ 4.

Քաղաքացի Ռ. Բ.-ն Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իր ամուսինը՝ Շ. Հ.-Ն Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ ս/թ մարտի 17-ից տեղափոխվել է ՀՀ առողջապահության նախարարության «Նուբարաշեն» կլինիկա:

Դիմումատուն խնդրել է Պաշտպանի միջնորդությունը, որպեսզի կարողանա տեսակցել իր ամուսնու հետ: Հետագայում Ռ. Բ.-ն լրացուցիչ դիմումով հայտնել է, որ նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանի միջամտությունից հետո հարցին տրվել է դրական լուծում և սույն թվականի ապրիլի 10-ին ինքը տեսակցություն է ունեցել իր ամուսնու՝ Շ. Հ.-ի հետ:

Օրինակ 5.

Քաղաքացի Վ. Ս.-ն Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իր որդին՝ Հ. Ս.-ն, ծնված 1991թ., 2004 թ. մարտի 31-ին որդեգրվել է իր հորաքրոջ կողմից: Դիմումատուն հայտնել է, որ Հ. Ս.-ին, չնայած որ նա միայնակ, երկրորդ կարգի անժամկետ հաշմանդամ ծնողի զավակ է, զորակոչում են բանակ:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանի գրությանն ի պատասխան ՀՀ զինվորական կոմիսար, գեներալ-մայոր Ս. Չալյանը հայտնել է, որ հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզային զորակոչային հանձնաժողովի որոշումն ու հանրապետական զորակոչային հանձնաժողովի եզրակացությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարի 02.07.2009թ. N723 հրամանով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի հիմքով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից Հ. Ս.-ին տրվել է տարկետում:

Օրինակ 6.

Քաղաքացի Հ. Խ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ կատարողական թերթի համաձայն Խ. Ս.-ից հօգուտ իրենց անչափահաս երեխայի, պետք է բռնագանձվեր ալիմենտ՝ կայուն դրամական գումարով՝ ամսական 15.000 ՀՀ դրամի չափով, ինչը մինչ այսօր չի վճարվել:

Բողոքի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը հայտնել է, որ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության ալիմենտի բռնագանձման բաժնում հարուցվել է կատարողական վարույթ: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ պարտապան Խ. Ս.-ն կատարողական թերթում նշված հասցեում չի բնակվում, ուստի, պարտապանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և կատարողական վարույթը կասեցվել է: Միջոցներ են ձեռնարկվել Խ. Ս.-ի և նրա գույքի հայտնաբերման ուղղությամբ:

Քաղաքացի Հ. Խ.-ն ի լրումն դիմումով հայտնել է, որ Խ. Ս.-ն տվյալ պահին ժամանակավորապես բնակվում է իր մոր տանը՝ նշելով հասցեն: Այս տեղեկատվությունը Պաշտպանի կողմից փոխանցվել է ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին, ով Եվ 1155 գրությամբ հայտնել է, որ դիմումատուի նշած հասցեում փաստացի բնակվող Խ. Ս.-ն ներկայացել է ԴԱՀԿ ծառայություն, պարտավորվել է մարել կուտակված պարտքերը և կանոնավոր վճարել հետագա ալիմենտային գումարները:

Օրինակ 7.

Քաղաքացի Գ. Գ.-ն Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումում հայտնել է, որ իրեն հատկացված հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցում չի իրականացվում՝ այն պատճառաբանությամբ, որ նույն հողամասի վերաբերյալ առկա են տարբեր ժամանակներում միևնույն մարմնի կողմից տրված երկու հակասական իրավահաստատող փաստաթղթեր:

Բողոքի կապակցությամբ Պաշտպանը դիմել է ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի Աշտարակի տարածքային ստորաբաժանման ղեկավարին՝ առաջարկելով ղեկավարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթներով: Մասնավորապես, նշված օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Միևնույն մարմնի նոր ընդունած իրավական ակտը չպետք է հակասի նախկինում ընդունված և ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին: Միևնույն մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը, բացառությամբ սույն օրենքի 94-րդ հոդվածի չորրորդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի»: Նույն օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն. «Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը միևնույն մարմնի ընդունած և ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի ուշ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը»:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ առաջարկվել է գրանցել Գ. Գ.-ի սեփականության իրավունքը՝ 16.01.1997թ. տրված հողի սեփականության իրավունքի պետական ակտին համապատասխան:

Պատասխան գրությամբ Պաշտպանը տեղեկացվել է, որ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Աշտարակի տարածքային ստորաբաժանման կողմից գրանցվել է Գ. Գ.-ի սեփականության իրավունքը 0.32 հա հողամասի նկատմամբ:

1.3. Իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն

Ինչպես նախորդ տարիներին այս տարի ևս Պաշտպանի գործունեության մեջ իր առանցքային և կարևոր տեղն է զբաղեցնում իրավական ակտերի նախագծերի փորձաքննությունը:

ՀՀ նախագահի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» 2007թ. հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 42-րդ կետով ամրագրվում է, որ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի:

2009թ. ընթացքում կարծիք ստանալու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղարկվել է 57 օրենքի և Կառավարության 14 որոշման նախագիծ: Այդ նախագծերը Պաշտպանի աշխատակազմում մանրակրկիտ վերլուծվել են, դրանց կապակցությամբ նախաձեռնողների հետ կազմակերպվել են քննարկումներ: Մի շարք նախագծերի վերաբերյալ արվել են հայեցակարգային առաջարկներ: Նախագծերի մի մասի վերաբերյալ Պաշտպանի կողմից առաջարկ է արվել դրանք համապատասխանեցնել օրենսդրական տեխնիկայի կանոններին:

Պաշտպանը մշտապես ընդգծել է, որ իրավական ակտերի նախագծերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին՝ մեջբերելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի իմաստով «օրենք» հասկացության մեկնաբանումը: Ըստ այդմ՝ որևէ իրավական նորմ չի կարող «օրենք» համարվել, եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, եթե այն ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, ինչը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համապատասխանեցնելու իր վարքագիծը: Քաղաքացին պետք է հնարավորություն ունենա, անհրաժեշտության դեպքում օգտվելով խորհրդատվությունից, կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ տվյալ գործողությունից:

Մի շարք իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ սխալ իրավակիրառ պրակտիկայից խուսափելու համար առաջարկվել է դրանք խմբագրել, շարադրել պարզ և հասկանալի:

Բոլոր իրավական ակտերի նախագծերի վերլուծության ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել այն հանգամանքին, որ նախագծերում պարունակող դրույթները անհարկի չսահմանափակեն քաղաքացիների իրավունքները և հակասության մեջ չլինեն հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի հետ:

1.4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտ

Նախորդ տարիների զեկույցներում բազմիցս նշվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և հասարակայնության, այդ թվում՝ ԶԼՄ-ների հետ կապերի զարգացման կարևորության մասին: Այն որակվել է որպես ոչ միայն Պաշտպանի գործունեության թափանցիկության և հրապարակայնության կարևոր նախապայման, այլև մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների զարգացմանը և հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված էական օժանդակություն: Ակնհայտ է, որ այդ գործառույթների արդյունավետ իրականացումը պահանջում է մի շարք կարևոր պայմանների, մասնավորապես՝ տեխնիկական, մարդկային, ֆինանսական ռեսուրսների առկայություն: Չնայած Պաշտպանի աշխատակազմում 2009թ. այդ առումով էական փոփոխություններ չեն կատարվել, սակայն նկատելի են նշված ոլորտում համագործակցության դրական արդյունքները:

Որպես ապացույց կարելի է վկայակոչել Պաշտպանի գործունեության գրեթե ամենօրյա լուսաբանումը՝ տպագիր մամուլի և համացանցի միջոցով, ինչպես նաև 2008թ.-ի համեմատ կրկնակի դարձած հեռուստահաղորդումները՝ Պաշտպանի կամ նրա աշխատակազմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

2009թ.-ի ընթացքում հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված քայլերից են եղել նաև պարբերական մամուլի ասուլիսների կազմակերպումները, որոնք իրենց քանակով և ստացած արձագանքներով զգալիորեն գերազանցում են նախորդ տարիների արդյունքները: 2009թ.-ի ընթացքում Պաշտպանի կողմից կազմակերպված մամուլի ասուլիսներին հնչեցրած տարաբնույթ հիմնախնդիրների վերաբերյալ դիրքորոշումները դարձել են հիմնականում դրական կամ չեզոք բազմաթիվ հրապարակումների և հեռուստալրատվական ռեպորտաժների թեմա: Հաջորդող օրերի ընթացքում Պաշտպանի դիրքորոշումներին արձագանքել են նաև պետական մարմինները և շահագռգիր այլ կազմակերպությունները՝ ծառայողական քննությունների անցկացման, տարբեր պաշտոնյաների հարցազրույց-մեկնաբանությունների և վերլուծական հոդվածների տեսքով: Այս առումով դժվար է գերագնահատել Պաշտպանի կողմից շարունակական բնույթ կրող մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի բոլոր մարտահրավերների և հիմնախնդիրների բարձրացման և հրապարակայնեցման պրակտիկան: Պաշտպանի նման գործելաոճը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:

Այս համատեքստում հատկանշական է նաև այն հանգամանքը, որ դեռևս 2008թ.-ի ապրիլի 30-ին Ադրբեջանական «Զեռկալո» պարբերականը, սուր քննադատության ենթարկելով այդ երկրի Օմբուդսման Էլմիրա Սուլեյմանովայի մամուլի ասուլիսին հնչեցրած ելույթը, համեմատել էր ՀՀ և ԱՀ Օմբուդսմանների գործունեության արդյունավետությունը և նշել, որ Էլմիրա Սուլեյմանովան երբեք չի խոսել և դժվար թե երբևէ խոսի մարդու իրավունքների աղաղակող խախտումների մասին, որոնք առկա են Ադրբեջանում՝ ի տարբերություն իր հայ կամ վրացի գործընկերների / «Զեռկալո» 30.04.08/:

Հասարակայնության հետ կապերի զարգացման և տեղեկատվության տարածման գործընթացի վրա բացասաբար ազդող հանգամանքներից հատկանշական են Պաշտպանի 2008թ.-ի տարեկան զեկույցի ներկայացման գործընթացի որոշ դրվագները:

Այսպես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվ. 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը ՀՀ Նախագահին, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմիններին ներկայացնում է նախորդ տարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաեւ զանգվածային լրատվամիջոցներին եւ համապատասխան հասարակական կազմակերպություններին»:

2009 թ.-ի մարտի 10-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է իր տարեկան զեկույցը ինչպես վերոնշյալ պետական մարմիններին, այնպես էլ՝ ՋԼՄ-ներին: Զեկույցի ներկայացման հետ մեկտեղ Պաշտպանը պատվոգրեր է հանձնել Հայաստանում հանդուրժողականության մշակույթի տարածման գործում առավել զգալի ներդրում ունեցող մեկ քաղաքական գործչի և մեկ լրագրողի: Լրագրության ոլորտում դափնեկիր է դարձել «Առավոտ» օրաթերթի լրագրող Աննա Իսրայելյանը, իսկ քաղաքական գործիչներից պատվոգիր է ստացել «Ժառանգություն» խմբակցության քարտուղար Լարիսա Ալավերդյանը:

Ինչ վերաբերում է Պաշտպանի զեկույցը ՀՀ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում ներկայացնելուն, ապա նշենք, որ Ազգային ժողովը Պաշտպանին հրավիրել է զեկույցի ներկայացման օրենքով սահմանված ժամկետից ութ ամիս անց, ընդ որում՝ զեկույցի ներկայացմանը մասնակցում էին նաև սակավաթիվ պատգամավորներ, ինչին անդրադարձան անգամ նիստին ներկաները, մասնավորապես նշելով. «Դահլիճի այս պատկերը ցույց է տալիս, թե ինչպես են վերաբերվում Հայաստանում մարդու իրավունքների

պաշտպանության և արժևորման հարցերին» /Ռաֆիկ Պետրոսյան, Հայաստանի հանրապետական կուսակցություն/:

Բազմակարծությունը պետք է ապահովվի ոչ միայն տպագիր մամուլի և համացանցի, այլև հեռուստաընկերությունների միջոցով, որի լսարանը գերազանցում է տպագիր և համացանցային մամուլը՝ միասին վերցրած: ՀՀ հանրային հեռուստատեսության կողմից իրականացվող միակողմանի լուսաբանման հարցին անդրադարձ էր կատարվել Պաշտպանի նախորդ զեկույցներում: Ի տարբերություն 2008թ.-ի՝ հաշվետու տարում ինչպես ՀՀ հանրային, այնպես էլ մասնավոր հեռուստատեսությունների կողմից տեղեկատվության լուսաբանման ոլորտում որոշակի դրական տեղաշարժ է նկատվել: 2009թ.-ի ընթացքում Պաշտպանի այցերը ՀՀ մարզեր սկսել են ակտիվ լուսաբանվել նաև մարզային հեռուստաընկերությունների կողմից, ինչն էլ էականորեն նպաստում է մարզերի բնակչության՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում տեղեկացվածության զարգացմանը:

2009թ. ընթացքում Պաշտպանը շարունակել է հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված գործունեությունը՝ ստորև ներկայացվող տարբեր ուղղություններով:

1.4.1. Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվական նյութերի ամենօրյա պատրաստում և տարածում

2009թ.-ի ընթացքում Պաշտպանի գործունեության լուսաբանումը նախորդ տարվա համեմատ առավել ակտիվ բնույթ է կրել: Առանձնակի կարևորություն կամ հասարակական հնչեղություն ունեցող գործերի կապակցությամբ 2009թ.-ի ընթացքում ԶԼՄ-ներին տրամադրվել է տեղեկատվություն՝ Պաշտպանի կատարած հարցումների և դրանց պաշտոնական պատասխանների վերաբերյալ: Պաշտպանի հայտարարությունները, որոնք տեղադրված են նաև կայքէջի «Հայտարարություններ» ենթաբաժնում, 2008թ.-ի համեմատությամբ կրկնապատկվել են: 2009թ-ի ընթացքում Պաշտպանի գրասենյակը տարածել է 100-ից ավելի մամուլի հաղորդագրություններ:

Ինչպես 2008թ.-ին, այնպես էլ 2009թ-ի ընթացքում շարունակվել են լրագրողների նկատմամբ կատարվող ճնշումներն ու ոտնձգությունները: Ըստ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի փորձագետ Մեսրոպ Հարությունյանի՝ 2008 թվականին գրանցվել է լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության 18, 2009 թվականին՝ 11 դեպք, իսկ ԶԼՄ-ների և դրանց աշխատակիցների վրա ճնշումների առումով 2008 թվականին արձանագրվել է 16, 2009 թվականին՝ 14 դեպք: Նշված փաստերի վերաբերյալ տարածվել են

հայտարարություններ, որոնցում Պաշտպանը խստորեն դատապարտել է կատարված դեպքերը և արձանագրել, որ նման բռնությունների չբացահայտման դեպքերը երկրում ստեղծում են վախի և անպատժելիության մթնոլորտ: Նշված և մի շարք այլ հիմնախնդիրներին վերաբերող մամուլի հաղորդագրությունների ու հայտարարությունների զգալի մասը հեռարձակվել է հեռուստատեսության և ռադիոյի տարբեր /հիմնականում լրատվական/ հաղորդաշարերով, ինչպես նաև՝ տպագիր մամուլում:

1.4.2. Հայաստանյան և արտերկրյա ԶԼՄ–ներում տեղ գտած մարդու իրավունքներին վերաբերող նյութերի ամենօրյա մոնիտորինգ

2009թ. ընթացքում տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված գործունեության կարևոր ուղղություններից է եղել նաև հայաստանյան և արտերկրյա մամուլում ու տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներում տեղ գտած տեղեկատվության ուսումնասիրությունը, դրա հավաստիության ստուգումը և վերլուծությունը: Այս գործունեության արդյունավետությունն այն է, որ Պաշտպանին և նրա աշխատակազմին հնարավորություն է տալիս մշտապես իրազեկված լինել ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրյա մամուլում հրապարակված նորություններին, նշանակալից իրադարձություններին և այլ երկրների օմբուդսմանների և միջազգային իրավապաշտպան կազմակերությունների հայտարարություններին:

Այսօր հայաստանյան տպագիր մամուլը արդյունավետ տեղեկատվության աղբյուր է հանդիսանում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջամտության և սեփական նախաձեռնությամբ գործերի ուսումնասիրության համար: 2009թ.-ի ընթացքում մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա երկու տասնյակից ավելի դեպքերում Պաշտպանի սեփական նախաձեռնությամբ գործեր են ընդունվել վարույթ, ինչպես նաև իրականացվել են այցելություններ և տարաբնույթ ուսումնասիրություններ: Մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա կատարված ուսումնասիրություններից կարելի է անդրադառնալ այն դեպքերին, երբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ՝ Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կողմից ՀՀ ԱՆ «Հրազդան», «Երևան-Կենտրոն» և «Սևան» քրեակատարողական հիմնարկներում իրականացված ուսումնասիրություններով պարզվել են մի շարք իրավախախտումներ, որոնց մասին տեղեկացվել են համապատասխան հիմնարկների պետերը, և կազմվել են

համապատասխան տեղեկանքներ, որոնք ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարին: Միաժամանակ նախարարին ուղղված նամակով Պաշտպանը խնդրել է անց կացնել ծառայողական քննություն և միջոցներ ձեռնարկել իրավախախտ պաշտոնատար անձանց օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու և տարաբնույթ խախտումները հետագայում բացառելու ուղղությամբ:

2009թ.-ին մոնիտորինգի հետ մեկտեղ իրականացվել է նաև մարդու իրավունքներին վերաբերող նյութերի արխիվի վարումը:

1.4.3. Մամուլի ասուլիսների, Պաշտպանի և նրա աշխատակազմի հետ հարցազրույցների կազմակերպում

2009թ.-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հրավիրել է մի շարք մամուլի ասուլիսներ, որոնց ընթացքում լրագրողներին տեղեկատվություն է տրամադրվել մարդու իրավունքներին առնչվող հասարակական հնչեղություն ունեցող խնդիրների և դեպքերի վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշման և գործողությունների մասին, ինչպես նաև ներկայացվել են հաշվետու ժամանակահատվածի վիճակագրական տվյալներ, արտահերթ հրապարակային զեկույցներին վերաբերող տեղեկատվական նյութեր:

Մասնավորապես, 2009թ.-ի հոկտեմբերի 10-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է աշխատանքային իրավունքի, մենաշնորհների առկայության և շրջակա միջավայրի պահպանության խնդիրներին: Աշխատանքային իրավունքի խախտումների վերաբերյալ Պաշտպանը նշել է, որ հիմնվելով ստացված ահազանգի վրա՝ երթուղային տաքսիների վարորդների իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով գրասենյակը դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի պետական տեսչություն: Արդյունքում պարզվել է, որ մի շարք վարորդներ աշխատել են օրենքով սահմանված առավելագույն աշխատաժամանակից շատ ավելի, սակայն արտաժամյա աշխատանքի համար նրանց չի վճարվել: Չվճարված ընդհանուր գումարը կազմել է մոտ 144 միլիոն դրամ: Բացի այդ, բացակայել է վարորդների նկատմամբ բժշկական վերահսկողությունը, իսկ կազմակերպություններից մեկում աշխատող 24 վարորդներից միայն չորսն են ունեցել պատշաճ փաստաթղթեր:

Վերը շարադրվածը վկայում է այն մասին, որ խախտվում են ոչ միայն վարորդների աշխատանքային իրավունքները, այլև սպառնալիք է ստեղծվում ուղևորների անվտանգության համար:

Բնապահպնական խնդիրները հիմնականում վերաբերել են զանգվածայն ծառահատումներին, անտառների, ազգային պարկերի ոչ նպատակային օգտագործմանը, շինարարական թափոնների առկայությանն ու հանքարդյունաբերական ոլորտում գործող ընկերությունների նկատմամբ ոչ պատշաճ վերահսկողությանը: Նշված խնդիրները վկայում են Սահմանադրության 33.2 հոդվածի խախտման մասին, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանն ու բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում:

Նշենք, որ Պաշտպանի գրասենյակի կողմից կազմակերպված բոլոր մամուլի ասուլիսները մեծ արձագանքների են արժանացել տարբեր լրատվամիջոցների և պետական մարմինների կողմից:

1.4.4. Մարդու իրավունքների հանրային իրազեկման և բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված գործունեություն

Մարդու իրավունքների հանրային իրազեկման և բնակչության իրավագիտակցության բարձրացման գործունեության կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հասարակության շատ անդամներ ծանոթ չեն իրենց իրավունքներին և հիմնարար ազատություններին, ինչը հանգեցնում է պետական մարմինների կողմից հաճախ թույլ տրվող կամայական գործողությունների և կոռուպցիոն դրսևորումների: Ուստի, Պաշտպանի կարևոր գործառույթներից է հասարակության իրազեկումը՝ մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների մասին:

Մարդու իրավունքների հանրային իրազեկման և բնակչության իրավագիտակցության բարձրացմանը նպաստելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում 2009թ. բացվել է գրադարան, որը պարունակում է շուրջ 1000 անուն գիրք՝ մարդու իրավունքների պաշտպանության, քրեական և միջազգային իրավունքի վերաբերյալ: Բացի այդ, պարբերաբար հրապարակվում է «Մարդու իրավունքների պաշտպանի տեղեկագիրը»:

1.4.5. Պաշտպանի կայքէջի վարում

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքի վարումը շարունակում է մնալ հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված գործունեության կարևոր բաղադրիչ: 2009թ.-ի ընթացքում Պաշտպանի կայքէջը համալրվել է նոր բաժնով և ենթաբաժնով: Կայքէջի «Գրադարան» բաժինը տեղեկացնում է հանրությանը գրադարանում առկա գրքերի և գրադարանից օգտվելու կարգի վերաբերյալ:

Ձևափոխվել է «Այցելություններ» ենթաբաժինը, որտեղ լուսաբանվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և աշխատակազմի այցելությունները:

Կայքէջի «Հրապարակումներ» բաժինը համալրվել է «Տեղեկագրեր» ենթաբաժնով, որը պարունակում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը լուսաբանող «Պաշտպանի Տեղեկագրի» էլեկտրոնային տարբերակը:

1.5. Միջազգային համագործակցություն

Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու տարում նույնպես Մարդու իրավունքների պաշտպանը կարևորել է միջազգային կազմակերպությունների, այլ երկների օմբուդսմանների հաստատությունների և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ կառույցների հետ համագործակցությունը:

2009թ. ընթացքում առավելապես կարևորվել է Եվրոպական Միության, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ, ՄԱԿ-ի և ԱՄՆ ՄԶԳ-ի և նրանց հայաստանյան ներկայացչությունների հետ համագործակցությունը: Միջազգային համագործակցության ոլորտում իրականացված հիմնական աշխատանքները ամփոփ ներկայացված են ստորև՝ ըստ գործընկեր սուբյեկտների:

Միավորված ազգերի կազմակերպություն

Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ)/UNDP.

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը շարունակում է արդյունավետ համագործակցությունը ՄԱԿ-ի տարբեր մարմինների հետ: Դեռևս 2007 թվականից սկսած «Մարդու իրավունքներ պաշտպանի գրասենյակի կարողությունների հզորացում» ՄԱԶԾ-ի ծրագրի շրջանակներում 2009թ. իրականացվել են հետևյալ ծրագրերը:

✓ Գնահատվել է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դիմում-բողոքների մշակման ներկա համակարգը: ՀՀ 6 նախարարությունների կողմից գործածվող «Մալբերի համակարգը» առաջարկվել է Պաշտպանի գրասենյակին, մշակվել և տեղադրվել գրասենյակում: Գործընթացի իրականացման ընթացքում ՄԱԶԾ-ը համագործակցել է Եվրոպական հանձնաժողովի Թվիվինգ ծրագրի փորձագետների հետ:

✓ 2009թ. 2 եռօրյա սեմինար-վերապատրաստում է կազմակերպվել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և 3 ՀԿ-ների ներկայացուցիչների համար «Խոշտանգումների կանխարգելում. ՀՀ ազգային կանխարգելման մեխանիզմի մոնիտորինգային գործունեություն» խորագրով:

✓ Ռաուլ Վոլեմբերգի ինստիտուտի կողմից ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ դասընթացներ են կազմակերպվել Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգի Վիադրինա ամառային դպրոցում (ք. Ֆրանկֆուրտ) Պաշտպանի աշխատակազմի չորս աշխատակցի և ՄԱԶԾ ՄԻՊ ծրագրի օգնականի համար:

✓ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության տեղեկատվական կենտրոնի/գրադարանի հզորացում: Գործընթացի շրջանակներում Ռաուլ Վոլեմբերգի ինստիտուտի գրադարանավարը իրականացրել է եռօրյա ուսուցողական վերապատրաստում՝ ժամանակակից գրադարանավարության վերաբերյալ: Ռաուլ Վոլեմբերգի ինստիտուտի և ՄԱԶԾ ծրագրի աջակցությամբ 2009թ. մարտի 7-ին բացվել է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գրադարանը և համալրվել 132 անուն գրքով:

✓ ՄԱԶԾ աջակցել է ՄԻՊ աշխատանքային այցին Ժնև՝ հանդիպելու ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի հետ: Հանդիպումը նպատակ ուներ մեկ անգամ ևս հաստատել համագործակցությունը ՀՀ ՄԻՊ և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակների միջև:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

2009թ. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը Հայաստանի ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է նախագիծ՝ երեխաների իրավունքներին վերաբերվող ՀՀ օրենսդրության ուսումնասիրության և դրանում առկա թերությունների ու բացթողումների վերհանման վերաբերյալ: Նախագծի

շրջանակներում պատրաստվել է առաջարկությունների փաթեթ, որը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Կատարված վերլուծության արդյունքները հրապարակվել են «Երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ առկա որոշ խնդիրների վերաբերյալ» Պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում, որը տպագրվել է Եվրասիա համագործակցության հիմնադրամի օգնությամբ: Նախագծի շարունակությունը ապահովելու նպատակով ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը կազմակերպել էր խորհրդարանական լսումներ՝ «Երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրությունում առկա խնդիրների վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցի վերաբերյալ:

Եվրոպական միություն

1. Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն (OPCAT)

2008 թվականից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» Կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 6.1. հոդված): Այդ կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը Եվրոպական հանձնաժողովի և Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքների (փաստաթղթերի) օգնությամբ սկսել է «Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի միջոցով՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմ՝ համաձայն ՄԱԿ-ի խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության» եռամյա ծրագիրը: Այս նախագծի նպատակն է բարելավել Ազգային կանխարգելման մեխանիզմի գործունեությունը, ինչպես նաև ապահովել քրեակատարողական հիմնարկների աշխատանքի ավելի բարձր թափանցիկությունը՝ այդ հաստատություններում մարդու իրավունքների վիճակի գնահատման և հրապարակման միջոցով:

2. Թվինինգ/Twinning

2009թ. հոկտեմբերի 26-ին մեկնարկել է Եվրոպական հարևանության քաղաքականության ներքո իրականացվող ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և Ֆրանսիայի/Իսպանիայի Օմբուդսմանների միջև «Աջակցություն ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին» խորագրով Թվինինգ ծրագիրը: Այն հիմնականում նպատակ ունի աջակցել կազմակերպչական և ֆունկցիոնալ առումներով բարձրացնելու ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի գործունեության որակը և առավելագույնս համապատասխանեցնելու Պաշտպանի աշխատակազմի գործունեությունը մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեության միջազգային չափանիշներին: «Թվինինգ» ծրագիրը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող առաջին ծրագիրն է Հայաստանի Հանրապետությունում և նպաստելու է ՀՀ-ում մարդու իրավունքների և օրենքի գերակայության պաշտպանությանն ու խթանմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակ

Շարունակելով համագործակցությունը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը 2009թ. սկսել է նախագիծ «Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի ապահովումը և իրավակիրառ պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում» թեմայով՝ համագործակցելով ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի փորձագետների հետ: Նախագծի նպատակն է վերլուծել առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքին վերաբերող օրենսդրությունը, դրա համապատասխանությունը միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, շրջակա միջավայրի իրավունքի իրականացման պրակտիկայի վերլուծությունը, ինչպես նաև մշակել առաջարկություններ ազգային օրենսդրության կատարելագործման համար:

Անդամակցություն Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ընկերակցությանը

2009թ. սեպտեմբերի 6-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը պաշտոնապես անդամակցել է Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ընկերակցությանը:

Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ընկերակցությունը ստեղծվել է 1998թ. և ունի 56 անդամ: Այն հանդիսանում է Մարդու իրավունքների և օրինական կառավարման ֆրանկոֆոնյան միջազգային կազմակերպության գործընկեր:

Ընկերակցության գործունեությունն ուղղված է օմբուդսմանների հաստատությունների հզորացմանը, վերջիններիս ստեղծմանն այն երկրներում, որտեղ նման հաստատությունները դեռ բացակայում են, ինչպես նաև՝ փորձի փոխանակման աջակցությանը: Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ընկերակցությունը կազմակերպում է իր համագումարները երկու տարին մեկ, որտեղ մասնակցում են շուրջ 50 Օմբուդսման և Հաշտարար՝ աշխարհի 35 երկրներից:

Եվրոպական Օմբուդսմանի Ինստիտուտ

2009թ. հոկտեմբերին Եվրոպական Օմբուդսմանի Ինստիտուտի հերթական ամենամյա ընդլայնված համաժողովի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ընտրվել է Եվրոպական Օմբուդսմանի Ինստիտուտի կառավարման խորհրդի անդամ: 1988 թվականին հիմնադրված այս հեղինակավոր կազմակերպության խնդիրներից են մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գիտական հետազոտությունների անցկացումը, քաղաքացիական ազատությունների պաշտպանությունը, օմբուդսմանների հաստատությունների սատարումն ու գիտական օժանդակումը: Ներկայումս եվրոպական բոլոր երկրների օմբուդսմանները հիշյալ կառույցի անդամներ են: Եվրոպական Օմբուդսմանի Ինստիտուտի կառավարման խորհրդի անդամների ընտրություններին մասնակցել են մոտ 60 երկրների ներկայացուցիչներ:

Աջակցություն ԼՂՀ Օմբուդսմանի հաստատությանը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի շնորհիվ Օմբուդսմանների Եվրոպական Ինստիտուտի գործադիր մարմնի 31.08.10թ. որոշմամբ ԼՂՀ Օմբուդսմանի հաստատությանը շնորհվել է Եվրոպական Օմբուդսմանների Ինստիտուտի լիարժեք /ինստիտուցիոնալ/ անդամի կարգավիճակ: Ընտրությունների ընթացքում հաշվի են առնվում թեկնածուների ներկայացրած տարածաշրջանները, ինչպես նաև իրենց գործունեության բնույթը՝ ազգային, տեղական և տարածաշրջանային մակարդակով:

1.6. Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն

2009թ. ընթացքում Պաշտպանը շարունակել է սերտորեն համագործակցել մշակութային, բարեգործական, հայրենակցական, ազգային փոքրամասնությունների, բնապահպանական, իրավապաշտպան, երեխաների, կանանց, փախստականների, հաշմանդամների և այլ հարցերով զբաղվող բազմաթիվ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Պարբերաբար կազմակերպվող հանդիպումների ընթացքում քննարկվել են հասարակությանը հուզող հրատապ խնդիրները:

Ազգային փոքրամասնությունների համայնքների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպումներում Պաշտպանին ներկայացվել են իրավական հիմնախնդիրներ: Դրանց վերաբերյալ Պաշտպանի կողմից տրվել են պարզաբանումներ՝ ՀՀ Սահմանադրության և ազգային փոքրամասնություններին առնչվող միջազգային փաստաթղթերի սահմանած չափորոշիչների շրջանակում:

Պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմի ներկայացուցիչը հանդիպել է կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ և քննարկել գենդերային խնդիրների հետ կապված հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել այդ հանդիպումները դարձնել պարբերական:

Հայաստանի Հանրապետությունում գրանցված կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներում քննարկվել են դրանց կազմավորումն ու գործունեությունը կարգավորող օրենսդրությանն առնչվող հարցեր:

Պաշտպանը և նրա աշխատակազմի ներկայացուցիչները հասարակական կազմակերպությունների հետ հանդիպել են նաև ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում: Հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված խնդիրները քննարկվել են Շիրակի, Լոռու մարզպետարաններում և Վանաձորի քաղաքապետարանում: ՀԿ-ները դժգոհություններ են արտահայտել ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման վերաբերյալ այն առումով, որ հանրապետության բոլոր մարզերում և համայնքներում առկա ինքնակամ շինությունների օրինականացման համար սահմանվել է միևնույն արժեքը: Իրենց համոզմամբ, քանի որ մարզերում բնակվում են սոցիալապես ավելի ծանր կացության մեջ գտնվող բնակիչներ, հետևաբար, վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգով պետք է ցուցաբերվի տարբերակված մոտեցում:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները դժգոհել են նաև այն հանգամանքից, որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ հնարավորություն է տրվել Երևան քաղաքի բնակիչներին անհատույց սեփականաշնորհել իրենց տները և կից շինությունները, իսկ մարզերում և այլ համայնքներում նման հնարավորություն չի տրվում: Պաշտպանի կողմից նշված օրենքի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ տեղում տրվել են պարզաբանումներ:

ԲԱԺԻՆ 2.
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից որակյալ օրենսդրության առկայությունը կենսական անհրաժեշտություն է, քանզի օրենսդրությունն ինքնին հանդիսանում է մարդու իրավունքների ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկը: Մինչդեռ, օրենսդրական նորմերի հակասությունները, օրենսդրական բացերը և թերությունները, օրենսդրական նորմերի ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալումը բերում են մարդու իրավունքների խախտումներին: Ուստի, ստորև կանդրադառնանք մարդու իրավունքների խախտումներին հանգեցնող օրենսդրական պատճառներին՝ ըստ առանձին իրավունքների:

2.1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

2.1.1. Խոշտանգումների արգելում

Խոշտանգումները դիտվում են որպես ամենադաժան ոտնձգություններից մեկը մարդու արժանապատվության ու անձեռնմխելիության դեմ, որն արմատախիլ անելու համար պետք է ծավալվեն ակտիվ և նպատակաուղղված գործողություններ: Այս պարսավելի և դատապարտելի երևույթը գալիս է դեռևս դարերի խորքից և, ցավոք, պահպանել է իր գոյությունը նաև ներկայումս, ուստիև խոշտանգումների կիրառման դեմ պայքարը գերակա ուղղություն է հանդիսանում թե՛ միջազգային և թե՛ ներպետական մակարդակներում:

Խոշտանգումների արգելման սկզբունքը, հանդիսանալով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկը, իր ամրագրումն է ստացել ինչպես միջազգային հանրաճանաչ իրավական ակտերում (1948թ. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 1966թ. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր», 1950թ. «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա», 1987թ. «Խոշտանգումները և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու մասին» եվրոպական կոնվենցիա, ՄԱԿ-ի 1987թ. «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիա), այնպես էլ ՀՀ տարբեր օրենսդրական ակտերում (ՀՀ Սահմանադրություն, ՀՀ

քրեական դատավարության օրենսգիրք, ՀՀ քրեական օրենսգիրք): Խոշտանգումների չենթարկվելը մարդու այն եզակի իրավունքներից մեկն է, որոնք չեն կարող նույնիսկ ժամանակավորապես սահմանափակվել ոչ մի իրավիճակում, այդ թվում՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Ինչպես նշվել է, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ճանաչվել է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ: Նշենք, որ 2007թ. Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի իրականացման վերաբերյալ Եվրոպական համայնքների հանձնաժողովի՝ Հայաստանին վերաբերող զեկույցում դրական է գնահատվել կամընտիր արձանագրության վավերացումը,[7] իսկ հետագայում նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի գործունեությունը:[8]

Թեև խոշտանգումների կանխարգելման սկզբունքը, ընդհանուր առմամբ, պատշաճ ամրագրումն է ստացել ՀՀ օրենսդրության մեջ, այնուամենայնիվ, որոշ խնդիրներ դեռևս գոյություն ունեն: Սույն թվականի հոկտեմբերին Պաշտպանը դիմել է ՀՀ կառավարություն՝ ՀՀ քրեական օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկությամբ: ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը թելադրված է վերոնշյալ Կոնվենցիայով նախատեսված խոշտանգման հատկանիշների՝ ՀՀ քրեական օրենսգրքում պատշաճ իմպլեմենտացման անհրաժեշտությամբ: Այս կապակցությամբ դեռևս 2000թ. նոյեմբերի 17-ին ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի վերաբերյալ դիտողությունների 37-րդ կետում մտահոգություն է հայտնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում տրված «խոշտանգում» հասկացությունը չի պարունակում Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված խոշտանգման մի շարք հատկանիշներ, և առաջարկ է կատարվել խոշտանգման հանցակազմը համապատասխանեցնել Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված բնորոշմանը[9]: Ավելին, ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի՝ 2007թ. նոյեմբերին Կոնվենցիայի 2-րդ հոդվածի առնչությամբ արված ընդհանուր մեկնաբանության մեջ

[7] Այն ՀՀ ազգային ժողովի կողմից վավերացվել է 2006թ. մայիսի 31-ին, ուժի մեջ է մտել 2006թ. հունիսի 22-ին:
[8] Տես՝ http://ec.europa.eu/world/enp/pdf/progress2008/sec08_392_en.pdf:
[9] Տես՝ Concluding observations of the Committee against Torture. Armenia. 17/11/2000. COMMITTEE AGAINST TORTURE. Twenty-fifth session. 13-24 November 2000.

շեշտվում է, որ մասնակից պետությունները պարտավոր են քրեականացնել խոշտանգման հանցակազմը Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված հատկանիշներով:[10]

ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված «խոշտանգում» եզրույթով հանցակազմը՝ «խոշտանգումը՝ ցանկացած այնպիսի գործողությունը, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքներ», Կոնվենցիայի իմաստով «խոշտանգումից» որակական տարբեր հատկանիշներ է պարունակում: Այն ոչ միայն ամբողջությամբ չի ներառում Կոնվենցիայով սահմանված խոշտանգման տարրերը, այլ նախատեսում է որակապես այլ, «կենցաղային» հանցագործություն: Մասնավորապես, այս հանցակազմը ներառված է մարդու դեմ ուղղված հանցագործություններ բաժնում, այլ ոչ թե պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ բաժնում: ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված «Խոշտանգում» հանցակազմի առկայության համար հատուկ սուբյեկտ չի պահանջվում: Բացակայում է կոնկրետ նպատակ, այն է՝ տուժողից կամ երրորդ անձից տեղեկատվություն կամ ինքնախոստովանություն ստանալը, որոշակի գործողության կատարման համար վախեցնելը կամ պատժելը և այլն: Բացի այդ, ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ Կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունների իրավապահ մարմինները պետք է անհապաղ և անաչառ հետաքննություն իրականացնեն, երբ առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ կիրառվել է խոշտանգում: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված «Խոշտանգում» հանցակազմի վրա տարածում է քրեական գործի հարուցման մասնավոր մեղադրանքի ռեժիմը, որի պայմաններում քրեական գործի հարուցման համար պահանջվում է տուժողի բողոքի առկայություն, իսկ կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու դեպքում գործի վարույթը ենթակա է կարճման:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայով սահմանված «խոշտանգման» առանձին դրսևորում քրեականացված է ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով՝ վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-8 տարի ժամկետով: ՀՀ

[10] Տես՝ Committee against Torture, General comment N2, Implementation of Art. 2 by States parties, http://www2.ohchr.org/english/bodies/cat/docs/CAT.C.GC.2.CRP.1.Rev.4_en.pdf

քրեական օրենսգրքում որպես խոշտանգում քրեականացվել են միայն դատավարության ընթացքում խոշտանգմամբ ցուցմունք, սխալ թարգմանություն կամ ցանկալի եզրակացություն տալուն հարկադրելու դեպքերը՝ դրանով իսկ դուրս թողնելով ընդհանրապես պետական պաշտոնատար անձի կողմից կամ նրա հովանավորությամբ որոշակի նպատակով Կոնվենցիայի իմաստով խոշտանգման կիրառման բազմաթիվ այլ ոլորտներ՝ խոշտանգում հանրահավաքների ժամանակ, քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում և այլն: Սրանք այն ոլորտներն են, որտեղ պետական պաշտոնատար անձի կողմից Կոնվենցիայի 1-ին հոդվածում նշված նպատակով բռնություններ կամ այլ գործողություններ կատարելը ՀՀ քրեական օրենսգրքում պետք է ուղղակիորեն դիտվի որպես խոշտանգում:[11]

Բոլոր այդ դեպքերում պաշտոնատար անձը կենթարկվի քրեական պատասխանատվության պաշտոնական լիազորությունների անցման և/ կամ առողջությանը ծանր վնաս հասցնելու հանցագործությունների համակցությամբ: Տարօրինակ է, բայց՝ փաստ, որ համակցություն 119-րդ հոդվածով սահմանված խոշտանգման հետ չի կարող կիրառվել, քանի որ 309-րդ հոդվածի 2-րդ մասում, որպես պաշտոնական լիազորությունների անցման ծանրացնող հանգամանք, նախատեսված է բռնության կիրառում: Վերջինս ըստ ՀՀ քրեական օրենսգրքի տրամաբանության՝ բացի առողջությանը ծանր վնաս պատճառելուց ներառում է բռնության բոլոր դեպքերը (այդ թվում՝ խոշտանգումը), սահմանում բռնության բոլոր դրսևորումների համար միևնույն սանկցիա, ինչը չի արտացոլում Կոնվենցիայի իմաստով խոշտանգման հանրային վտանգավորությունը: Այս առթիվ հարկ է նշել, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի կապակցությամբ 2007 թվականի ընդհանուր մեկնաբանության մեջ Կոմիտեն նշել է, որ եթե Կոնվենցիայի իմաստով խոշտանգման դեպքում անձը ենթարկվի քրեական պատասխանատվության ոչ թե խոշտանգման համար, այլ, ասենք, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի համար, այլ խոսքով՝ որակապես նվազ ծանրության հանցակազմով, ապա առկա է Կոնվենցիայի խախտում: Իսկ մեր դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ ունենալով բուն խոշտանգման հանցակազմ, վերջինիս տակ ընկնող արարքների դեպքում անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության՝ ծեծի, պաշտոնական լիազորությունների անցման, առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար, ինչը հնարավորություն չի տալիս հասարակական կազմակերպություններին լայն հանրությանը նպատակաուղղված

[11] Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի՝ անգամ քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից բռնության ոչ ամեն մի դրսևորում տեսականորեն կարող է առաջացնել խոշտանգման հանցակազմի կիրառում: Քրեական քաղաքականությունից դուրս են մնացել հենց նույն քննիչի, ոստիկանի կողմից բացատրություն տալուն, հաղորդում ներկայացնելուն, մեղայականով ներկայանալուն հարկադրելու նպատակով խոշտանգելու կամ երրորդ անձից ցուցմունք ստանալու նպատակով պատճառված դաժան ցավը կամ տառապանքը:

վերահսկել Կոնվենցիայի իմաստով խոշտանգումների առնչությամբ քրեական գործերով վարույթները: Հարկ է ընդգծել նաև, որ այս հանցագործության կատարողները կարող են համաներման կամ ներման միջոցով ազատվել քրեական պատասխանատվությունից կամ պատժից, ինչը դեմ է այն հաստատված միտմանը, որ խոշտանգողների նկատմամբ պետք է բացառել որևէ համաներման կամ ներման կիրառում: Այդ մասին նշել է նաև Կոմիտեն իր՝ 2-րդ հոդվածի կապակցությամբ արված ընդհանուր մեկնաբանության մեջ:

ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ մասում խոշտանգումն օգտագործվում է որպես դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից կիրառված հակաօրինական վարքագծի ծանրացնող հանգամանք ուղղված վկային, կասկածյալին, մեղադրյալին կամ տուժողին ցուցմունք, փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, իսկ թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելուն:[12] «Խոշտանգման» կիրառման հետ զուգընթաց քննարկվող հոդվածի նույն մասում սահմանվում է ծաղրուծանակ կամ այլ բռնության կիրառում: Ավելին, նույն հոդվածի 3-րդ մասը որպես էլ ավելի ծանրացնող հանգամանք, սահմանել է. «...նույն արարքները, որոնք առաջացրել են ծանր հետևանքներ»: Մի շարք հարցադրումներ են առաջանում. խոշտանգման, ծաղրուծանակի և այլ բռնության կիրառումը դիտվում է փաստորեն միևնո՞ւյն հարթության վրա, ինչու՞ խոշտանգմամբ ուղեկցված արարքը չի առաջացնում ծանր հետևանքներ կամ որո՞նք են հոդվածի 3-րդ մասով ենթադրված ծանր հետևանքները, որոնք որակական առումով տարբեր են խոշտանգումից: Ուստի, անհրաժեշտ է հստակություն մտցնել ՀՀ քրեական օրենսգրքում «բռնություն», «առուղջությանը ծանր վնաս պատճառել», «ծաղրուծանակ», «խոշտանգում» հասկացությունների կիրառման մեջ, ապահովել դրանց ծանրությանը համարժեք քրեական քաղաքականություն, տարբերակված սանկցիաներ:

ՀՀ քրեական օրենսգրքով քրեականացված չէ խոշտանգման, այսպես կոչված, պասիվ դրևորումը, երբ իրական հիմքեր կան ենթադրելու, որ անձը ենթարկվում է խոշտանգման մեկ այլ անձի կողմից, իսկ պետական պաշտոնյան չի ձեռնարկում խոշտանգումները կանխելու կամ պատշաճ հետաքննություն իրականացնելու ուղղությամբ որևէ միջոց՝ նպատակ հետապնդելով մասնավոր անձանց ազատել քրեական պատասխանատվությունից: Նման դեպքերում Կոմիտեն գտնում է, որ այդ պետական պաշտոնյան պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության՝ որպես կատարող կամ օժանդակող:

[12] Խոշտանգումը օգտագործվում է որպես ծանրացնող հանգամանք արդարադատության դեմ ուղղված հանցագործության համար: ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված արարքը ենթադրում է սպառնալիքի կամ անօրինական այլ գործողությունների կիրառում, բայց ոչ խոշտանգում:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է. ա/ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գլխում սահմանել «Խոշտանգում» հանցակազմ՝ հիմնվելով Կոնվենցիայի և Կոմիտեի կողմից արված ընդհանուր մեկնաբանություններով տրված բովանդակության վրա, բ/ տերմինաբանական խառնաշփոթը բացառելու նպատակով ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված «կենցաղային» հանցագործությունը և դրա առանձին տարրերը միավորել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով սահմանված «ծեծ» հանցակազմի ներքո, գ/ ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «խոշտանգմամբ» բառը և նախատեսել այն նույն հոդվածի 2.1-րդ մասում՝ ապահովելով տարբերակված մոտեցում խոշտանգման և բռնության այլ ձևերի միջև:

Ընդ որում, հաշվի առնելով խոշտանգման հանցակազմի՝ տարբեր երկրների քրեական օրենսգրքերում ամրագրման միջազգային պրակտիկան՝ Պաշտպանն առաջարկել է ՀՀ քրեական օրենսգրքում խոշտանգման հանցակազմի ամրագրման երկու տարբերակ:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելուն, ապա դրանք պայմանավորված են ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններով, մասնավորապես, խոշտանգման զոհերին փոխհատուցում տրամադրելու պետության պարտավորությամբ:[13]

Ընթացիկ տարում Պաշտպանի կողմից ստացվող բողոքները կրկին վկայում են այն մասին, որ օրենքների պահանջները միշտ չէ, որ լիարժեք կերպով կյանքի են կոչվում իրավակիրառ պրակտիկայում: Պաշտպանը ստացել է բազմաթիվ բողոքներ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից դրսևորված դաժան, անմարդկային վերաբերմունքի և խոշտանգումների, անձանց ծեծի ենթարկելու, որպես մեղադրյալ ներգրավված անձանցից բռնությամբ և սպառնալիքի ազդեցությամբ ցուցմունքներ կորզելու վերաբերյալ: Ընդ որում, հաշվետու տարում խոշտանգումների վերաբերյալ դիմում-բողոքների թիվը զգալիորեն աճել է:

Պաշտպանի՝ կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի կարգավիճակով պայմանավորված, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից 2009թ. ապրիլ-հոկտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են պարբերական այցելություններ ՀՀ արդարադատության նախարարության թվով տասը քրեակատարողական հիմնարկներ՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեպքերի բացահայտման և դրանց կանխարգելման նպատակով: Ընդ որում, ուսումնասիրության են ենթարկվել ինչպես կալանավորված անձանց,

[13] Պաշտպանի սույն նախաձեռնությունը ՀՀ արդարադատության նախարարության կողմից դեռևս քննարկման փուլում է:

այնպես էլ դատապարտյալների պահման պայմանները: Կատարված այցելությունների ընթացքում վեր են հանվել քրեակատարողական հիմնարկների գերբնակեցմանը, սանիտարահիգիենիկ վիճակին, կալանավորված անձանց ու դատապարտյալներին տրամադրվող սննդին, բուժսպասարկմանը, արտաքին աշխարհի հետ նրանց կապին առնչվող, ինչպես նաև մի շարք այլ խնդիրներ: Բացահայտվել են նաև քննարկվող ոլորտը կանոնակարգող ՀՀ ներպետական իրավական ակտերում առկա այնպիսի թերություններ, որոնց պատճառով անազատության մեջ գտնվող անձանց իրավունքների ու օրինական շահերի ապահովումը գործնականում դառնում է ավելի խոցելի:

Վերհանված խնդիրները ենթարկվել են ինչպես իրավական, այնպես էլ սոցիոլոգիական և հոգեբանական համալիր հետազոտությունների, որոնց արդյունքների հիման վրա կազմվել է «Անձի իրավունքների և օրինական շահերի ապահովումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում» զեկույցը, որում վերհանված խնդիրները կարելի է դասակարգել երեք հիմնական խմբի.

1. Խնդիրներ, որոնք գործնականում լուծում չեն ստանում նյութատեխնիկական ռեսուրսների բացակայության պատճառով, թեև ունեն օրենսդրական որոշակի կարգավորում (քրեակատարողական հիմնարկների խցերի և պատժախցերի վերանորոգում, հիմնարկներում ջեռուցման համակարգերի ապահովում, գերբնակեցման բացառում, սննդի հարցում բազմազանության ապահովում և այլն): Այստեղ պետք է նշել նաև քրեակատարողական ծառայողների վարձատրության ցածր մակարդակը:

2. Խնդիրներ, որոնք առաջ են գալիս ՀՀ օրենսդրության մեջ առկա բացերի և թերությունների, առանձին հարցերի ոչ լիարժեք իրավական կարգավորման հետևանքով:

3. Խնդիրներ, որոնք ի հայտ են գալիս ազատությունից զրկման հետ կապված հարկադրանքի միջոցների կատարման ընթացքում և պայմանավորված են քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների կողմից իրենց պարտականությունների (ուղղիչ հիմնարկների որոշակի տեսակներին բնորոշ պահանջների խիստ պահպանում, կալանավորվածների ու դատապարտյալների նկատմամբ խտրական մոտեցման բացառում և այլն) ոչ պատշաճ կատարմամբ: [14]

[14] Տես՝ Պաշտպանի՝ «Անձի իրավունքների և օրինական շահերի ապահովումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում» 2009թ. արտահերթ հրապարակային զեկույցը:

2.1.2. Արդար դատաքննության իրավունք

ՀՀ Սահմանադրության՝ 2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխությունները և լրացումները սկիզբ հանդիսացան Հանրապետությունում իրականացվող դատահիրավական բարեփոխումների երկրորդ փուլի համար, որոնց հիմնական նպատակներից է արմատական վերափոխման ենթարկել ՀՀ դատական իշխանության համակարգը՝ առաջնահերթ խնդիր ունենալով երաշխավորել անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Այդ գործընթացը մեծապես պայմանավորված է Հայաստանի կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների վավերացմամբ, որոնց արդյունքում եվրոպական իրավական արժեհամակարգը պետք է դիտվի այն հիմնական ուղենիշը, որը կկանխորոշի ՀՀ իրավական համակարգի հետագա զարգացումը:

Արդար դատաքննության իրավունքը, հանդիսանալով մարդու իրավունքների պաշտպանության և ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկը, միաժամանակ իրավունքի և օրենքի գերակայության սկզբունքի, ժամանակակից իրավական պետության կարևորագույն տարրերից մեկն է:

Պաշտպանը բազմիցս նշել է այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում արդար դատաքննության իրավունքի ապահովումը հեռու է բավարար լինելուց: Արդարադատության պատշաճ իրականացումը բնութագրվում է երկու հիմնական կողմերով՝ *ինստիտուցիոնալ,* այն է՝ անկախ և անկողմնակալ դատական իշխանության, դատարանների առկայությամբ, և *դատավարական,* այն է՝ քաղաքացիական և քրեական գործերի արդար քննությամբ:

Յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը երաշխավորվում է ինչպես ՀՀ կողմից վավերացված միջազգային-իրավական պայմանագրերով, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»: Այս դրույթն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում և օրենսդրական այլ ակտերում:

Արդար դատաքննության իրավունքն ընդգրկում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանը, գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը, հրապարակային դատաքննության իրավունքը, կողմերի հավասարությունը և մրցակցությունը, անմեղության կանխավարկածը, հանցագործության մեջ յուրաքանչյուր մեղադրվողի իրավունքները և այլն:

Արդար դատաքննության իրավունքը հավասարապես կարևորվում է ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական գործերով արդարադատություն իրականացնելիս: Մարդու իրավունքների ապահովման խնդիրը չափազանց կարևոր է և արդիական պետական գործունեության բոլոր ոլորտներում ու իրավունքի բոլոր ճյուղերում, սակայն այն առավել հրատապ է քրեական դատավարությունում: Եվ որքան էլ կարևոր են հասարակության բարեկեցության ու պետության կայունության ապահովման գործում հանցավորության դեմ իրականացվող պայքարը և այս ոլորտում ձեռք բերվող հաջողությունները, ամեն դեպքում պատասխանատվության պետք է ենթարկվեն միայն իրական մեղավորները, ինչի ապահովմանն է կոչված արդար դատաքննության իրավունքը: Հակառակ պարագայում քրեական դատավարությունը կկորցնի իր սոցիալական նշանակությունը՝ հանցավորության դեմ պայքարի արդյունավետ միջոցից վերածվելով հաշվեհարդարի գործիքի: Այս առումով եվրոպական չափանիշներին համապատասխան օրենսդրության առկայությունն ինքնին անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ նշված չափանիշներին համահունչ քրեական դատավարություն ունենալու համար, անգամ կատարյալ օրենսդրության պայմաններում քրեական դատավարությունը հեռու կլինի ժողովրդավար լինելուց, եթե չապահովվի այդ չափանիշներին համապատասխան կիրառություն:

Արդար դատաքննության իրավունքի ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև կողմերի հավասարության ապահովումը դատավարության մասնակիցների կողմից դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար պատասխանատվության հարցում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար սահմանում է դատական սանկցիաների կիրառման ինստիտուտը: Այն է՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, իրենց դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում դատարանն իրավունք ունի դատավարության մասնակիցների, քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ դատական սանկցիաները. 1) նախազգուշացում, 2)

նիստերի դահլիճից հեռացնելը, 3) դատական տուգանք, 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը: Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար սահմանված է նաև քրեական պատասխանատվություն: ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածը վերնագրված է «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը»: Հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է վկայի կամ տուժողի կամ պաշտպանի դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելով կամ դատավորի կարգադրությանը չենթարկվելով կամ դատական նիստի կարգը խախտելով կամ այլ գործողություն կատարելով և վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով»:

Սույն թվականի հունիսին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրական դատարան ներկայացրել է դիմում, որով խնդրել է որոշել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներին համապատասխանության հարցը: ՀՀ քրեական օենսգրքի վերոնշյալ նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորող սուբյեկտներ է դիտում միայն վկային, տուժողին և պաշտպանին: Քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձինք նշված հանցակազմի սուբյեկտներ չեն հանդիսանում, այսինքն նրանց՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելը կամ դատավորի կարգադրությանը չենթարկվելը կամ դատական նիստի կարգը խախտելը կամ այլ գործողություն կատարելը, որը կվկայի դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք չի հանդիսանում և, համապատասխանաբար, վիճարկվող նորմի համաձայն, հանցակազմ չի պարունակում: Հետևապես, վերոգրյալ նորմը անհավասար դրության մեջ է դնում, մասնավորապես, պաշտպանին՝ դատավարության մյուս մասնակիցների, հատկապես՝ մեղադրողի համեմատ, քանզի նույնպիսի արարքի համար պաշտպանը կարող է ենթարկվել քրեական հետապնդման, իսկ մեղադրողը և մյուսները՝ ոչ: Բացի այդ, դրանով սահմանափակվում է դատարանի՝ իր նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորած մեղադրողին և մյուսներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը: Արդյունքում իրավանորմն անհավասար դրության մեջ է դնում քրեական դատավարության կողմերին՝ խտրականություն սահմանելով նրանց նկատմամբ իրավական վերաբերմունքի մեջ:

ՀՀ քրեական օրենսգրքի նշված նորմը, այդպիսով, հակասության մեջ է մտնում ինչպես կողմերի հավասարության և մրցակցության վերաբերյալ եվրոպական չափանիշների, այնպես էլ ՀՀ Սահմանադրության՝ օրենքի առջև բոլորի հավասարությանը, դատական պաշտպանության իրավունքին, կողմերի հավասարությանը վերաբերող դրույթների հետ:

Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայի՝ «դատավորի կարգադրությանը չենթարկվել», «այլ գործողություններ», «դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանք» բառակապակցություններն առաջացնում եմ իրավական անորոշություն, ինչի հետևանքով պայմաններ են ստեղծվում վերոգրյալ նորմի կամայական մեկնաբանման և կիրառման համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից, ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից բխում է, որ որևէ նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որը թույլ կտա շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում նաև խորհրդատվությունից օգտվելով, դրա հետ համատեղելու իր վարքագիծը և կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ դրա գործողությունից: Առավել ևս ցանկացած հանցագործություն, ինչպես նաև դրա քրեաիրավական հետևանքները պետք է հստակ ամրագրված լինեն օրենքով այնպես, որ իրավանորմի տեքստից, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դատարանի կողմից դրա մեկնաբանման արդյունքում յուրաքանչյուրը կարողանա հստակ կանխատեսել սեփական գործողության կամ անգործության արդյունքում վրա հասնող քրեաիրավական հետևանքները: Ավելին, չպետք է առկա լինի այնպիսի կարգավորում, որի արդյունքում քրեական պատասխանատվություն սահմանվի իրավաչափ արարքի համար:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 14.1-րդ, 43-րդ հոդվածներից բխող իրավախախտման և դրա համար նախատեսված պատասխանատվության համաչափության սկզբունքն օրենսդրին պարտավորեցնում է հանցագործության քրեաիրավական հետևանքները սահմանելիս հաշվի առնել արարքի հանրային վտանգավորության աստիճանը՝ միաժամանակ հստակ սահմանազատելով քրեորեն պատժելի արարքներն իրավական այլ հետևանքներ առաջացնող արարքներից: Հետևաբար, քրեական պատասխանատվություն սահմանող նորմերը պետք է լինեն այնպիսին, որ բացառվեն դրանց կապակցությամբ տրվող տարածական մեկնաբանությունները, այսինքն՝ իրավական այլ հետևանքներ առաջացնող արարքների համար բացառվեն քրեաիրավական հետևանքները: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի հիշյալ նորմը հնարավորություն չի ընձեռում հստակորեն սահմանազատել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված

արարքները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված և իրավական այլ հետևանքներ առաջացնող գործողություններից (անգործությունից):

Այս կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանը 2010թ. հունվարի 14-ի թիվ 851 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը, այնքանով, որ այն կիրառելի չէ նաև դատավարության այլ մասնակիցների նկատմամբ:

2.1.3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք

2009թ. ընթացքում Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների մեջ կրկին զգալի թիվ են կազմում անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտմանը վերաբերող բողոքները, որոնց թիվը, ինչպես նախորդ, այնպես էլ այս տարի աճել է: Այս դիմում-բողոքները հիմնականում վերաբերում են քաղաքացիներին ՀՀ ոստիկանության տարբեր բաժիններ անհիմն բերման ենթարկելուն և անազատության մեջ ապօրինի պահելուն, այդ ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից դրսևորված դաժան, անմարդկային վերաբերմունքին և խոշտանգումներին, ծեծի ենթարկելուն, որպես մեղադրյալ ներգրավված անձանցից բռնությամբ և սպառնալիքի ազդեցությամբ ցուցմունքներ կորզելուն, կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելուն և այլն:

Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի ապահովման առումով ուշագրավ են անձին բերման ենթարկելու հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման որոշ հարցեր, որոնք քննարկման առարկա են դարձել Պաշտպանի նախորդ զեկույցներում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասին, որը հնարավոր է դարձնում բերման և անձնական խուզարկության ենթարկելը համարել իրավաչափ նաև քրեական գործ հարուցելու նպատակով նյութեր նախապատրաստելու ընթացքում, ինչը կարող է հանգեցնել մարդու ազատության անհարկի սահմանափակմանը: Իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն որևէ երաշխիքներ նշված գործողությունների անհիմն լինելու դեպքերից խուսափելու համար: Օրինակ՝ նախատեսված չեն բերման ենթարկված անձանց պահելու առավելագույն ժամկետները, որոնց ընթացքում անհապաղ պետք է կատարվեն բերման ենթարկվածի անձի ինքնությունը պարզելուն ուղղված գործողություններ և այլն: Ավելին, «Ոստիկանության մասին» ՀՀ

օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը, ըստ որի. «Ոստիկանությունն օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է պահել բերման ենթարկված, ձերբակալված, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև կալանավորված անձանց», նույնպես անորոշ է ձևակերպված և Ոստիկանությանն ուղղակի իրավունք է վերապահում պահել բերման ենթարկված անձանց: Բարձրացված հարցը մինչև օրս որևէ լուծում չի ստացել:

2.1.4. Ընտրելու և ընտրվելու իրավունք

ՀՀ ընտրական օրենսդրությանն առնչվող խնդիրները մանրամասն քննարկվել են Պաշտպանի 2007 և 2008թթ. տարեկան զեկույցներում: Մասնավորապես, Պաշտպանի կողմից բարձրացվել են ՀՀ ընտրական օրենսգրքում, ինչպես նաև ընտրական գործընթացները կարգավորող այլ իրավական ակտերում առկա բացերի և հակասությունների, գործնականում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող նորմերի վերաբերյալ հարցեր և ներկայացվել են ՀՀ ընտրական օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ, որոնք առայսօր չեն իրականացվել: Բարձրացված հիմնախնդիրները մասնավորապես վերաբերել են ընտրական գործընթացի պատշաճ վարչարարության ապահովմանը, քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում իրականացնելու ժամկետներին, զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման ընթացակարգերի կարգավորմանը, նախընտրական քարոզարշավի լուսաբանման գործընթացին, ընտրությունների ժամանակահատվածում ՀՀ Ազգային ժողովի՝ համամասնական և մեծամասնական ընտրակարգերով առաջադրված թեկնածուների անձեռնմխելիությանը, ՀՀ ընտրական օրենսդրությամբ երկքաղաքացիություն ունեցող անձանց ակտիվ ընտրական իրավունքների սահմանափակմանը (հաշվառված լինելու պայմանով), նախընտրական քարոզչության իրականացման ձևերին, ոչ թույլատրելի եղանակներով նախընտրական քարոզչության իրականացման հարցերին, նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուներին/կուսակցություններին/ օժանդակելու նպատակով նրանց անհատույց կամ արտոնյալ պայմաններով ծառայություններ տրամադրելու, աշխատանքներ կատարելու արգելմանը, քարոզչական պաստառների կամ այլ նյութերի օգտագործման կարգին, ՀՀ ընտրական օրենսդրության դրույթների խախտման համար նախատեսված պատասխանատվությանն առնչվող հարցերին և այլն:

2.2. Տնտեսական և սոցիալական իրավունքներ

2.2.1. Աշխատանքային իրավունքներ

Աշխատանքի բնագավառում անհատի սահմանադրական իրավունքների ու ազատությունների անմիջական իրականացման և պաշտպանության խնդիրների կարգավորմանն է ուղղված ՀՀ աշխատանքային օրենսդրությունը, որի նպատակն է սահմանել անձանց աշխատանքային իրավունքների և ազատությունների պետական երաշխիքները, պաշտպանել աշխատողների և գործատուների իրավունքներն ու շահերը (ՀՀ աշխ. օր-ի 2 հոդված):

Այդուհանդերձ, ստորև բերվող վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ աշխատանքային օրենսդրությունը ևս զերծ չէ բացերից, հակասություններից, ինչը հանգեցնում է անհատի աշխատանքային իրավունքների խախտմանը:

1) «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ առողջության համար վնասակար աշխատանքի կատարման դեպքում աշխատողին վճարվում է հավելում՝ նրա տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) 50 տոկոսի չափով: Նույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ կառավարությանն է վերապահվում առողջության համար վնասակար և առանձնապես վնասակար, առանձնապես ծանր աշխատանքների և մասնագիտությունների ցանկերը հաստատելու լիազորությունը:

ՀՀ կառավարության 11.12.2003 թ. N 1907-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված ցանկի XIII բաժնի 24-րդ կետի համաձայն 50% հավելում հատկացնելու համար նախատեսված է պայման, որ աշխատակիցը պետք է ներգրավված լինի օդային երթևեկության՝ առավելագույն ինտենսիվությամբ կամ բարդությամբ անմիջականորեն երթևեկության կառավարմանը:

Ներպետական իրավական ակտերով, այդ թվում՝ «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող իրավական ակտերով չեն սահմանվում օդային երթևեկության առավել բարդության (կամ ինտենսիվության) որոշման կանոնակարգեր (կամ նորմատիվներ): Դրա արդյունքում, ՀՀ տարածքում օդային երթևեկության կառավարմանը ներգրավված բոլոր մասնագետները, անկախ իրենց աշխատանքային գործունեության պայմաններից, զրկվել են հավելում ստանալու իրավունքից:

Միաժամանակ, «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «բ»

ենթակետով սահմանված է, որ ՀՀ կառավարությունը և պետական կառավարման մարմինները, «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքին համաձայն իրականացվող ավիացիոն գործունեության նորմատիվ կանոնակարգման գործընթացում պարզեցման և արագացման նպատակով իրավասու են ճանաչել և կիրառել քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունների (Եվրոկոնտրոլ և այլն) քաղաքացիական ավիացիայի բնագավառի կանոնակարգերը:

Հղում կատարելով «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ դրույթների վրա, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն իր 28 հոկտեմբերի 2004թ. թիվ 1 պաշտոնական պարզաբանման մեջ որպես միջազգային կազմակերպություններից Եվրոկոնտրոլի կողմից ընդունված կանոնակարգ է վկայակոչում մի փաստաթուղթ, որը ոչ միայն կանոնակարգ չի հանդիսանում և պարտադիր չէ Եվրոպական Միության երկրների համար, այլև «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի դրույթների իմաստով ՀՀ կառավարության և /կամ պետական կառավարման մարմինների կողմից չի ճանաչվել որպես ներպետական հասարակական հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտ, այն է՝ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով չի ինկորպորացվել ներպետական իրավական համակարգ, պաշտոնապես չի հրապարակվել և այլն:

Հիշատակված փաստաթղթի բովանդակության՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակիցների ընկալմամբ՝ ՀՀ օդային տարածքը չի հանդիսանում օդային երթևեկության առավելագույն ինտենսիվությամբ կամ օդային երթևեկության բարդությամբ կառավարման տարածք:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ ներպետական իրավական ակտերով անհրաժեշտ է սահմանել օդային երթևեկության առավել բարդության (կամ ինտենսիվության) որոշման կանոնակարգեր (կամ նորմատիվներ):

2) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 144 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը տարանջատում է արտաժամյա աշխատանքի երկու տեսակ՝ գործատուի պահանջով կամ կողմերի համաձայնությամբ: Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն գործատուն կարող է աշխատողին ներգրավել արտաժամյա աշխատանքների միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 145-րդ հոդվածով նախատեսված բացառիկ դեպքերում: ՀՀ աշխատանքային օրենսգրքում տեղ չեն գտել այնպիսի դրույթներ, որոնք կսահմանեն *կողմերի համաձայնությամբ* արտաժամյա աշխատանքը թույլատրելու դեպքերը: Թերևս այս նույն մոտեցումն է ձևակերպված նաև ՀՀ աշխ. օր-ի 139 հոդվածի 3-րդ մասում: Այսպես, օրենսդիրը, ՀՀ աշխ. օր-ի 139 հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանելով

աշխատաժամանակի նորմալ տևողությունը, նույն հոդվածի 1-ին կետում սահմանում է աշխատաժամանակի առավելագույն տևողությունը՝ ներառյալ գործատուի պահանջով կատարված արտաժամյա աշխատանքը՝ վկայակոչելով աշխ. օր-ի 145-րդ հոդվածով նախատեսված դեպքերը, ի տարբերություն 2-րդ կետի, որտեղ սահմանելով աշխատաժամանակի առավելագույն տևողությունը՝ ներառյալ կողմերի համաձայնությամբ արտաժամյա աշխատանքը, ոչ մի այլ նորմ չի վկայակոչում: Շարադրվածից կարելի է ենթադրել, թե կողմերի համաձայնությամբ արտաժամյա աշխատանքը թույլատրվում է ցանկացած դեպքում:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ անհրաժեշտություն է առաջացել ՀՀ աշխատանքային օրենսգիրքը համապատասխանեցնել միջազգային պրակտիկայում արտաժամյա աշխատանքի իրավական կարգավորման հարցում ձևավորված մոտեցումներին: Այսպես, օրինակ, Արտադրությունում աշխատաժամանակի վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության 1919թ. թիվ 1 Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ արտաժամյա աշխատանքը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ կազմակերպության անխափան գործունեությունն ապահովելու նպատակով:

3) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածի 1-ին մասը արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանում է հավելում՝ ժամային դրույքաչափի մեկուկես անգամից ոչ պակաս չափով, իսկ 2-րդ մասը նախատեսում է, որ կողմերի համաձայնությամբ արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար վճարվում է ոչ պակաս, քան աշխատողի համար սահմանված ժամային դրույքաչափը:

ՀՀ աշխ. օր.-ի 184 հոդվածի 2-րդ պարբերության դրույթների տառացի մեկնաբանությունից, կարելի է ենթադրել, որ կողմերի համաձայնությամբ արտաժամյա աշխատանքը վարձատրվում է նույն չափով (աշխատողի կողմից սահմանված ժամային դրույքաչափով), ինչ և աշխատաժամանակի նորմալ տևողությամբ կատարվող աշխատանքը:

Վերոնշյալ իրավադրույթների ուժով գործնականում հաճախ առաջանում է այնպիսի իրավիճակ, երբ գումար վաստակելու ցանկությունն ու անհրաժեշտությունը դրդում են մարդկանց կատարել արտաժամյա աշխատանք՝ անտեսելով հոգնածությունն ու առողջությանը պատճառվող վնասը և վարձատրվել նույն չափով, ինչ և աշխատաժամանակի նորմալ տևողության դեպքում:

4) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 185 հոդվածի բովանդակությունից բխում է, որ ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի ու հանգստյան օրերին կատարվող աշխատանքը կարող է լինել աշխատանքի ժամանակացույցով նախատեսված կամ չնախատեսված:

ՀՀ աշխ. օր.-ի 185 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանգստյան և տոնական ու հիշատակի օրերին կատարված աշխատանքը, եթե դա նախատեսված չէ աշխատանքի ժամանակացույցով, վճարվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի կրկնակի չափից ոչ պակաս չափով, կամ աշխատողի ցանկությամբ նրան մեկ ամսվա ընթացքում տրամադրվում է այլ հանգստյան օր, կամ այդ օրն ավելացվում է ամենամյա արձակուրդին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքի ժամանակացույցով հանգստյան օրը կատարված աշխատանքը վճարվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի կրկնակի չափով: Այսպիսով, ՀՀ աշխ. օր-ի 185 հոդվածի 2-րդ մասը չի կարգավորում աշխատանքի ժամանակացույցով տոնական և հիշատակի օրերին կատարվող աշխատանքի վարձատրության հետ կապված հարցերը, ինչը գործնականում լուրջ խնդիրներ է առաջացնում ինչպես աշխատողների, այնպես էլ գործատուների համար:

5) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը: Այդ հիմքերից մեկը ամրագրված է ՀՀ աշխ օր-ի հոդված 113-ի 1-ին մասի 4-րդ կետով, որի համաձայն գործատուն իրավունք ունի լուծել աշխատանքային պայմանագիրը աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում:

ՀՀ աշխ. օր-ի 120 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխ. օր.-ի 113-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ կետով նախատեսված հիմքով լուծել աշխատանքային պայմանագիրը, եթե մասնագիտական գիտելիքների անբավարարության կամ առողջական վիճակի պատճառով աշխատողը չի կարողանում կատարել իր աշխատանքային պարտականությունները:

ՀՀ աշխ. օր-ի 120-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ աշխատողի մասնագիտական ունակությունների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին կամ կատարվող աշխատանքին գնահատում է գործատուն, իսկ աշխատողի առողջական վիճակի համապատասխանությունը որոշվում է բժշկական եզրակացությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ ՀՀ աշխ. օր-ում տեղ չի գտել ոչ մի նորմ այն մասին, թե գործատուն ի՞նչ կարգով է որոշում զբաղեցրած պաշտոնին աշխատողի մասնագիտական գիտելիքների համապատասխանության հարցը, ուստի անհրաժեշտ է ՀՀ աշխ. օր-ի 120-րդ հոդվածում նախատեսել գործատուի կողմից աշխատողի մասնագիտական ունակությունների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին կամ կատարվող աշխատանքին գնահատելու կարգը:

6) Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը աշխատանքային օրենսդրության խախտման համար պատասխանատվություն է սահմանում գործատուի և ոչ թե վերջինիս գործադիր մարմնի ղեկավարի համար: Սակայն իրավաբանական անձինք չեն հանդիսանում վարչական իրավախախտման սուբյեկտ: Մասնավորապես թիվ S-2220 գործով կայացրած վճռով ՀՀ տնտեսական դատարանը «հանրահայտ ճանաչեց այն հանգամանքը, որ իրավաբանական անձը չի կարող համարվել վարչական իրավախախտման սուբյեկտ և ենթարկվել պատասխանատվության ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով», ինչպես նաև եզրակացրեց, որ այդ հանգամանքն ապացուցման կարիք չունի (վճիռը թողնվել է անփոփոխ ՀՀ վճռաբեկ դատարանի 14.10.2005թ. որոշմամբ): Ցանկացած դեպքում, այս եզրակացությունը ակնհայտորեն բխում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 9-13 և 19 հոդվածների դրույթներից, որոնք որպես վարչական իրավախախտման պարտադիր պայմաններ դիտարկում են միմիայն ֆիզիկական անձանց բնորոշ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են մեղքը, տարիքը և մեղսունակությունը:

Այսպիսով, գործատուն՝ իրավաբանական անձը չի հանդիսանում վարչական իրավախախտման սուբյեկտ:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխան հոդվածների սանկցիաներում օգտագործվող «գործատու» բառը փոխարինել «պաշտոնատար անձ» բառակապակցությամբ:

7) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է աշխատավարձի հասկացությունը. «Աշխատավարձը աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է»: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց ցանկացած եղանակով տրված լրացուցիչ վարձատրությունը»:

Աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածով կարգավորվում է աշխատանքի վարձատրությունը արտաժամյա և գիշերային աշխատանքի համար և նախատեսվում է, որ «արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանվում է հավելում՝ ժամային դրույքաչափի մեկուկես անգամից ոչ պակաս չափով»:

Խնդրի կապակցությամբ «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է այլ կարգավորում, ըստ որի՝ գիշերային (երեկոյան ժամը 23-ից մինչեւ առավոտյան ժամը 8-ը) և արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանվում է հավելում՝ ժամային դրույքաչափի կրկնակի չափով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի և «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի միջև առկա հակասությունը իրավակիրառ պարակտիկայում պետք է լուծվի ի օգուտ ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ հիմք ընդունելով «ՀՀ աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ օրենսգիրքը գործողության մեջ դնելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, անհրաժեշտ է օրենսգրքին համապատասխանեցնել աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող օրենքները և այլ իրավական ակտերը:

Աշխատանքային օրենսգրքի հիշատակված դրույթների անորոշությունը պայմաններ է ստեղծել դրա կամայական մեկնաբանման և կիրառման համար: Պատահական չէ այս առումով, որ խնդրո առարկա դրույթների կապակցությամբ 03.11. 2006թ.-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից տրվել է պաշտոնական պարզաբանում, որում մասնավորապես նշվում է հետևյալը. «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածի առաջին պարբերության համաձայն արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար աշխատողին յուրաքանչյուր մեկ ժամի համար վճարվող տարիֆային դրույքաչափից բացի (պաշտոնային դրույքաչափից) բացի վճարվում է նաև հավելում՝ տարիֆային դրույքաչափի (պաշտոնային դրույքաչափի) մեկուկեսապատիկից (150 տոկոսից) ոչ պակաս չափով»:

Այնուամենայնիվ, իրավակիրառական պրակտիկայում վերը նշված պաշտոնական պարզաբանումը անտեսվում է և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածը ենթարկվում է տարաբնույթ մեկնաբանությունների:

Իրավակիրառ պրակտիկայում առաջացած իրավիճակը շտկելու, տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13 հոդվածով սահմանված աշխատանքային օրենսդրության սկզբունքները, մասնավորապես՝ յուրաքանչյուր աշխատողի՝ աշխատանքի արդարացի վարձատրության իրավունքը, ապահովելու նպատակով անհրաժեշտ է աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածում կատարել փոփոխություններ և լրացումներ, սահմանելով, որ՝

ա) բացի պաշտոնական դրույքաչափից պետք է վճարվի նաև հավելում, որը կազմում է այդպիսի դրույքաչափի 150 տոկոսը.

բ) այդ դրույքաչափը վերաբերում է ինչպես այն աշխատողներին, որոնց աշխատավարձը հաշվարկվում է ժամային դրույքաչափով, այնպես էլ նրանց, ում աշխատավարձը հաշվարկվում է ամսական դրույքաչափով:

Նման ձևակերպումը, կարծում ենք, վերջ կտա հակասական իրավակիրառ պրակտիկային, երաշխիք կհանդիսանա յուրաքանչյուր աշխատողի՝ աշխատանքի արդարացի վարձատրության իրավունքի ապահովման համար:

2.2.2. Սոցիալական ապահովության իրավունք

Կենսաթոշակային հարաբերությունների օրենսդրական կարգավորման հետ կապված խնդիրների վերաբերյալ.

2009թ. ընթացքում վերհանվել են կենսաթոշակների վճարման հետ կապված հարաբերությունների թերի օրենսդրական կարգավորման հետ կապված խնդիրներ, ինչի հետևանքով որոշ կատեգորիայի կենսաթոշակառուներ, փաստորեն, զրկվել են օրենքով իրենց վերապահված իրավունքի իրականացման հնարավորությունից: Խոսքը վերաբերում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի կիրառման կարգին: Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետությունը գիտական աստիճան ունեցող անձանց կենսաթոշակից բացի տալիս է հավելավճար, որի չափը և տրամադրման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Օրենքն ուժի մեջ է մտել 2000թ., սակայն այդ կարգը մինչ օրս ՀՀ կառավարության կողմից չի սահմանվել: Այս հիմնախնդրի կապակցությամբ Պաշտպանի կողմից գրություն է հասցեագրվել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարին: Ի պատասխան հայտնվել է, որ ՀՀ կառավարության սահմանած կարգով և չափով հավելավճար տրամադրելու հարցը կքննարկվի կենսաթոշակային բարեփոխումների համատեքստում:

Պաշտպանի կողմից մշտապես ուշադրության կենտրոնում են պահվել նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2008թ. հունվարի 15-ի որոշման ընդունումից հետո կենսաթոշակային օրենսդրության կիրառման հետ կապված խնդիրները, որոնց մանրամասն անդրադարձ է կատարվել սույն զեկույցի 3.5 պարագրաֆում:

Կենսաթոշակի իրավունքի ապահովմանն առնչվող հիմնախնդիր է բարձրացվել «Ա.Դ Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից: Խնդիրը առնչվում է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից կենսաթոշակի վճարման ժամկետների սահմանափակմանը՝ Բանկի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրին համապատասխան: Նշված հիմնահարցի կապակցությամբ Պաշտպանի

կողմից ուսումնասիրվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման պրակտիկան, և բացահայտվել է հետևյալ պատկերը.

28.11.2001թ. «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի (ներկայումս «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի) և ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի միջև կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, ըստ որի՝ Բանկը պարտավորվել է Հիմնադրամի առաջադրանքով և վերջինիս կողմից հատկացված միջոցների հաշվին ՀՀ տարածքում իրականացնել կենսաթոշակների վճարում: 31.10.2005թ. նշված պայմանագրում կատարված փոփոխությամբ սահմանվել է կենսաթոշակի գումարը բանկի մասնաճյուղերի կողմից կենսաթոշակառուին վճարելու որոշակի ժամկետ, այն է՝ մասնաճյուղերի հաշիվներին ամրագրվելուց հետո 12 օրացույցային օրվա ընթացքում: Այնուհետև, 2006թ. պայմանագրում կատարված փոփոխությամբ 12-օրյա ժամկետը փոխարինվել է 15-օրյա ժամկետով: Վճարումը պայմանագրով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո, ավելացված գումարները վերադարձվում են Պատվիրատուին՝ 3 բանկային օրվա ընթացքում:

Երևանի քաղաքացիական դատարանի կողմից ԵՔԴ 0398/02/2008թ. գործով կայացված վճռով (օրինական ուժի մեջ մտած) անվավեր է ճանաչվել վերոգրյալ պայմանագրի՝ ընթացիկ ամսում կենսաթոշակի վճարման ժամկետային սահմանափակում նախատեսող 2.1 կետի «զ» ենթակետը, որից հետո վճարումների կատարումը իրականացվել է ամբողջ ամսվա ընթացքում:

Ս.թ. մարտ ամսից, կրկին վերսկսվել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղերի կողմից յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակի վճարումը ընթացիկ ամսում որոշակի ժամկետով սահմանափակելու գործընթացը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից տրված պարզաբանման համաձայն՝ ներկայումս ՀՀ-ում կենսաթոշակների վճարումը կատարվում է մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը: Սահմանված ժամկետում կենսաթոշակառուի կողմից կենսաթոշակը չստանալու դեպքում դրա վճարումը տեղափոխվում է հաջորդ ամիս:

Կենսաթոշակը ստանալու համար ընթացիկ ամսում ժամկետային սահմանափակման կիրառման համար հիմք է հանդիսացել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածում 26.12.2008թ. կատարված փոփոխությունը, որն ուժի մեջ է մտել 05.02.2009 թվականից:

Փոփոխությամբ, մասնավորապես, սահմանվել է, որ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է մինչև տվյալ ամսվա 20-ը, ի տարբերություն այս դրույթի նախկին

խմբագրության, որով նախատեսվում էր յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակի վճարումը հաջորդ ամսվա ընթացքում:

Այս դրույթի բովանդակությունից բխում է պետության՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակի վճարման պարտականությունը, որը պետք է կատարվի ոչ ուշ, քան հաջորդ ամսվա ընթացքում: Նույնաբովանդակ մեկնաբանությունը տրվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 3-1046(ՎԴ) որոշմամբ, որով մասնավորապես, նշվել է. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը պետք է մեկնաբանել ոչ թե որպես կենսաթոշակառուի՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը կոնկրետ որոշակի ժամկետում ստանալու իրավունք, այլ որպես իրավասու պետական մարմնի ոչ ուշ, քան մինչև տվյալ ժամկետի ավարտը կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուին վճարելու պարտականություն»: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, դրան համապատասխան էլ ՀՀ դատական օրենսգիրքը սահմանել է որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումների (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունների) պարտադիր լինելու պահանջը՝ դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասում կատարված փոփոխության արդյունքում այս դրույթը բովանդակային առումով որևէ փոփոխության չի ենթարկվել, պարզապես առավել սահմանափակվել են պետության կողմից կենսաթոշակի վճարման ժամկետները: Օրենսդիրը դրանով փորձել է առավել բարելավել կենսաթոշակառուի իրավական վիճակը՝ սահմանափակելով իրավասու պետական մարմնի կողմից կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուին վճարելու պարտականության կատարման ժամկետը:

Իրավասու պետական մարմնի կողմից ոչ ուշ, քան մինչև տվյալ ամսվա 20-ը կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուին վճարելու պարտականությունը, որպես կենսաթոշակառուի կողմից կենսաթոշակը ստանալու իրավունքի իրականացման ժամկետային սահմանափակում մեկնաբանելը, և դրա հիման վրա համապատասխան պայմանագրում փոփոխություն կատարելը, առերևույթ կերպով հակասում է նշված հոդվածում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությանը: Նման մեկնաբանությունը ամբողջությամբ փոխում է հիշատակված դրույթի իմաստը, որով ակնհայտորեն խախտվում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Վերոնշյալ հիմնավորումից ելնելով՝ Պաշտպանի կողմից սոցիալական ապահովության պետական ծառայությանը, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

նախարարությանը առաջարկվել է հնարավորինս սեղմ ժամկետներում միջոցներ ձեռնարկել ամբողջ ամսվա ընթացքում կենսաթոշակների վճարումը վերականգնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, Ծառայության կողմից համապատասխան փոփոխության կատարումը պայմանագրում չի նախաձեռնվել՝ կենսաթոշակի վճարման անկանխիկ համակարգի ներդրման աշխատաքների իրականացման հիմնավորմամբ: Հետևողական լինելով խնդրի լուծման աշխատանքների իրականացմանը՝ Պաշտպանը պարբերաբար պարզաբանումներ է պահանջել անկանխիկ համակարգի ներդրման աշխատանքների իրականացման վերաբերյալ: 11.10.2009թ. գրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Պաշտպանին հայտնվել է նախարարության կողմից կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգի ներդման նպատակով համապատասխան օրենսդրական նախագծերի՝ ՀՀ կառավարությանը ներկայացնելու մասին:

Աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ.

Վերոնշյալ հիմնախնդրի բարձրացումը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի յուրաքանչյուր տարվա զեկույցներում ավանդույթ է դարձել, քանի որ հիմնախնդիրը մինչ օրս մնում է չհասցեագրված:

Կազմակերպության լուծարման հետևանքով քաղաքացիների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վճարման հարցը մինչ օրս օրենսդրական կարգավորում չի ստացել, ուստի, 2009թ.-ի ընթացքում շարունակվել է այդ խնդրով քաղաքացիների դիմում-բողոքների հոսքը:

Բանն այն է, որ ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշման 16-րդ կետի համաձայն կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086 հոդվածի /ուժի մեջ է մտել 1999 թվականին/ համաձայն՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար: Ըստ այդ հոդվածի՝ պետք է սահմանվեր կարգ՝ ուղղված աշխատանքային պարտականությունների կատարման

ժամանակ խեղում ստացած քաղաքացիներին փոխհատուցում տրամադրելու մեխանիզմների հստակեցմանն այն պարագայում, երբ կազմակերպության գործունեությունը դադարել էր լուծարմամբ, ինչն ինքնին ենթադրում է իրավահաջորդի բացակայություն և, հետևաբար, վերջինիս կողմից պարտավորությունների կատարման պարտականության ստանձնում: Անցած 10 տարիների ընթացքում նման կարգ չի սահմանվել: Ավելին՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշման 16 կետը: Արդյունքում խնդիրը մնացել է չկարգավորված, իսկ բազմաթիվ քաղաքացիներ զրկվել են իրենց հասանելիք փոխհատուցումը ստանալու իրավունքից:

Այս կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հրավիրել է թե՛ ՀՀ վարչապետի, և թե՛ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի ուշադրությունը՝ առաջարկելով հնարավորինս արագ միջոցներ ձեռնարկել օրենսդրական բացը լրացնելու ուղղությամբ, ընդ որում, առաջարկվել է մեխանիզմների մշակման համատեքստում դիտարկել նաև բաց թողնված ժամանակահատվածի համար հասանելիք փոխհատուցման տրամադրման հիմնահարցը:

«Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը տարիներ շարունակ, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արդեն գտնվում էր մշակման փուլում և որով պետք է լուծում տրվեր վերոնշյալ հիմնախնդրին, այդպես էլ մինչ օրս չի ընդունվել:

Խնդրին վերջնական լուծում տալու նպատակով ՀՀ վարչապետի հանձնարարականով 2008 թվականին քննարկում է կազմակերպվել ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի մասնակցությամբ: Մեկ այլ հանդիպում կազմակերպվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում, որի ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել միջանկյալ իրավաբանական լուծում տալ 2004թ. օգոստոսի 1-ից հետո քաղաքացիներին պատճառված վնասի հատուցման իրավունքի՝ նրանց կողմից իրացման հարցի վերաբերյալ: Ընդ որում, առաջարկվել է մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ կամ կատարել փոփոխություններ ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշման մեջ, որը հնարավորություն կտա քաղաքացիներին իրենց հասանելիք գումարները ստանալ պետական բյուջեի միջոցների հաշվին: Քննարկման ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել նաև առանձին մշակել կազմակերպության ֆինանսական միջոցների կապիտալացման կարգ: Նախատեսվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ մշակել և ՀՀ

կառավարություն ներկայացնել նախ՝ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության ներդրումն ապահովող հայեցակարգ, այնուհետև՝ օրենքի նախագիծ:

Այնուամենայնիվ, պետք է փաստենք, որ տարիներ շարունակ բարձրացվող այս հիմնախնդիրը մինչ օրս լուծում չի ստացել: Պաշտպանը շարունակելու է հետևողական լինել այս հարցի լուծմանը:

2.2.3. Սեփականության իրավունք

2009թ. ընթացքում շարունակվել են Պաշտպանին ուղղվել բողոքներ՝ հասարակության և պետության կարիքների համար օտարված գոտիներում գտնվող տարածքների սեփականատերերից և այլ գույքային իրավունքներ ունեցող անձանցից՝ առավելապես, ոչ համարժեք փոխհատուցման տրամադրման վերաբերյալ: Այդ խնդիրները առաջին հերթին բխում են այն իրողությունից, որ գործնականում չի իրականացվում օտարման պայմանագրով սահմանված փոխհատուցման գնի վերաբերյալ բանակցությունների իրականացման՝ օրենքով սահմանված ընթացակարգը, և ձեռք բերողի կողմից առաջարկված գինը երբևէ փոփոխության չի ենթարկվում:

Դեռևս «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման փուլում Պաշտպանի կողմից այս խնդիրների առնչությամբ կատարված առաջարկություններին անդրադարձ է կատարվել 2008թ. տարեկան զեկույցում, մասնավորապես, պետության՝ որպես հասարակության և պետության կարիքի կրողի դերի հստակեցման վերաբերյալ:

Ինքնակամ կառույցների օրինականացման առնչությամբ առկա օրենսդրական խնդիրները մանրամասն քննարկվել են նախորդ տարվա զեկույցում, մասնավորապես, Կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումներում և դրանցով հաստատված կարգերում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտության տեսանկյունից: Պաշտպանի կողմից առաջարկվել է սահմանել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից կառուցված ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքի սեփականությունը ճանաչելու և պետական գրանցման ժամկետներ՝ դրանց օրինականացման գործընթացի ապահովման համար: Այս առաջարկությանը համապատասխան՝ փոփոխություններ ոլորտի օրենսդրության մեջ մինչ օրս չեն կատարվել:

Նախորդ տարվա զեկույցում բարձրացված հիմնախնդիրը՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գույքային իրավունքներ ունեցող անձանց կողմից տասնյակ տարիներ օգտագործվող շենք-շինությունների օրինականացման հարցի վերաբերյալ, այսօր նույնպես մնում է արդիական: Առաջարկվել էր հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ենթակա տարածքներում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցած ինքնակամ կառույցները վերջիններիս օտարելու հնարավորություն ընձեռել: Պաշտպանի վերոհիշյալ առաջարկին համապատասխան օրենսդրական փոփոխությունը առայսօր չի կատարվել:

Պաշտպանի կողմից բազմիցս անդրադարձ է կատարվել նաև քաղաքաշինության ոլորտի օրենսդրությանն առնչվող խնդիրներին, դրանց կանոնակարգման ոչ հստակ մեխանիզմներին, սակայն այս ոլորտում նույնպես դրական տեղաշարժ չի գրանցվել: Քաղաքաշինության ոլորտի օրենսդրության հետ կապված խնդիրները մանրամասն քննարկվել են Պաշտպանի 2008թ. տարեկան զեկույցում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության դեմ սեփականության իրավունքի խախտման առնչությամբ ներկայացված բողոքների քննարկման արդյունքներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան՝ հարկ է ընդգծել «Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին» ԵԽ Նախարարների կոմիտեի Rec(2004) 6 հանձնարարական-առաջարկության կարևորությունը:

Այն բանից հետո, երբ կայացվել է Դատարանի վճիռը, որ բացահայտել է պետության իրավունքում և պրակտիկայում կառուցվածքային կամ ընդհանուր թերություն («պիլոտային» վճիռ) և երբ նույն հիմնախնդրին վերաբերող բազմաթիվ գանգատներ առկախ են Դատարանում կամ ենթակա են ներկայացման Դատարան («կրկնվող գործեր»), պատասխանող պետությունը պետք է ապահովի, որ պոտենցիալ գանգատարկուները ունենան իրավական պաշտպանության ներպետական միջոց, որը թույլ կտա դիմել իրավասու ազգային մարմնին, մի միջոց, որը կարող է օգտագործվել նաև ներկա գանգատարկուների կողմից: Նման արագ և արդյունավետ միջոցը նրանց թույլ կտար արդեն փոխհատուցում ստանալ ազգային մակարդակում՝ Կոնվենցիայի համակարգի սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Գտնում ենք, որ այս ընթացակարգի կիրառումը ներպետական իրավական համակարգում զգալիորեն կարող է նպաստել արդյունավետ պաշտպանության իրավունքի իրականացման ապահովմանը մեր հանրապետությունում:

2.2.4. Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունք

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն. «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը», իսկ ՀՀ Սահմանադրության 33.2-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»:

Քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց, մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա դառնում է էլ ավելի տարատեսակ ու տարաբնույթ, իսկ դրա հետևանքները՝ անկանխատեսելի: Նման պայմաններում առավել կարևորվում է պետության և քաղաքացիական հասարակության փոխհամագործակցությունն ու փոխադարձ պատասխանատվությունը: Անչափ կարևոր է, որ հենց հասարակությունը պահանջատեր լինի առողջ շրջակա միջավայրում ապրելու իր իրավունքի ապահովմանը և ժամանակին արձագանքի այդ իրավունքի խախտման յուրանքաչյուր դեպքի: Ցավով պետք է փաստել շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հարցերի շուրջ հանրային իրազեկության ցածր մակարդակը: Մինչդեռ, նշված ոլորտի խնդիրների լուծումը մեծապես կախված է պետության և հասարակության կողմից պատշաճ վերահսկողությունից, որպեսզի ժամանակին կանխվեն և դադարեցվեն պաշտոնատար անձանց և առանձին անհատների չարաշահումները և անփույթ վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ:

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության և հայեցակարգի փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները կարգավորվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, որի հիման վրա ընդունվել են նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնող լիազորված պետական մարմնի մասին» և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասնագիտական իրավասության հավաստագիր տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները: Բացի այդ, ելնելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, ինչպես նաև ի կատարումն Միացյալ ազգերի կազմակերպության «Շրջակա միջավայրը և զարգացումը» խորագրով (Ռիո-դե-Ժանեյրո, 1992 թվական), Առողջապահության համաշխարհային

կազմակերպության «Շրջակա միջավայրը և առողջությունը» խորագրով եվրոպական 2-րդ (Հելսինկի, 1994 թվական) և 3-րդ (Լոնդոն, 1999 թվական) համաժողովներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն է տվել շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողությունների ազգային ծրագրին և հաստատել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողությունների ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

Հաստատվել է նաև Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների 2007-2011 թվականների ծրագիրը:

Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի ապահովմանը վերաբերող հարցերը շարունակում են մնալ Պաշտպանի ուշադրության կենտրոնում, և Պաշտպանը իր զեկույցներում հետևողականորեն անդրադառնում է բնապահպանական ոլորտի խնդիրներին:

2009թ. ընթացքում Պաշտպանի կողմից կատարված բնապահպանության ոլորտի ուսումնասիրություններն ու այցելությունները (Դսեղի անտառ, Ջրվեժի անտառապարկ, Երևան քաղաքի տարբեր տարածքներ) վկայում են այն մասին, որ մարդու իրավունքների պաշտպանության տեսակետից դեռևս լուրջ խնդիրներ կան շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Հիմնական խնդիրները վերաբերում են ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ հանրապետության մարզերում ոչ պատշաճ վերահսկողության պատճառով զանգվածային ծառահատումներին, անտառների կամ ազգային պարկերի ոչ նպատակային օգտագործմանը, շինարարական և արդյունաբերական թափոնների ոչ սահմանված վայրեր արտանետմանը, ինչպես նաև հանքարդյունաբերական ոլորտում գործող ընկերությունների նկատմամբ ոչ բավարար վերահսկողությանը: 2008թ. աշնանը բնապահպանական հասարակական կազմակերպություններն ահազանգեցին Կապանում բնապահպանական աղետալի իրավիճակի մասին: Ըստ վերջիններիս տվյալների, այնտեղ հողի, ջրի և սննդամթերքի մեջ հայտնաբերվել են թունավոր ծանր մետաղներ, իսկ որոշ էլեմենտների կոնցենտրացիան հարյուր անգամ գերազանցում է նորման, ինչն ազդում է մարդու իմունային համակարգի վրա՝ անդրադառնալով նաև գենոֆոնդի վրա: Բացի այդ, Կապանի տարածքներն աղտոտված են հարյուր հազարավոր խորանարդ մետր դատարկ ապարներով և թափոններով: Բնապահպանները նաև նշեցին, որ իրենց չի տրամադրվել Կապանում գործող “Deno Gold Mining” ընկերության գործունեության ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը (ստուգումները կատարվել են 2007-2008թթ. ՀՀ

բնապահպանության նախարարության և Սյունիքի բնապահպանական տարածքային տեսչության կողմից): Պաշտպանը դիմել է նաև իրավասու պետական մարմիններին ՀՀ Լոռու մարզում կատարված ծառահատումների օրինականության փաստը ստուգելու և ապօրինի ծառահատման փաստեր հայտնաբերելու դեպքում օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: Արդյունքում հարուցվել է քրեական գործ, և կատարվում է նախաքննություն:

Առ այսօր լուծում չի ստացել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Սևանի քաղաքապետարանի միջև Սևանա լճի ափամերձ տարածքները վարձակալության իրավունքով տրամադրելու իրավասության տարանջատման խնդիրը: Դեռևս 2007թ. զեկույցում Պաշտպանն անդրադարձել էր Սևանա լճի հետ առնչվող հիմնախնդիրներին՝ ելնելով վերջինիս բացառիկ տնտեսական և էկոլոգիական նշանակությունից: Մտահոգության տեղիք էին տվել նաև Երևան քաղաքում վերջին տարիների քաղաքաշինության բուռն զարգացումները, այդ «ձեռքբերումների» որակը և դրանց հասնելու ճանապարհին մարդու իրավունքների խախտումները: Վերոնշյալ խնդիրները շարունակում են գերակա մնալ նաև այսօր:

Նշենք, որ բնապահպանական ոլորտի խնդիրները հետևանք են օրենսդրության և, հատկապես, իրավակիրառ պրակտիկայում տեղ գտած թերացումների: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ոլորտի մի շարք միջազգային կոնվենցիաներ, ՀՀ կառավարության կողմից հաստատվել է մի շարք բնապահպանական միջազգային միջոցառումների ցանկը: Դրական քայլեր են հանդիսանում ՀՀ կառավարության կողմից 14.08.2008թ. թիվ 33 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «ՀՀ շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագիրը», ՀՀ կառավարության 30.04.2009թ. թիվ 18 արձանագրային որոշմամբ «Բնապահպանական վճարների և դրանց չափերի վերաբերյալ օրենսդրության կատարելագործման հայեցակարգը», ինչպես նաև այն հանգամանքը, որ մշակվել է ՀՀ առաջին ազգային զեկույցը «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ: Թեպետ բնապահպանական ոլորտի խնդիրները մեծապես կախված են ինչպես համապատասխան օրենսդրության, այնպես էլ ոլորտի մասնագետների, ֆինանսական միջոցների առկայությունից, սակայն առավել կարևոր է համապետական քաղաքականության մշակումն ու ընդունումը: Բացի այդ, դեռևս օրենսդրական բավարար կարգավորման կարիք ունեն պետական մարմինների կողմից հասարակությանը բնապահպանական տեղեկատվության տրամադրման, շրջակա միջավայրին վերաբերող որոշումների ընդունմանը լայն հասարակայնության մասնակցությունն ապահովող

ընթացակարգերը: Նշված ընթացակարգերի սահմանման պահանջը բխում է նաև «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի դրույթներից: Այդ են փաստել նաև Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության հանձնաժողովի կողմից 2006թ. մարտին ընդունված եզրակացությունները և առաջարկությունները, այնուամենայնիվ, առ այսօր այս բնագավառում էական տեղաշարժ չի գրանցվել:

Այսպիսով, շրջակա միջավայրի պաշտպանության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում հեռու է բավարար լինելուց:

ԲԱԺԻՆ 3.
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

2009 թվականին ստացված բողոքների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստելու, որ հանրային մարմինները քաղաքացիների դիմում-բողոքների հետ առնչվելիս միշտ չէ, որ հիմք են ընդունում ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքները:

Հանրային մարմինների դեմ ուղղված բողոքների քանակը, անկախ նրանից, թե դրանցով իրավունքի խախտում բացահայտվել է, թե ոչ, արդեն իսկ վկայում են այն մասին, որ այդ մարմինների պաշտոնատար անձինք դիմումների ընթացքը լուծելիս թերացել են իրենց պարտականությունների կատարման մեջ: Եթե չեն խախտվել դիմումատուների իրավունքները, ապա տեղ են գտել քաղաքացիների հանդեպ անպատշաճ վերաբերմունք, դիմումների մերժման պատճառների և հիմքերի մասին ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրում և այլ անթույլատրելի մոտեցումներ:

Հատկանշական է, որ հաճախ Պաշտպանի կողմից որոշումների ձևով արտահայտվող այն դիրքորոշումները, որոնցով հստակ գնահատական է տրվում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքին, այսինքն՝ հիմնավորվում են այդ մարմինների անօրինական գործողությունները (անգործությունը), չեն ընդունվում վերջիններիս կողմից, ավելին, նրանք փորձում են շրջանցել ներկայացված փաստերը և դրանց տալ տարաբնույթ՝ իրենց ձեռնտու մեկնաբանություններ:

Այս համատեքստում հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցները մեծ հաշվով միշտ չէ, որ ծառայում են իրենց նպատակին, այն առումով, որ զեկույցներում արծարծված հարցերը չեն ստանում իրենց լուծումները, վատ վարչարարություն իրականացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները թույլ տված սխալները հետագայում չեն բացառում, մեղավոր անձինք պատասխանատվության չեն ենթարկվում:

3.1. ՀՀ Ազգային ժողով

ՀՀ Ազգային ժողովի դեմ ուղղված բողոքներով քաղաքացիներն իրենց դժգոհություններն են արտահայտել որոշ օրենքների ընդունման կամ չընդունման կապակցությամբ, ներկայացրել են առաջարկություններ դրանցում փոփոխություններ

կատարելու մասին: Այդ բողոքները սահմանված կարգով քննարկվել են Պաշտպանի աշխատակազմում:

2008թ. տարեկան զեկույցում /բաժին 3, օրինակ 1/ անդրադարձել էինք քաղաքացի Ա.Շ.-ի բողոքում բարձրացված խնդիրներին: Դիմումատուն նշել էր, որ 2004թ. մայիսին մրցույթի արդյունքներով ընդունվել է ՀՀ ԱԺ աշխատակազմի Տարածքային քաղաքականության վերլուծության վարչության տեղական ինքնակառավարման բաժին՝ որպես գլխավոր մասնագետ: Ամուսնու դիվանագիտական երկարատև գործուղման պատճառով, իր դիմումի համաձայն, ԱԺ աշխատակազմի ղեկավարի հրամանով ազատվել է իր զբաղեցրած պաշտոնից՝ հետագայում համարժեք աշխատանքի վերականգնվելու պայմանով՝ համաձայն «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի: Հայաստան վերադառնալուց հետո 2008թ. հունիսին գրավոր դիմել է ԱԺ աշխատակազմի ղեկավարին՝ համարժեք աշխատանքի վերականգնելու խնդրանքով, սակայն դիմումին ընթացք չի տրվել, ինչը հիմք է տվել կարծելու, որ պաշտոնատար անձանց նման պահվածքը կապված է իր ամուսնու անձի և քաղաքական հայացքների հետ:

Բողոքի քննարկման արդյունքում պարզվել է, որ ՀՀ ԱԺ աշխատակազմի նախկին ղեկավար Հ. Քոթանյանը «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը մեկնաբանելով ոչ դիմումատուի օգտին, ըստ էության, խախտել է նրա իրավունքները: Պաշտպանը 20.02.2009թ. որոշում է կայացրել ՀՀ ԱԺ աշխատակազմի նախկին ղեկավար Հ. Քոթանյանի գործողություններում /անգործության մեջ/ մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու մասին և առաջարկել է ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար Գ. Ղարիբջանյանին՝ Ա.Շ.-ին աշխատանքային իրավունքը վերականգնելու կապակցությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Որոշմանն ի պատասխան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար Գ. Ղարիբջանյանը հայտնել է, որ խնդրո առարկա հարցին լուծում տալու նպատակով համադրվել և վերլուծվել են «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասը և «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան նորմերը: «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ «եթե այլ բան սահմանված չէ» դրույթի վերաբերյալ նշել է, որ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորող առանձնահատկությունները սահմանված են «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքով, որի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատակազմում պետական ծառայության թափուր

պաշտոններում նշանակումներ կատարվում են նույն օրենքով սահմանված կարգով, այն է՝ աշխատակազմում թափուր պաշտոնները զբաղեցվում են փակ կամ բաց մրցութային կարգով:

Տարօրինակ է, բայց փաստ, որ Պաշտպանի որոշումը **ՀՀ օրենսդիր մարմնում** չի կատարվել այն պատճառաբանությամբ, որ առկա է օրենսդրական բաց, այսինքն՝ «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքով պաշտոնից ազատված պետական ծառայողին համարժեք աշխատանքի վերականգնելու վերաբերյալ որևէ իրավական նորմ կամ օրենսդրական հիմք նախատեսված չէ:

3.2. ՀՀ կառավարություն

ՀՀ կառավարության դեմ ուղղված բողոքները հիմնականում վերաբերել են կառավարության այն որոշումներին, որոնց ընդունմամբ դիմումատուները զրկվել են որոշ իրավունքներից, կամ որոնցով, ըստ դիմումատուների, արդարացի տարբերակված մոտեցում չի ցուցաբերվել տարբեր սոցիալական խմբերի, մասնավորապես, Երևան քաղաքի և մարզերի բնակիչների նկատմամբ: Որոշ բողոքներ կապված են եղել բյուրոկրատական քաշքշուքների հետևանքով ՀՀ կառավարության որոշումները պետական մարմինների կողմից չկատարելու հետ: Շատ են բողոքները, որոնք վերաբերել են համաշխարհային ճգնաժամի հետևանքով տարբեր ծրագրերի կասեցմանը կամ դրանց իրականացման ժամկետների հետաձգմանը:

ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատվել է ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը (այսուհետ՝ Կարգ): Կարգով սահմանվել են միայն քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի վրա կառուցված ինքնակամ կառույցների օրինականացման ժամկետները /համապատասխան դիմումը ստանալուց հետո 30-ից 60 օր/, սակայն չի նախատեսվել պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վրա քաղաքացիների կողմից կառուցված և տարիներ շարունակ օգտագործվող ինքնակամ կառույցի օրինականացման ժամկետները: Խնդիրն այն է, որ շինության օրինականացման համար քաղաքացիները դիմում են համապատասխան մարմնին, որն էլ պատասխանում է, որ հարցին ընթացք կտրվի այն ժամանակ, երբ նշված հողատարածքը և շինությունը կճանաչվեն պետական սեփականություն, որն էլ տևում է մի քանի ամիս, նույնիսկ՝ տարի:

Այս մասին արձանագրվել է նաև 2008 թվականի տարեկան զեկույցում /բաժին 2.2.3./:

Նշված հարցով Պաշտպանը դիմել է ՀՀ կառավարություն, սակայն 2009 թվականին նույնպես հարցը չի լուծվել:

Հիմք ընդունելով Երևանի Եզնիկ Կողբացի փողոցի թիվ 41 շենքի բնակիչների դիմում-բողոքը՝ դեռևս 18.06.2008թ. Մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանի Հանրապետության վարչապետին հասցեագրել է թիվ 2-0193 նամակը, որով բարձրացրել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գույքային իրավունքներ ունեցող անձանց կողմից տասնյակ տարիներ օգտագործվող շենք-շինությունների օրինականացման խնդիրը /2008թ. տարեկան զեկույց բաժին 2.2.3./:

Նշվել է, որ ՀՀ կառավարության 20.12.2007թ. N 1529-Ա որոշումը, որով թույլատրել է Երևանի քաղաքապետին սահմանված կարգով հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ենթակա տարածքներում սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող անհատական բնակելի տներին կից, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը զավթված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը և (կամ) զավթված հողամասերի վրա ինքնակամ կառույցներն օտարել այդ քաղաքացիներին, թերի է: Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ենթակա տարածքներում առկա են նաև բազմաբնակարան շենքեր, որոնցում բնակվող բնակիչները բնակարանային պայմանները բարելավելու նպատակով տարիների ընթացքում բնակարաններին կից նույնպես ինքնակամ կառուցել են պատշգամբներ, խոհանոցներ և այլ շինություններ:

Վերոգրյալից ելնելով՝ առաջարկվել է քննարկել հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ենթակա տարածքներում գտնվող **բազմաբնակարան բնակելի շենքերի** բնակիչներին նույն հնարավորությունն ընձեռելու հարցը և ՀՀ կառավարության 20.12.2007թ. N 1529-Ա որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Արդյունքում շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1529-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծով առաջարկվել է ՀՀ կառավարության հիշյալ որոշման 1-ին կետը լրացնել «բ» ենթակետով, որով լուծում կտրվեր օտարման ենթակա տարածքներում գտնվող նաև **բազմաբնակարան բնակելի շենքերի** բնակիչների ինքնակամ իրականացրած շինությունները այդ բնակիչներին օտարելու հարցին:

Շրջանառվող նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության 25.09.2008թ. Ե4124 գրությամբ տրված պետական փորձագիտական եզրակացության

համաձայն՝ հարցը կարգավորվում է «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» հ. 912-Ն որոշմամբ: Ուստի, ըստ արդարադատության նախարարության, որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա: Նշված դիտողությունը հաշվի առնելով նախագիծը հանվել է շրջանառությունից:

Չհամաձայնելով ՀՀ արդարադատության նախարարի դիրքորոշման հետ՝ Պաշտպանը 21.04.2009թ. ՀՀ վարչապետին հասցեագրած գրությամբ հայտնել է, որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով քաղաքացիներին իրավունք է տրվում օրինականացնել այն անհատական բնակելի տները և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը:

Նույն օրենքի 2-րդ հոդվածը կարգավորում է քաղաքացիներին պատկանող՝ բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող՝ մինչև 300 քառակուսի մետր սահմանազատված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի և (կամ) դրանց վրա կառուցված բնակելի տների և (կամ) բնակելի նշանակության օժանդակ շինությունների օրինականացման հետ կապված հարաբերությունները:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով չի կարգավորվում բազմաբնակարան շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների սեփականատերերի կողմից բազմաբնակարան շենքի ծավալից դուրս, շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի սահմաններում կամ այդ սահմաններից դուրս բնակարանին, ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ կառույցների և դրանցով ծանրաբեռնված հողամասի օրինականացման հետ կապված հարաբերությունները, ինչը նշվում է նաև Երևանի քաղաքապետարանի կողմից քաղաքացիներին տրված գրավոր մերժումներում: Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի հ. 912-Ն որոշմանը, ապա նշված որոշման 25-րդ կետով նախատեսված կառույցների օրինականացման համար նախատեսված են վճարներ, մինչդեռ ՀՀ կառավարության 2007թ.

դեկտեմբերի 20-ի թիվ 1529-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետին թույլատրվել է այդպիսի կառույցները նվիրատվությամբ օտարել քաղաքացիներին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը գտել է, որ նմանատիպ կարգավիճակում գտնվող բնակիչների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելը կարող է դիտվել խտրական մոտեցում, և առաջարկվել է հանձնարարել ևս մեկ անգամ ուսումնասիրել հարցն ու ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1529-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

ՀՀ կառավարության 01.06.2009թ. հանձնարարականով նամակին պատասխանել է ՀՀ արդարադատության նախարարը՝ ըստ էության պնդելով իր նախկին դիրքորոշումը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը՝ 06.07.2009թ. Երևանի քաղաքապետին հասցեագրած գրությամբ Պաշտպանը խնդրել է «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի շրջանակներում քննարկել սեփականության օտարման ենթակա տարածքներում առկա բազմաբնակարան բնակելի շենքերին կից քաղաքացիների կողմից կառուցված շենքերի, շինությունների, դրանցով ծանրաբեռնված հողամասերի անհատույց սեփականաշնորհման հարցը:

Երևանի քաղաքապետը 31.07.2009թ. նամակով հայտնել է, որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը վերաբերվում է անհատական բնակելի տներին և չի կարող կարգավորել բազմաբնակարան շենքերին կից ինքնակամ կառույցների տնօրինման հարցը: Քաղաքացիների համապատասխան հայտերի առկայության դեպքում հարցը կարող է քննարկվել ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման շրջանակներում:

Փաստորեն, միևնույն հարաբերությունների իրավական կարգավորվածության վերաբերյալ առկա են պետական մարմինների տարբեր մեկնաբանություններ, ինչը վկայում է հարցի լրացուցիչ քննարկման անհրաժեշտության մասին:

Հարցը գտնվում է Պաշտպանի ուշադրության ներքո:

Գյումրի քաղաքի Իսահակյան փողոցի թիվ 9 շենքի բնակիչները դեռևս 2006 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել են, որ 1924թ. կառուցված իրենց շենքը մինչև 1988 թվականի երկրաշարժն ունեցել է 4-րդ կարգի վթարայնության աստիճան, ոչ մի անգամ չի վերանորոգվել, իսկ 1988թ.-ի սկզբին կանգնեցվել է ամրացման, սակայն երկրաշարժից հետո այդ աշխատանքները անավարտ են մնացել:

Անմխիթար վիճակում են գտնվում նաև շենքի տանիքը, սանհանգույցը, կոյուղին և սանիտարահիգիենիկ վիճակը: Դիմումի քննարկման ընթացքում 2006 թվականից սկսած պարզաբանումներ են պահանջվել ՀՀ Շիրակի մարզպետից:

Մարզպետը 2006-2008թթ. ներկայացրած պարզաբանումներով հայտնել է, որ հիշյալ բնակելի շենքը ամրացման-վերականգնման աշխատանքների իրականացման համար յուրաքանչյուր տարի ընդգրկվել է միջնաժամկետ ծախսային ծրագրերում, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարություն: Սակայն աշխատանքների իրականացումն ամեն տարի հետաձգվել է:

Խնդրի կապակցությամբ Պաշտպանի մեկ այլ գրությանն ի պատասխան՝ Շիրակի մարզպետը 24.05.2009թ. նամակով պարզաբանել է, որ Գյումրի քաղաքում առկա՝ 101 երրորդ և չորրորդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի թվում առավել վթարային վիճակում են գտնվում թվով 10 բնակելի շենքեր /այդ թվում նաև Գյումրի քաղաքի Իսահակյան թիվ 9 բնակելի շենքը/: Շիրակի մարզպետարանի կողմից այդ շենքերը շարունակաբար ընդգրկվել են ՄԺԾԾ-ի հայտերում և ներկայացվել համապատասխան պետական կառավարման լիազոր մարմին: Հարցի վերաբերյալ վերջին անգամ մարզպետարանը 09.02.2009թ. դիմել է ՀՀ փոխվարչապետին:

Միևնույն ժամանակ տեղեկացրել է, որ այժմ մարզում իրականացվում են միայն երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրեր, իսկ ամրացման-վերականգնման խնդիրներին /որոնք առկա են նաև Հանրապետության այլ մարզերում/ լուծում տալու նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարությունում մշակվում է համապատասխան համապետական ծրագիր:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ հարցին լուծում տալու ակնկալիքով Պաշտպանը 04.11.2009թ. նամակով դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետին:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ ՀՀ տարբեր մարզեր կատարած այցելությունների ընթացքում թե՛ հասարակական կազմակերպությունները, թե՛ քաղաքացիները, դժգոհություններ են հայտնել ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի վերաբերյալ: Խնդիրն այն է, որ հանրապետության բոլոր մարզերում և համայնքներում առկա ինքնակամ շինությունների օրինականացման համար սահմանվել է միևնույն արժեքը: Մինչդեռ, մարզերում առկա կառույցների շուկայական արժեքն անհամեմատ ցածր է, քան Երևանում, ուստի արդարացի չէ կառույցների օրինականացման համար նույն գնի սահմանումը, հետևաբար վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգով

անհրաժեշտ էր տարբերակված մոտեցում ցուցաբերել մարզերում և Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գների նկատմամբ:

Հարցը քննարկման փուլում է:

Բողոքներ են եղել աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակվող անօթևան ընտանիքներից: Խնդիրն այն է, որ աղետի գոտու բնակավայրերում բնակարաններ արտահերթ ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման, նրանց հաշվառումից հանելու և այդ բնակարանները քաղաքացիներին անհատույց սեփականության իրավունքով հատկացնելու մասին ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի 432 որոշմամբ հաստատված կարգի (մինչև դրանում 11.09.08թ. թիվ 1024-Ն որոշմամբ կատարված փոփոխությունը) 2-րդ կետի համաձայն՝ բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեն այն քաղաքացիները և նրանց ընտանիքի անդամները, որոնց կացարանները (բնակարանը, բնակելի տունը, տան մի մասը) երկրաշարժի հետևանքով քանդվել կամ բնակվելու համար դարձել են ոչ պիտանի: 11.09.08թ. թիվ 1024-Ն որոշմամբ կատարված փոփոխությունից հետո Կարգի 2-րդ կետը խմբագրվել է հետևյալ կերպ. «Բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն քաղաքացիները և նրանց ընտանիքի անդամները, որոնց կացարանները (բազմաբնակարան շենքի բնակարանը) երկրաշարժի հետևանքով քանդվել կամ բնակվելու համար դարձել են ոչ պիտանի»:

Կարգի 4-րդ կետով նախատեսվել է, որ բնակարան ստանալու համար քաղաքացիները դիմում են ներկայացնում ըստ բնակության վայրի՝ համայնքի ղեկավարին: Դիմումի մեջ նշվում են ընտանիքի անդամների, այդ թվում՝ ժամանակավոր բացակայողների թիվը, ժամանակավոր բնակության հասցեն: Անհրաժեշտության դեպքում դիմումին կցվում է նաև տեղեկանք լրացուցիչ բնակտարածությունից օգտվելու իրավունքի մասին:

Գյուղական բնակավայրերի ղեկավարները վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգի համաձայն անօթևան մնացած ընտանիքներին հաշվառել են համապատասխան ցուցակներում:

Հետագայում ՀՀ կառավարությունը 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշմամբ հաստատել է «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթեւան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը»:

Կարգը, փաստորեն, պետք է լուծեր գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրները: Սակայն, ըստ վերոնշյալ կարգի, բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով քաղաքացիներից պահանջվում են այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն եղել

ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ, որի հիմքով քաղաքացիները հաշվառվել էին անօթևանների ցուցակներում:

Օրինակ՝ ՀՀ կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիները դիմումին կից պետք է ներկայացնեն 1988թ. դեկտեմբերի 7-ի դրությամբ ընտանիքի կազմի մասին քաղվածք՝ ծխամատյանից, ծխամատյանի բացակայության դեպքում՝ արխիվային տեղեկանք:

Խնդիրն այն է, որ շատ համայնքներում չեն պահպանվել վերոնշյալ փաստաթղթերը, որի հետևանքով քաղաքացիները զրկվում են բնակելի տուն ստանալու հնարավորությունից: Եղել են բողոքներ, երբ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկանք, որ քաղաքացին մինչև երկրաշարժը վարել է առանձին տնտեսություն, ունեցել է բնակելի տուն, որը կորցրել է երկրաշարժի հետևանքով, սակայն դա հաշվի չի առնվում՝ վերոնշյալ կարգի պահանջներին չհամապատասխանելու պատճառով:

Այսպիսով, ՀՀ կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1337-Ն որոշման ընդունումից հետո գյուղական բնակավայրերի բազմաթիվ քաղաքացիներ, ոչ իրենց մեղքով հանվել են անօթևանների հաշվառման ցուցակներից:

Ըստ ՀՀ Լոռու մարզպետարանի տրամադրած տեղեկատվության՝ մարզպետարանը ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետում փոփոխություն կատարելու առաջարկ է ներկայացրել ՀՀ կառավարություն այն նկատառումով, որ նախատեսվեն նաև այլ հիմքեր՝ համայնքի ավագանուն հնարավորություն ընձեռելով բնակելի տուն կորցրած քաղաքացիներին անօթևանների հերթացուցակում հաշվառելու հարցը քննարկելու և լուծելու համար:

3.2.1. Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների) դեմ ուղղված բողոքները վերաբերել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով ճանաչված իրավունքները չգրանցելուն, ժառանգության իրավունքների գրանցումները տարբեր պատճառաբանություններով մերժելուն, չափագրման ընթացքում թույլ տրվող սխալներին, իրավունքների գրանցման մերժումները պատշաճ չհիմնավորելուն և այլն:

Բողոքների մի մասը վերաբերել է առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում /հատկապես մարզերում/ և դրանից հետո քարտեզագրման արդյունքում կատարված՝ քաղաքացիներին պատկանող հողամասերի փաստաթղթային տեղի և դիրքի որոշակի փոփոխությունների պատճառով առաջացած անճշտություններին, որի հետևանքով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ու քաղաքացիների միջև առաջանում են վեճեր:

Քաղաքացիներից բողոքներ են ստացվել նաև խորհրդային տարիներին Հանրապետության տարբեր շրջաններում, ՀԽՍՀ մինիստրների խորհրդի տարբեր որոշումներով, կոլեկտիվ այգեգործության կազմակերպման նպատակով հատկացված հողամասերի սեփականության իրավունքների գրանցումները մերժելու վերաբերյալ: Խնդիրն այն է, որ համապատասխան որոշումների հիման վրա Երևանի նախագծային ինստիտուտների կողմից կազմվել են այգեգործական տարածքների կազմակերպման նախագծեր և որոշումների հետ տրամադրվել են շրջխորհուրդների գործկոմներին, որոնք հողամասեր են հատկացրել հիմնարկ ձեռնարկություններին: Վերջիններս էլ հողամասերը բաշխել են իրենց աշխատակիցներին: Որոշումներն ու նախագծերը տրամադրվել են նաև այգեգործական ընկերություններին: Պարզվել է, որ այն հողամասերի նկատմամբ, որոնք քաղաքացիների կողմից օգտագործվել, կառուցապատվել կամ քարտեզագրվել են որպես այգեգործական հողամասեր՝ քաղաքացիների սեփականության իրավունքները գրանցվել են: Այն հողամասերի մի մասը, որոնք քաղաքացիների կողմից չեն օգտագործվել, կառուցապատված կամ սահմանազատված չեն եղել, 1991-1993թթ. հողերի սեփականաշնորհման գործընթացի ժամանակ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովների կողմից սեփականաշնորհվել է քաղաքացիներին, իսկ մնացածը փոխանցվել է համայնքներին՝ որպես գյուղատնտեսական նշանակության հողամասեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նմանատիպ խնդիրներ կան Հանրապետության մարզերի մի շարք համայնքներում՝ Պաշտպանը դիմել է ոլորտի լիազոր մարմին:

Գրությանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի նախագահը հայտնել է, որ այգեգործական տարածքների ճշգրտման, դրանց բաժանման սխեմաների ձեռքբերման աշխատանքները շարունակվում են: Նշված աշխատանքներին զուգահեռ, հողերի նպատակային նշանակությունը փոխելու և այգեգործական ընկերություններին տրամադրելու նպատակով կազմվում են հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ, այն համայնքներում, որտեղ նախկինում այգեգործության նպատակով հատկացված հողերն անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին: Նշվել է, որ արդեն

կազմվել են ՀՀ Կոտայքի մարզի 8 և Արագածոտնի մարզի 2 համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ, որոնք գտնվում են համաձայնեցման փուլում:

Միաժամանակ տեղեկացրել է, որ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է զբաղվի այգեգործության խնդիրների կարգավորմանն ուղղված օրենսդրական դաշտի ստեղծման հարցերով:

3.2.2. ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն

2009թ. նոյեմբերի 11-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ բանավոր, այնուհետև գրավոր ստացվել է դիմում-բողոք այն մասին, որ ՀՀ ԱԱԾ քննչական վարչության քննիչ Տ. Ս.-ն 2009թ. օգոստոսի 23-ին հեռախոսազանգով Կ. Հ.-ին հրավիրել է ՀՀ ԱԱԾ քննչական վարչություն հարցաքննության և վերցրել է նրա անձնագիրը, որից հետո 2009թ. նոյեմբերի 6-ին ծանուցագրով հրավիրել է ՀՀ ԱԱԾ քննչական վարչություն՝ որպես վկա ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված քրեական գործով:

Դիմումատուն հայտնել է նաև, որ 3-րդ կարգի հաշմանդամ է, վատառողջ, բազմիցս բուժում է ստացել նյարդային բաժանմունքում, ներկայումս նույնպես ունի դրա կարիքը, սակայն անձնագիր չունենալու պատճառով չի կարողանում պետական պատվերի շրջանակներում բուժում ստանալ:

Նշվածի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցը պարզաբանում ստանալու նպատակով հեռախոսազրույց է ունեցել ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետի տեղակալի հետ: Հեռախոսազրույցի ընթացքում Մ. Մ.-ը հայտնել է, որ Կ. Հ.-ի անձնագիրը քննիչի կողմից վերցվել է՝ նկատի ունենալով, որ հետագայում նրա կարգավիճակը կարող է փոխվել:

Նշենք, որ «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման 19-րդ կետի համաձայն՝ կասկածյալների, մեղադրյալների, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը կամ կալանքը, ինչպես նաև ազատազրկման դատապարտված անձանց անձնագրերը ժամանակավորապես վերցնում են հետաքննության կամ նախաքննության մարմինները կամ դատարանը, իսկ ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձանց անձնագրերը՝ զինկոմիսարիատները: Կասկածյալների և

մեղադրյալների անձնագրերը տերերին են վերադարձվում խափանման միջոցի վերացման դեպքում, ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձանց անձնագրերը՝ պատիժը կրելուց կամ ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո:

Կալանքի տակ չգտնվող կասկածյալներին և մեղադրյալներին հետաքննության կամ նախաքննության մարմիններն անձնագրի փոխարեն տալիս են անձը հաստատող փաստաթուղթ՝ առանց Հայաստանի Հանրապետությունից մեկնելու թույլտվության, որի ձևը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարությունը:

Արգելվում են անձնագիր վերցնելը (բացառությամբ 19-րդ կետում նշված դեպքերի), այլ անձանց հանձնելը և գրավ դնելը:

Մինչդեռ, ՀՀ ԱԱԾ քննչական վարչության քննիչը, խախտելով օրենսդրության պահանջը, վերցրել է քաղաքացու անձնագիրը այն դեպքում, երբ վերջինս հարուցված քրեական գործով հանդիսանում է որպես վկա: Օրենսդրության պահանջը խախտելը ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունը փորձում է արդարացնել հետագայում Կ. Հ.-ի կարգավիճակը փոխելու հանգամանքով:

Բերված օրինակը կարելի է դիտել որպես մարդու իրավունքների խախտման վերաբերյալ առավել ուշագրավ դեպք, քանզի դրա հետևանքով անձը զրկվել է նաև ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով նախատեսված բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից:

Բողոքը գտնվում է Պաշտպանի ուշադրության ներքո:

3.3. ՀՀ ոստիկանություն

Նախորդ տարվա համեմատ ՀՀ ոստիկանության համակարգի դեմ ուղղված դիմում-բողոքների թվի զգալի աճ է նկատվել, սակայն դրանց բովանդակությունը չի փոխվել: ՀՀ ոստիկանության աշխատակիցների գործողությունների (անգործության) ու որոշումների դեմ ուղղված դիմում-բողոքները վերաբերել են քաղաքացիներին ՀՀ ոստիկանության տարբեր բաժիններ անհիմն բերման ենթարկելուն և անազատության մեջ պահելուն, այդ ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից դրսևորված անմարդկային վերաբերմունքին և խոշտանգումներին, հանցագործությունների մասին հաղորդումներին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգով ընթացք չտալուն, որպես մեղադրյալ ներգրավված

անձանցից բռնությամբ և սպառնալիքի ազդեցությամբ ցուցմունքներ կորզելուն, քաղաքացու օրինական պահանջով անձնագիր չտրամադրելուն:

Մտահոգիչ է, որ հաշվետու տարում ոստիկանության աշխատակիցների կողմից խոշտանգումների վերաբերյալ դիմում-բողոքների թիվն ավելացել է, իսկ քաղաքացիների դժգոհություններն էլ ավելի են խորացել, քանի որ նշված մարմինների գործունեության նկատմամբ հսկողությունը ոչ պատշաճ է իրականացվում:

Պրակտիկան ցույց է տալիս, որ անձանց ծեծի ենթարկելը, բռնությունն ու խոշտանգումները կիրառվում են հիմնականում ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով: Եղել են նաև դեպքեր, երբ Պաշտպանի ներկայացուցիչները այցելել են Ոստիկանության բաժին, որտեղ հայտնաբերել են կապտուկներով և մարմնի վրա խոշտանգման հետքերով քաղաքացիներ: Օրինակ, Պաշտպանի աշխատակազմ հասցեագրած բողոքի հետքերով ՀՀ ոստիկանության բաժին կատարած այցելության ժամանակ Պաշտպանի ներկայացուցիչների հետ հանդիպման պահին քաղաքացու քթից արյուն է հոսել:

Նմանատիպ դեպքերով բերման ենթարկված բոլոր քաղաքացիների նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի հատկանիշներով:

Եղել են նաև դեպքեր, երբ ծեծի ենթարկելու, բռնության և խոշտանգման դեպքերը շարունակվել են նաև հենց Ոստիկանության բաժնում:

Ընդունենք, որ խոշտանգումների վերաբերյալ դիմում-բողոքներով քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնմանը հասնելը մեր իրականության մեջ գրեթե անհնար է: Քաղաքացիների ներկայացրած փաստերը՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց նկատմամբ բռնությունների և խոշտանգումների դրսևորման վերաբերյալ, ՀՀ ոստիկանությունը մշտապես համարում է իրականությանը չհամապատասխանող և անհիմն, իսկ այդ կապակցությամբ Պաշտպանի կատարած հարցումներին ներկայացնում է հետևյալ բովանդակությամբ պատասխաններ. «***ՀՀ ոստիկանության շտաբի կողմից կատարված ստուգմամբ պարզվել է, որ գրությունում նշված հանգամանքները իրականությանը չեն համապատասխանում***» կամ «***ՀՀ ոստիկանությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացու նկատմամբ բռնության գործադրելու հանգամանքներ չեն հաստատվել***»:

Ցավով պետք է արձանագրել, որ նման երևույթներն արդեն արատավոր պրակտիկա են դարձել մեր իրավապահ համակարգում, իսկ տիրող անպատժելիության մթնոլորտը հանգեցնում է նմանատիպ դեպքերի աճին:

ՀՀ ոստիկանության դեմ բողոքները վերաբերել են նաև այն հանգամանքին, որ ոստիկանության բաժինները հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներ ստանալու

դեպքում ՀՀ քր. դատ օր-ի 181-րդ հոդվածով նախատեսված պահանջներով չեն ղեկավարվել: Նման դեպքերում որոշում կայացնելու փոխարեն նրանք բավարարվել են միայն նշված հաղորդումները իրենց կողմից, այսպես կոչված, երկրորդ մատյանում հաշվառելով:

Ոստիկանության բաժինների ղեկավարների կողմից հղում է կատարվում ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/354 հրամանին, ըստ որի՝ հաղորդումները, պատահարները ..... հաշվառվում են ոստիկանության գրասենյակում մուտքի գրանցման մատյանում, զեկուցվում է բաժանմունքի պետին, այնուհետև գրանցվում հերթապահ մասի թիվ 2-րդ ստուգված տեղեկությունների հաշվառման մատյանում:

Պետք է նշել, որ ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/354 հրամանը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից:

Վերոգրյալի կապակցությամբ առաջարկ է արվել ՀՀ ոստիկանապետին քննարկել ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/354 հրամանի գործողությունը դադարեցնելու նպատակահարմարության հարցը, և ստացվել է հետևյալ պատասխանը. «Երևան քաղաքի վարչությանը, մարզային վարչություններին և նրանց ենթակա բաժիններին ցուցում է տրվել հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ընթացքում ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի պահանջներով: 1999թ. թիվ 12/354 համատեղ հրամանը ենթակա ստորաբաժանումների կողմից կիրառվելու է այնքանով, որքանով այն չի հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին»:

Չնայած ոստիկանության պետի վերը նշված ցուցումի, որոշ դեպքերում ոստիկանության աշխատակիցների կողմից, այնուամենայնիվ, խախտվել է քրեական դատավարության օրենսգրքի պահանջը և միայն Պաշտպանի միջամտության արդյունքում նրանց նկատմամբ նշանակվել են ծառայողական քննություններ: Այս փաստը կարելի է դիտարկել որպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ ոստիկանության փոխհարաբերությունների դրական տեղաշարժ՝ հաշվի առնելով նաև, որ նշանակված ծառայողական քննությունների արդյունքներով ոստիկանության տարբեր բաժինների մի քանի աշխատակիցներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, ինչը չի փաստվել նախորդ տարիներին:

Մի շարք բողոքներ էլ ուղղված են եղել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, ինչպես նաև անձնագրային բաժինների ու դրանց աշխատակիցների գործողությունների (անգործության) դեմ: Բողոքները հիմնականում վերաբերել են քաղաքացու օրինական պահանջով անձնագիր չտրամադրելուն՝ պատճառաբանելով մշտական

բնակության վայր չունենալու կամ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսանալու հանգամանքները:

Որոշ դիմումներով էլ քաղաքացիները խնդրել են Պաշտպանի միջամտությունը իրենց նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռները վերանայելու համար: Նման դեպքերում Պաշտպանի որոշմամբ դիմողին պարզաբանվել է իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները:

Հատկանշական է, որ վերջին ժամանակները Պաշտպանին հասցեագրվում են նաև դիմում-բողոքներ՝ ՀՀ ճանապարհային ոստիկանության աշխատակիցների կողմից կատարվող ոչ իրավաչափ գործողությունների /անգործության/ վերաբերյալ: Սակայն, խախտման փաստերը չեն հիմնավորվում:

Հանցագործության մասին հաղորդումների, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացվող ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ Պաշտպանին հասցեագրած մի շարք բողոքներ էլ փոխանցվել են ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության, ՀՀ հատուկ քննչական ծառայության և ոստիկանության քննարկմանը:

Պետք է նշել, որ փոխանցված գործերով դատախազությունից, ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունից, ՀՀ հատուկ քննչական ծառայությունից, ՀՀ ոստիկանությունից պատասխանները, որպես կանոն, ստացվել են ողջամիտ ժամկետում և քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի քննարկման արդյունք են հանդիսացել:

Հասարակության ուշադրության ներքո գտնվող գործ

Ուշագրավ է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Էրեբունու քննչական բաժնի կողմից հարուցված քրեական գործով մեղադրյալ Մ.Ս-ի գործը, ինչի վերաբերյալ հրապարակումներ են եղել նաև մամուլում և ինտերնետային կայքէջերում:

Այսպես, քաղաքացի Հ. Ս.-ն և մյուսները հայտնել են, որ որպես կամավորներ 2008թ. ապրիլ-հունիս ամիսներին մասնակցել են ՄԱԿ-ի կողմից հովանավորվող «10 լավագույն դպրոցներ» ծրագրին, որում ընդգրկված է եղել նաև Նուբարաշենի թիվ 11 հատուկ կրթահամալիրը: Հայտնել են, որ բազմաթիվ դասընթացներ են անցկացրել դպրոցի աշակերտների հետ, որի արդյունքում պարզել են, որ կրթահամալիրում կրթության որակը խիստ ցածր է,

սնունդը, սանիտարահիգիենիկ պայմանները վատ են, իսկ դպրոցի բարձր դասարանի աղջիկներից լսել են, որ կրթահամալիրի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Լ. Ա.-ն վերջիններին նկատմամբ սեռական ոտնձգություններ է կատարել:

Դիմումատուները հայտնել են, որ Էրեբունու քննչական բաժին ստացվել է Նուբարաշենի թիվ 11 հատուկ կրթահամալիրի ուսուցիչ Լ. Ա.-ի կողմից անառակաբարո գործողություններ կատարելու վերաբերյալ «Հ1»-ի «Հայլուր» լրատվական ծրագրով հեռարձակված հաղորդման լազերային սկավառակը, որից ստացված տվյալների կապակցությամբ նյութեր են նախապատրաստվել: Քրեական գործ է հարուցվել 2008թ. փետրվարի 11-ին, սակայն գործի հարուցումից շուրջ վեց ամիս անց մեղադրանք է առաջադրվել իրենց կամավորական խմբի անդամ և հասարակական գործիչ Մ. Ս.-ին՝ շահադիտական դրդումներով սուտ մատնություն տալու համար: Օգոստոսի 15-ին Մ. Ս.-ի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, որպես խափանման միջոց նրա նկատմամբ կիրառվել է չհեռանալու մասին ստորագրություն:

Մեր գրություններին ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Պ.Սարգսյանը հայտնել է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժին ստացված լազերային սկավառակի վերարտադրության ընթացքում պարզվել է, որ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի բնակչուհի՝ Նուբարաշենի թիվ 11 հատուկ կրթահամալիրի սան՝ 18.11.1992թ. ծնված, Դ.Ա.-ը հարցազրույցի ընթացքում հայտնել է, որ նշված ուսումնական հաստատությունում սովորելու ընթացքում հայոց լեզվի ուսուցիչ Լ. Ա.-ն բռնաբարել է կրթահամալիրի սան Դ.Ա.-ին, իսկ իր, Ա. Պ.-ի, Մ. Շ.-ի և Մ. Դ.-ի նկատմամբ անառակաբարո գործողություններ է կատարել, ինչի մասին պատմել է քրոջը՝ նույն կրթահամալիրի սան, Լ. Ա.-ին, և մորը՝ Ն. Ա.-ին: Այդ մասին տեղեկանալուց հետո մայրը մի քանի անգամ այցելել է կրթահամալիր, սակայն տնօրենին չի կարողացել հանդիպել: Սակայն նյութերի նախապատրաստման ընթացքում, Դ.Ա.-ն, ի հակառակ հարցազրույցի ընթացքում հայտնած իր տեղեկությունների, բացատրություն է տվել այն մասին, որ ինչպես իր, այնպես էլ հարցազրույցի ժամանակ կրթահամալիրի իր նշած սաների նկատմամբ ուսուցիչ Լ.Ա.-ի կամ մեկ ուրիշի կողմից բռնություններ չեն գործադրվել, անառակաբարո գործողություններ չեն կատարվել:

Կրթահամալիրի տնօրեն Մ.Ե.-ն հայտնել է, որ ծրագրի իրականացման սկզբնական փուլում Մ.Ս.-ն իրենից պահանջել է ծրագրի իրականացման համար նախատեսված և դպրոցի հաշվեհամարին փոխանցված 1մլն. դրամը կանխիկացնել և տրամադրել իրեն՝ ծրագրով նախատեսված միջոցառումների ծախսերն անձամբ կատարելու համար, սակայն տնօրենն այդ պահանջը չի կատարել: Գումարն իրեն կանխիկ չտրամադրելու պատճառով,

Մ.Ս.-ն սկսել է տարածել կեղծ տեղեկատվություն դպրոցի վերաբերյալ: Բացի այդ, 2008թ. մայիս ամսվա ընթացքում իրենց ձեռքն է ընկել Ա.Ղ.-ի և կրթահամալիրի սաներ Դ. և Լ. Ա.-ների գրկախառնված լուսանկարները, որի կապակցությամբ դիտողություններ են կատարել ծրագրի ղեկավար Մ.Ս.-ին, ապա՝ արգելել են Ա.Ղ.-ին կրթահամալիր այցելել: Դրանից հետո տեղեկացել են, որ վերջինս լուրեր է տարածել, թե ամեն ինչի դիմելու է՝ վերը նշվածի կապակցությամբ Մ.Ե.-ից և Լ.Ա.-ից վրեժ լուծելու համար: Մ.Ե.-ն և մյուսները տեսաձայնագրությունը մեկնաբանել են որպես Մ.Ս.-ի և մյուսների կողմից վրեժխնդրության դրսևորում:

Հայտնվել է, որ 01.09.2009թ. «Հրապարակ» օրաթերթում հրատարակվել է «Էլի մեկ զոհ» վերտառությամբ հոդված, որտեղ Նուբարաշեն թիվ 11 հատուկ կրթահամալիրի 1990թ. շրջանավարտներ Մ. Ժ.-ը և Լ. Ա.-ը պատմել են ուսումնառության ընթացքում կրթահամալիրի տնօրենի և ուսուցիչ Լ. Ա.-ի կողմից իրենց նկատմամբ իրականացված բռնությունների և ոտնձգությունների մասին:

19.10.2009թ. որոշում է կայացվել Մ. Ե.-ի և Լ. Ա.-ի նկատմամբ հանցադեպի բացակայության հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

21.10.2009թ. քրեական գործի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազ Դ. Գ.-ի ցուցումով Մ. Ս.-ին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և որոշում է կայացվել վերջինիս ՀՀ քր. օր-ի 135 հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: 21.10.2009թ. Մ.Ս.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր-ի 135 հոդվածի 1-ին մասով, վերջինս իրեն մեղավոր չի ճանաչել, միաժամանակ առարկել է, որ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադրեցվի համաներման հիմքով:

21.10.2009թ. Մ. Ս.-ին հայտնվել է նախաքննության ավարտի մասին, վերջինս քրեական գործի նյութերին ծանոթանալու համար 23.10.2009թ. հրավիրվել է քննչական բաժին: Գործը գտնվում է Պաշտպանի ուշադրության ներքո:

3.4. ՀՀ դատախազություն

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն. «Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ»:

Պետք է նշել, որ դատախազության մարմինների հսկողության թերացման հետևանքով է նաև, որ առ այսօր ոստիկանության բաժինները հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներ ստանալու դեպքում ՀՀ քր. դատ օր-ի 181-րդ հոդվածով նախատեսված պահանջներով չեն ղեկավարվում:

ՀՀ դատախազության դեմ բերված բողոքները հիմնականում վերաբերել են քրեական գործերի նախաքննության ընթացքում քննչական և այլ դատավարական գործողությունները օրենքի պահանջների խախտումներով կատարելուն, գործով ձեռք բերված ապացույցները բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման չենթարկելուն, օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները գործով մեղադրանքի հիմքում դնելուն, ինչպես նաև նշված գործունեության օրինականության նկատմամբ ոչ պատշաճ դատախազական հսկողություն իրականացնելուն:

Ինչպես արդեն նշել ենք, Պաշտպանի ներկայացուցիչների՝ ՀՀ ոստիկանության մի շարք բաժիններ կատարած այցելությամբ պարզվել է, որ անձինք ոստիկանության բաժին բերման ենթարկվելուց, ձերբակալվելուց, իսկ այնուհետև՝ կալանավորվելուց հետո օրենքով սահմանված ժամկետից ավել են պահվում ոստիկանության համապատասխան բաժնի ձերբակալվածների պահման վայրերում: Ոստիկանության աշխատակիցներն այս երևույթը հիմնավորում են *մարզի /վարչական շրջանի/ դատախազների գրավոր ցուցումներով*՝ դրանով իսկ խախտելով ինչպես ՀՀ քր. դատ. օր.-ի 137-րդ հոդվածի, այնպես էլ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

Մեր ուսումնասիրությամբ պարզվել է, որ մարզի /վարչական շրջանի/ դատախազի համապատասխան գրություններով կալանավորին ձերբակալվածների պահման վայրում պահելը հիմնավորվվել է ոչ թե այս կամ այն իրավական հիմքերով, այլ կամայական վարքագծի հիմք համարվող ձևակերպմամբ՝ «***մի շարք քննչական գործողություններ կատարելու նպատակով ՃՊՎ-ում պահել տվյալ կալանավորված անձին»***:

Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վերը նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանը պաշտոնական գրություններ է հասցեագրել ՀՀ ոստիկանության պետին և ՀՀ գլխավոր դատախազին: ՀՀ ոստիկանության պետի տեղակալը նշվածի վերաբերյալ հայտնել է. «ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՃՊՎ-ներում դատավորների, դատախազների և քննիչների գրությունների համաձայն օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ կալանավորված անձանց պահելու

արատավոր պրակտիկան բացառելու նպատակով ՀՀ ոստիկանության պետի 29.01.2009թ. թիվ 2-Ց ցուցումով ոստիկանության իրավասու ծառայություններին հանձնարարվել է ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում կալանավորված անձանց պահելիս խստագույնս առաջնորդվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի պահանջներով»:

Իսկ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը հայտնել է, որ հետագայում նման բնույթի խախտումները բացառելու նպատակով ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և վարչական շրջանների դատախազներին հանձնարարվել է ուժեղացնել հսկողությունը ՁՊՎ-ներում կալանավորված անձանց պահելու օրինականության նկատմամբ:

Հարկ է նշել, որ չնայած նրան, որ առկա են հանձնարարականներն ու ցուցումները, սակայն, առ այսօր ՀՀ ոստիկանության աշխատակիցները շարունակում են այդ արատավոր պրակտիկան, ինչը մեր կողմից գնահատվում է որպես Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դատավարական հսկողության թերի կամ ոչ պատշաճ իրականացում:

3.5. ՀՀ հատուկ քննչական ծառայություն

Հատուկ քննչական ծառայության գործունեությունը /անգործությունը/ մեր կողմից հիմնականում դիտարկվել է ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից անձանց բերման ենթարկելու ընթացքում, ինչպես նաև ոստիկանության բաժիններում ծեծի և խոշտանգման դեպքերի վերաբերյալ դիմում-բողոքների ուսումնասիրության կապակցությամբ: Այդ առթիվ Պաշտպանի կատարած բոլոր հարցումներին ի պատասխան՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը ներկայացրել է հետևյալ պատասխանը. «Ուսումնասիրությամբ պարզվել է, որ դիմումատուի պնդումներն այն մասին, որ ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել է ծեծի, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, հիմքից զուրկ են, չեն համապատասխանում իրականությանը և քրեական պատասխանատվությունից ազատվելու նպատակ են հետապնդում»:

Ավելին, հատուկ քննչական ծառայությունը բավարարվել է միայն ոստիկանության աշխատակիցներից բացատրություններ վերցնելով առ այն, որ մեր նշած փաստերը իրականությանը չեն համապատասխանում: Նշել է նաև, որ իրենք կատարել են առերես հարցաքննություններ, որի ընթացքում ոստիկանության աշխատակիցները նույնը պնդել են դիմում-բողոք ներկայացրած քաղաքացիներին:

Նշված դեպքերի կապակցությամբ մեր գրությանը կից ներկայացվել են նաև լուսանկարներ, որոնք արտացոլում են քաղաքացիների մարմնի վրա առկա խոշտանգման հետքերը և մարմնի կապտուկները:

Շատ քաղաքացիներ ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են ծեծի, բռնության, խոշտանգումների, իսկ ոստիկանությունը, պատասխանատվությունից խուսափելու նպատակով, առանց բավարար հիմքերի մեղադրանք է առաջադրել արդեն գործով տուժող անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի հատկանիշներով, ինչն էլ հետագայում հիմք է հանդիսանում ընդհանուր համաձայնության գալու համար, այն է՝ քաղաքացու նկատմամբ քրեական հետապնդումը կդադարեցվի, եթե վերջինս հերքի ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ կատարված բռնությունների փաստը:

Այդպիսով, ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից կատարված քննությամբ չի հիմնավորվում ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ բռնի և հակաօրինական գործողություններ կատարելու հանգամանքը (տուժողների հետագայում իրենց ցուցմունքները փոխելու հետևանքով): Արդյունքում որոշում է կայացվում քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Այստեղ նույնպես ականատես ենք դառնում իրավապահ համակարգի անպատժելիության մթնոլորտին և դրա անբարենպաստ հետևանքներին:

3.6. Դատական պրակտիկայի դիտարկում (մոնիտորինգ)

2009 թվականի ընթացքում դատական նիստերի դիտարկումները վերհանել են իրավակիրառ պրակտիկայի և օրենսդրական բացթողումներ: Այդ թերությունների շտկումը, կարծում ենք, կբերի դատարանների հանդեպ հասարակության վստահության բարձրացմանը:

3.6.1. Օրենսդրական թերությունների ազդեցությունը արդար դատաքննության իրականացման արդյունավետության վրա

Դատական նիստերից մեկի ժամանակ Պաշտպանը միջնորդություն ներկայացրեց դատարանին՝ նիստը ընդմիջելու մեկ ժամով և հնարավորություն ընձեռելու առանձնազրույց ունենալ պաշտպանյալի հետ: Դատարանը պարզաբանեց, որ առանձնազրույց ունենալը ապահովում է այն ՔԿՀ-ն, որտեղ պահվում է մեղադրյալը, իսկ դատարանը չունի այդ

նպատակին համապատասխան սենյակ և առաջարկեց դիմել ՔԿՀ ղեկավարությանը: Պաշտպանը պնդեց, որ կարիք է առաջացել առանձնազրույց ունենալ պաշտպանյալի հետ և կրկին անգամ խնդրեց ընձեռել այդ հնարավորությունը: Դատարանը, հարգելով պաշտպանի և նրա պաշտպանյալի միջնորդությունը, դատական նիստը հետաձգեց մինչև հաջորդ օրը՝ հնարավորություն տալով պաշտպանին այդ ժամանակամիջոցում դիմել համապատասխան ՔԿՀ ղեկավարությանը և առանձնատեսակցություն ունենալ մեղադրյալի հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է, որ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է պաշտպանին և օրինական ներկայացուցչին անարգել թույլատրել ներկայանալ կալանավորված անձին, ապահովել նրանց առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) տեսակցելու հնարավորությունը՝ առանց դրանց թվի և տևողության սահմանափակման:

Օրենսդրությամբ կարգավորված չէ դատարանի շենքում առանձնատեսակցության կամ առանձնազրույցի կազմակերպումը: Դատարանի շենքում առանձնատեսակցություն ունենալու հնարավորության բացակայությունը կարող է ազդել դատաքննության իրականացման ժամկետների վրա, եթե դատարանը ստիպված լինի պաշտպանի կամ պաշտպանյալի միջնորդությունը բավարարել և նրանց առանձնազրույցի համար դատական նիստը հետաձգել: Մեր կարծիքով, այս խնդրի լուծումը տեխնիկական է, եթե համապատասխան սենյակ առանձնացվի և օրենսդրորեն ամրագրվի նաև դատարանի շենքում առնաձնազրույց ունենալու հնարավորությունը:

Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ չնայած դատահիրավական բարեփոխումների ընթացքում դատարանների շատ շենքեր վերակառուցվեցին կամ նորերը կառուցվեցին, դրանցից որոշները չունեն վկաների համար նախատեսված սպասասրահներ: Այս պայմաններում վկաները ստիպված են լինում մինչև դատաքննությունը սկսվելը կամ դատական նիստերի ընդմիջումների ժամանակ սպասել դատարանի միջանցքներում: Նույն միջանցքներում են սպասում նաև պետական մեղադրողները և պաշտպանները, իսկ վկաների հետ դատավարության կողմերի կամա թե ակամա յուրաքանչյուր շփումը կասկած է առաջացնում դատավարության անաչառության նկատմամբ:

Այս հանգամանքը կարող է պատճառ հանդիսանալ արդարադատության նկատմամբ վստահության անկմանը, ինչպես նաև դատաքննության ընթացքում կարող է վկաների պահման կամ մեկը մյուսից մեկուսացնելու վերաբերյալ տարատեսակ միջնորդությունների ու հայտարարությունների առիթ հանդիսանալ, որն էլ իր հերթին դատաքննության ձգձգման պատճառ կարող է դառնալ:

3.6.2. Գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու օրենսդրական դրույթի վերաբերյալ

Մեր կողմից ուշադրության է արժանացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309[1]-րդ հոդվածի իրավակիրառ պրակտիկան: Ըստ բողոքների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309[1]-րդ հոդվածը քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու քողարկված հնարավորություն է տալիս և կրկնում է նույն օրենսգրքի 311-րդ հոդվածը, որը ՀՀ սահմանադրական դատարանը դեռևս 2007թ. հուլիսի 24-ի որոշմամբ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող և անվավեր էր ճանաչել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Դատարանը գործը ուղարկում է լրացուցիչ քննության՝ մեղադրողի միջնորդությամբ, երբ առկա են մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309[1]-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, եւ եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը»:

Փաստորեն, Սահմանադրական դատարանի որոշմամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված դրույթները կրկին կյանքի են կոչվել օրենսդրական նոր փոփոխության՝ 309[1]-րդ հոդվածի ամրագրման միջոցով: Ի դեպ, հիշյալ հոդվածի 5-րդ մասի ձևակերպումն իր հերթին ամբողջովին հակասում է քրեական դատավարությունում մրցակցության սկզբունքին՝ սահմանելով. «Եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերաորակելու որոշում չի կայացնում կամ վերաորակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա դատարանն իր

նախաձեռնությամբ մինչեւ 10 օր ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը»:

Քրեադատավարական ոլորտում արդարադատության իրականացման ինկվիզիցիոն սկզբունքը մերժած և մրցակցության սկզբունքը որդեգրած օրենսդրության մեջ այս դրույթի ամրագրումն անտրամաբանական է: Այսպիսի դրույթի առկայությունը ոչ միայն հակասում է ՀՀ Սահմանադրությանը, այլև օրենսդրորեն ամրագրում է դատարանների կախվածությունը դատախազությունից:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ քրեական դատավարության 309[1]-րդ հոդվածի 2-րդ մասն էլ խախտում է իրավական որոշակիության սկզբունքը: Այն ամրագրում է. «Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ»:

Այս դրույթին համապատասխան դատարանի կողմից նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի քան մեկ ամսով, սակայն կարող են լինել բացառություններ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար և նիստը կարող է հետաձգվել ողջամտորեն պահանջված ավելի երկար ժակետով: Դատական նիստը հետաձգելու «ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ» պատճառաբանությունն իրավական անորոշությամբ ներառում է կոռուպցիոն ռիսկեր: Իսկ անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու վերաբերյալ փաստաբանների բողոքների ուսումնասիրությունները և հանդիպումների ընթացքում իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ քննարկումները թույլ են տալիս եզրահանգելու, որ խափանման միջոց ընտրելու հետ կապված պրակտիկան դեռևս հեռու է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի չափորոշիչներից:

3.6.3. Խափանման միջոց կալանքն ընտրելու կամ փոխելու վերաբերյալ իրավակիրառ պրակտիկան

Իրավակիրառ պրակտիկայում դատարանների կողմից չեն պահպանվում ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջները: Խափանման միջոց կիրառելու մասին

քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում (ՀՀ քր.դատ.օր.-ի 136-րդ հոդված):

Դատարանը քննարկելով որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ փոխելու մասին միջնորդությունները՝ պետք է հաշվի առնի ներկայացված փաստարկների հիմնավորվածությունը, որոնց շարքում են քննությունից թաքնվելը, քննությանը խոչընդոտելը, միջամտությունը արդարադատության իրականացմանը, նոր իրավախախտման կատարման ռիսկը, հասարակական կարգին սպառնացող ռիսկը (ՀՀ քր.դատ.օր.-ի 135-րդ հոդվածը):

Նշենք, որ դեռևս 2008 թ. տարեկան զեկույցում խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատական պրակտիկային կատարված անդրադարձը դեռ արդիական է: Դատարանները խափանման միջոց կալանքն ընտրելու հետ կապված միջնորդություններով որոշում կայացնելիս մեծամասամբ ուղղակիորեն հենվում են միջնորդությունը ներկայացրած քննիչի կամ դատախազի հիմնավորումների վրա, իսկ դրանք հիմնականում խափանման միջոց կիրառելու հիմքերի վերաբերյալ ՀՀ քր. դատ. օր. 135-րդ հոդվածից բառացի մեջբերումներ են՝ առանց հիմնավորումների: Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումները կայացնելիս դատարանները պետք է հաշվի առնեն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» կոնվենցիայով և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռներով[15] սահմանված չափորոշիչները:

3.6.4. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մեկնաբանությունները դատարանների կողմից

Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանում քննվող ըստ մեղադրանքի Ն. Փ.-ի քրեական գործով դատական նիստի ժամանակ, երբ նախագահող դատավորը հայտարարեց դատաքննության փուլ անցնելու մասին և դիմեց մեղադրողին հրապարակելու մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը, պետական մեղադրողը՝ Հ.Հ.-ն, առանց հարցնելու նախագահողի թույտվությունը, սկսեց կարդալ այն՝ տեղում նստած: Դրանից հետո պաշտպանական կողմը՝ ամբաստանյալը, հարց ուղղեց նախագահողին՝ թե

[15] Տես՝ օրինակ՝ Պացուրիան ընդդեմ Վրաստանի, Դոլգովան ընդդեմ Ռուսաստանի, Իլիկովն ընդդեմ Բուլղարիայի, Վ.-ն ընդդեմ Շվեյցարիայի, Պունգելտն ընդդեմ Չեխիայի Հանրապետության, Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի, Լավենտս ընդդեմ Լատվիայի, Նյումայստերն ընդդեմ Ավստրիայի, Ստոգմյուլլերն ընդդեմ Ավստրիայի, Լետելիերն ընդդեմ Ֆրանսիայի գործերը:

կարո՞ղ են իրենք նույնպես նստած վիճակում դիմել դատարանին: Նախագահող դատավորը պարզաբանեց, որ միայն նախագահողի թույտվությամբ կարելի է նստած վիճակում դիմել դատարանին: Դրանից հետո ամբաստանյալը փորձեց ճշգրտել. թու՞յլ էր տվել արդյոք դատարանը, որ մեղադրողը նստած կարդա մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը: Դատարանը պատասխանեց, որ տվյալ դեպքում մեղադրողը դատարանին չի դիմում, այլ պաշտպանական կողմի համար ընթերցում է մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը: Ամբաստանյալը նշեց, որ պաշտպանական կողմը ստացել է այդ փաստաթուղթը, տեղյակ է դրա բովանդակությանը, ուստի պաշտպանական կողմի համար այն ընթերցելու կարիք չկա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է դատարանում հրապարակել մեղադրական եզրակացությունը, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանում հանդես գալ ճառով և ռեպլիկով, իսկ Վճռաբեկ դատարանում՝ ներկա գտնվել նիստին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է. «Դատաքննության բոլոր մասնակիցները դատարանին դիմում են «Հարգելի դատարան» արտահայտությամբ, որից հետո ոտքի կանգնած անում են անհրաժեշտ հայտարարություններ, հարուցում են միջնորդություններ, բացարկներ: Դատարանին դիմելու կանոններից շեղում թույլատրվում է նախագահողի թույլտվությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 333-րդ հոդվածը սահմանում է. «Նախագահողը հայտարարում է, որ դատարանը անցնում է դատաքննությանը: Դատաքննությունը սկսվում է մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ»:

Փաստորեն վերը նշված հարցն օրենսդրորեն կարգավորված չէ, ուստի պետք է գործի 314-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, ըստ որի՝ դատարանին դիմելու կանոններից շեղում թույլատրվում է նախագահողի թույլտվությամբ: Միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ դատաքննության ընթացքում դատավորի վարքագիծը որևէ կերպ չպետք է կասկած հարուցի նրա անաչառության նկատմամբ:

3.6.5. Անվճար իրավաբանական օգնության տրամադրման հիմնախնդիրը

2008թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ սահմանադրական դատարանն ընդունեց թիվ ՍԴՈ-765 որոշումը, որով ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի, ինչպես

նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի մասով ճանաչել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Օրենսդրական փոփոխություններից հետո յուրաքանչյուր ոք կարող է դիմել ՀՀ վճռաբեկ դատարան ոչ թե հավատարմագրված փաստաբանի միջոցով, այլ՝ անմիջականորեն: Փաստորեն, օրենսդրորեն ապահովվեց յուրաքանչյուրի՝ դատական բարձրագույն ատյան դիմելու սահմանադրական իրավունքի իրականացումը:

Հատկանշական է, որ մի շարք դիմումներով քաղաքացիները բողոքում են քաղաքացիական և վարչական գործերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու անհնարինության հանգամանքից:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է փաստաբանական գործունեության վճարովիությունը, ինչպես նաև ամրագրված է, որ «Պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնություն քրեական գործերով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և հետեւյալ դեպքերում. 1) ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով. 2) խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով»:

Փաստորեն, անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու խիստ սահմանափակ ցանկը սոցիալապես անապահով շատ քաղաքացիների հնարավորություն չի տալիս դիմելու դատարան:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ կարգավորել **սոցիալապես անապահով անձանց** իրավաբանական օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանել այդպիսի օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը և դրա հետ կապված այլ առանձնահատկություններ:

3.6.6. Սեփականության իրավունքի պաշտպանությանն առնչվող խնդիրների վերաբերյալ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նախորդ տարեկան զեկույցներում անդրադարձել է բացառիկ՝ հանրային գերակա շահ ճանաչված տարածքների

սեփականատերերին շուկայական արժեքից ցածր փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ բողոքներին և սեփականության իրավունքի պաշտպանությանն առնչվող այլ խնդիրների:

Այդ տարեկան զեկույցներում նշվել է նման իրավիճակում հայտնված քաղաքացիների իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմների շահեկան առավելությունների մասին՝ պետության միջազգային հեղինակության և պետական բյուջեի պահպանման առումով:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը 2009թ. հունիսի 23-ին կայացրել է որոշում Մինասյանն ու Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով և գտել է, որ խախտվել է սեփականատիրոջ իրավունքը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի հիմքով:

Սա, փաստորեն, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կայացրած առաջին վճիռն է Երևան քաղաքում պետության և հասարակության կարիքների համար իրացման գոտում գտնվող սեփականության օտարման արդյունքում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ:

Այս գործով դիմողը բողոքել է, որ իրացման գոտում գնտվող իր տան նկատմամբ սեփականության իրավունքի դադարումը կատարվել է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտմամբ և պահանջել է խախտման ճանաչում, ինչպես նաև բարոյական և նյութական վնասի արդարացի փոխհատուցում:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը գտել է, որ դեռևս պատրաստ չէ արդարացի փոխհատուցման չափի վերաբերյալ հարցը որոշման կայացման համար: Նշել է՝ արդարացի փոխհատուցման տրամադրման հարցը պետք է լուծվի, իսկ դրա տրամադրման ընթացակարգը ամրագրվի Կառավարության և դիմողների միջև կայացած հնարավոր համաձայնության շնորհիվ: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը առաջարկել է ՀՀ կառավարությանը և դիմող կողմին որոշման ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում ներկայացնելու իրենց գրավոր դիտարկումները արդարացի փոխհատուցման վերաբերյալ:

Փաստորեն, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը կայացրել է որոշում, որով ճանաչել է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում և,

միաժամանակ, արդարացի փոխհատուցման հարցը թողել է լուծելու կողմերից ստացված համապատասխան առաջարկություններից հետո:[16]

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի այս վճռի լույսի ներքո առավել կարևորվում է նախնական համարժեք փոխհատուցման նշանակությունը բացառիկ՝ հանրային գերակա շահ ճանաչված տարածքների օտարման դեպքում:

ՀՀ կառավարությունը 26.06.2009թ. կայացրել է թիվ 944-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Հալիձորի գյուղական համայնքի քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին»: Հալիձոր գյուղական համայնքի բնակիչներն իրենց դժգոհությունն են արտահայտել նախնական համարժեք փոխհատուցման առումով և սեփականության իրավունքով դեռևս իրենց պատկանող հողամասերում սկսված հողաշինական աշխատանքների առումով:

2009թ. հոկտեմբերի 19-ին Պաշտպանն այս իրավիճակի վերաբերյալ հանդես է եկել հայտարարությամբ՝ ևս մեկ անգամ կարևորելով սեփականության իրավունքի խախտումները ներպետական միջոցներով վերացնելու անհրաժեշտությունը, նշելով, որ երբ ոտնահարված սեփականության իրավունքը վերականգնվում է միջազգային դատական ատյանի որոշմամբ, վնաս է հասցվում և՛ պետության հեղինակությանը, և՛ բյուջեին:

3.6.7. Փաստաբանների պաշտպանվածության վերաբերյալ

Արդար դատաքննության իրավունքի ապահովման, ինչպես նաև արդարադատության նկատմամբ հանրության վստահության բարձրացման առումով կարևոր նախապայման է կայացած փաստաբանությունը:

2008 թվականի զեկույցում Պաշտպանն անդրադարձել է փաստաբանների պաշտպանվածության խնդրին: Այդ զեկույցում մատնանշված խնդիրներից մեկը՝ առանց նիստը նախագահող դատավորի թույլտվության փաստաբանի կողմից դատական նիստերի դահլիճը լքելը, 2009թ. ընթացքում առավել քան արդիական է և հրատապ խնդիր է դարձել:

Այդ կապակցությամբ Պաշտպանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:[17]

---

[16] Նախորդ նմանատիպ գործով՝ սեփականության իրավունքի խախտման վերաբերյալ (Ճղլյանն ընդդեմ Հայաստանի), եվրոպական դատարանը գործը ըստ էության չէր քննել, քանի որ կողմերը հաշտության համաձայնությանություն էին կնքել:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ փաստաբանի կողմից դատավորին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելը կարող է ոչ միայն վրդովեցնել դատարանին, այլև առաջացնել դատարանի կողմից փաստաբանի նկատմամբ սանկցիա կիրառելու համար ՀՀ փաստաբանների պալատ դիմելու վերաբերյալ որոշում կայացնելու առիթ:

Օրինակ՝ 04.11.2009թ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում Լ. Գ.-ի նախագահությամբ տեղի ունեցած դատական նիստի ժամանակ փաստաբան Ռ. Ղ.-ի կողմից ներկայացվեց ինքնաբացարկի միջնորդություն այն հիմքով, որ նախագահող դատավորը դատական նիստից առաջ խոսել է պատասխանողի փաստաբանի հետ և նիստի ժամանակ փորձել է գործի քննությանը մասնակից դարձնել անձի, ով գործով որպես կողմ ընդգրկված չէ: Ինքնաբացարկի հիմնավորումները խիստ վրդովեցրին դատավորին, այնուամենայնիվ, ժամանակ տրամադրվեց ինքնաբացարկի միջնորդությունը գրավոր ներկայացնելու համար:

Մեկ այլ գործով 19.03.2009թ.-ին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում Ս. Ա.-ի նախագահությամբ տեղի ունեցած դատական նիստի ժամանակ փաստաբան Հ. Ե.-ի կողմից ընթերցվել է դատարանին ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդությունը, որից հետո դատարանը հետաձգել է դատական նիստի քննությունը մինչև 23.03.2009թ.-ը և այդ օրը հրապարակել է երկու որոշում, որոնցից մեկը՝ ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու վերաբերյալ, իսկ մյուսը՝ փաստաբանի հանդեպ սանկցիա կիրառելու մասին:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով և պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածը սահմանում է, որ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն հայտնել բացարկներ, հարցեր տալ, միջնորդություններ անել, բացատրություններ տալ դատարանին, գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնել իրենց փաստարկները և այլն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Դատավորն ինքնաբացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Գործին մասնակցող անձը նման միջնորդություն կարող է ներկայացնել....միայն մինչև դատաքննությունն սկսվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ

[17] Այդ մասին մանրամասն տես սույն զեկույցի 2.1.2. պարագրաֆում:

անձը կապացուցի,....որ ինքնաբացարկի հիմքն իրեն հայտնի է դարձել դատաքննությունն սկսելուց հետո և մինչ այդ չէր կարող հայտնի լինել: Ամեն դեպքում միջնորդությունը կարող է ներկայացվել....մինչև դատաքննության ավարտը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ դատավորի ինքնաբացարկի մասին միջնորդությունը ներկայացվում է գրավոր, որում շարադրվում են դրա հիմքերը:

Գտնում ենք, որ դատական նիստի ժամանակ միջնորդություններով /այդ թվում՝ դատավորին ուղղված ինքնաբացարկի միջնորդությամբ/ հանդես գալը, փաստաբանի կողմից իր դատավարական իրավունքներից բարեխղճորեն օգտվելու և դատավարական պարտականությունները պատշաճ կատարելու դրսևորում է, իսկ փաստաբանի գործողությունների ցանկացած կամային սահմանափակում կամ սահմանափակման փորձ բացասաբար է անդրադառնում արդար դատաքննության իրականացման արդյունավետության վրա:

Ավելի քան անընդունելի է, իր իրավունքներից բարեխղճորեն օգտվող և դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորող փաստաբանի կողմից ներկայացված միջնորդության պատճառով նրա նկատմամբ կիրառվում է դատական սակցիա:

3.7. Դատական նիստերի դիտարկում (մոնիտորինգ)

3.7.1. ՀՀ դատարանները կայացրել են արդարացման դատավճիռներ

ՀՀ դատարանների կողմից 2009թ. ընթացքում կայացվել են արդարացման դատավճիռներ: Դրանցից մի քանիսը կայացվել են այն գործերով, որոնք մոնիտորինգի են ենթարկվել Պաշտպանի աշխատակազմի կողմից:

2008թ. մարտի 1-ի և 2-ի դեպքերի հետ կապված դատական նիստերից մեկի ընթացքում, որը դիտարկվել է մեր կողմից, պաշտպանն իր միջնորդություններում դատաքննության ողջ ընթացքում, ինչպես նաև իր պաշտպանական ճառում նշել է, որ նախաքննության ընթացքում իր պաշտպանյալը ներկայացվել է ճանաչման ձեռնաշղթան ձեռքից կախված վիճակում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221 հոդվածի 3-րդ մասի խախտում է, համաձայն որի. «Ճանաչման ենթակա անձը ներկայացվում է ճանաչողին նույն սեռի և արտաքինով ու հագուստով ճանաչվողին հնարավորին չափ նման առնվազն երեք այլ անձանց հետ»:

Երևանի քրեական դատարանը նշված հանգամանքը գնահատելով որպես տվյալ քննչական գործողության կատարման կարգի էական խախտում՝ հաստատել է ճանաչման ներկայացնելու արձանագրությունը որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիությունը, ինչպես նաև այն, որ տվյալ քննչական գործողությունը կատարվել է մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտմամբ: Բացի այդ, Երևանի քրեական դատարանն իր լրացուցիչ որոշմամբ արձանագրել է նաև, որ ձերբակալումը տևել է օրենքով նախատեսված 72 ժամից ավելի:

Չնայած այս ամենին, Երևանի քրեական դատարանը, այնուհետև նաև՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, մեղադրյալի կատարած հանցանքը և նրա մեղքը հաստատված են համարել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել է ստորադաս ատյանի կայացրած դատավճիռը, և քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ քրեական գործի վարույթը կարճվել: Փաստորեն, գործով մեղադրյալը արդարացվել է և անհապաղ ազատ արձակվել:

Վճռաբեկ դատարանի տվյալ գործով որոշման (2008թ. սեպտեմբերի 16-ի որոշում թիվ ԵՔԴԴ/0295/01/08) հիմքում դրվել է նաև այն պատճառաբանությունը, որ մեղադրանքի հիմքում դրված ապացույցները թույլատրելի չեն, քանի որ դրանց բովանդակությունն ամբողջությամբ հիմնված է եղել անթույլատրելի ճանաչված քննչական գործողության տվյալների վրա, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին:

3.8. ՀՀ արդարադատության նախարարության համակարգի մարմիններ

3.8.1. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության դեմ ստացված դիմում-բողոքները, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2009թ. վերաբերել են դատական ակտերի պահանջները օրենքով սահմանված ժամկետներում չկատարելուն, կատարման անհիմն ձգձգումներին, որոշ դեպքերում հապճեպ, թերի կատարմանը, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռները հարկադիր կատարողների կողմից տարաբնույթ մեկնաբանելուն և այլն:

Պաշտպանի նախորդ զեկույցներում բազմիցս նշվել է, որ հատկապես այն դեպքերում, երբ պարտապանը պետական մարմին կամ պաշտոնատար անձ է, որը չի կատարում վճռի

պահանջը, հարկադիր կատարողների կողմից չեն կիրառվում ներգործության միջոցներ, այդ թվում՝ վարչական պատասխանատվության ենթարկելը:

Օրինակ, հաճախ են դեպքերը, երբ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեն տարբեր պատճառաբանություններով մի քանի ամիս /նույնիսկ տարի/, չի գրանցում վճռից ծագող իրավունքները, իսկ հարկադիր կատարողները կոնկրետ միջոցներ ձեռնարկելու փոխարեն ամիսներ շարունակ հարցումներ են կատարում կադաստրի համապատասխան ստորաբաժանում, թե արդյոք կատարվել է վճիռը, կամ ինչու չի կատարվում օրինական ուժի մեջ մտած վճիռը և այլն:

Շատ են նաև բողոքները, որոնք վերաբերում են ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ և անհարգալից վերաբերմունքին, վտարումների ընթացքում մարմնական վնասվածքներ պատճառելուն, կատարողական գործողությունների վերաբերյալ պարտապանին պատշաճ չծանուցելուն, աճուրդների անցկացման անօրինականությանը և այլն:

Քաղաքացի Լ.Ե.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումում հայտնել է, որ ՀՀ վարչական դատարանի կողմից քննվել է իր հայցը, և 12.09.2009թ. վճռով որոշվել վարչական գործի վարույթը կարճել, իսկ իրենից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 4000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վարչական դատարանի կողմից 23.10.2009թ. տրվել է նշված վճռի կատարողական թերթ, որի հիման վրա *04.11.2009թ.* ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Շենգավիթ բաժնի հարկադիր կատարողը որոշում է կայացրել կատարողական վարույթ հարուցելու մասին՝ որոշելով. «…պարտապան Լ. Ե.-ից 4000 դրամ, ինչպես նաև 5000 դրամ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս բռնագանձելու մասին»: Այս որոշումը Լ.Ե.-ին է ուղարկվել *05.11.2009թ.* ԵՀ 12096/05 գրությամբ, որը դիմումատուն ստացել է փոստով՝ *10.11.2009թ.*: Դիմումին կից Լ. Ե.-ն ներկայացրել է «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ Բանկ» Շենգավիթի մասնաճյուղում 05.11.2009թ. կատարված 4000 դրամի վճարման անդորրագիր և այժմ բողոքում է, որ իրենից անհիմն պահանջում են կատարողական գործողությունների կատարման ծախսեր, այն դեպքում, երբ ինքը վճիռը կատարել է կամովին (05.11.2009թ. կատարված վճարմամբ), այլ ոչ հարկադրաբար, առավել ևս՝ ոչ դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից ձեռնարկված գործողությունների արդյունքում:

Այս կապակցությամբ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին առաջարկվել է ներկայացնել պարզաբանում՝ միաժամանակ քննարկման առարկա դարձնելով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Շենգավիթ բաժնի հարկադիր կատարող Ս.Հ.-ի կողմից

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 66, 67-րդ հոդվածների պահանջների պահպանվածության հարցը:

Ի պատասխան՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը հայտնել է, որ հարուցվել է կատարողական վարույթ, կատարվել են կատարողական գործողություններ, իսկ Շենգավիթ բաժնի հարկադիր կատարողի գործողությունները բխում են օրենսդրության պահանջներից:

Չհամաձայնելով ստացված գրությանը՝ Պաշտպանը կրկին գրությամբ դիմել է ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին՝ նշելով, որ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ քաղաքացին վճռի պահանջը կատարել է կամովին, այլ ոչ հարկադրաբար, առավել ևս՝ ոչ դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից ձեռնարկված գործողությունների արդյունքում: Այդ մասին են վկայում առնվազն այն հանգամանքները, որ ա/ Լ. Ե.-ի կողմից «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ Բանկ» Շենգավիթի մասնաճյուղում **05.11.2009թ.** կատարվել է հիշյալ վճռով սահմանված 4000 դրամի վճարումը, բ/ Երևան քաղաքի Շենգավիթ բաժնի հարկադիր կատարող Ս. Հ.-ի կողմից կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումն ընդունվել է 04.11.2009թ., իսկ քաղաքացին այդ մասին պատշաճ ծանուցվել է ընդամենը 10.11.2009թ.՝ փոստով ստանալով հարկադիր կատարողի կողմից **ելից 05.11.2009թ.** իրեն հասցեագրված հ.12096/05 գրությունը:

Այսինքն՝ հարուցված կատարողական վարույթի մասին Լ.Ե.-ն տեղեկացել է միայն վճիռը կամավոր կերպով կատարելուց 5 օր հետո (լավագույն դեպքում ելից գրության ուղարկման օրը՝ 05.11.2009թ., սակայն այդ դեպքում նույնպես վճռի պահանջը արդեն կամավոր կերպով կատարելուց հետո միայն): Դա նշանակում է, որ կատարողական վարույթ հարուցելու մասին որոշում ընդունելու պահից (04.11.2009թ.) մինչև Լ. Ե.-ի կողմից վճռի կամավոր կատարման պահը (05.11.2009թ.) հարկադիր կատարողի կողմից այդ մեկ օրվա մեջ չեն կատարվել որևէ կատարողական գործողություններ (որոնց մասին տեղյակ կլիներ նաև պարտապանը), որոնք կառաջացնեին ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 66 հոդվածով սահմանված կատարողական գործողությունների կատարման ծախսեր: Մինչդեռ, ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 66 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կատարողական գործողությունների կատարման ծախսերն են դրանց կազմակերպման և անցկացման համար հարկադիր կատարողի, ինչպես նաև կատարողական վարույթի կողմերի և այլ անձանց ծախսած միջոցները»: Նույն օրենքի 2-րդ մասը սահմանում է. «Կատարողական գործողությունների կատարման ծախսերն այն միջոցներն են, որոնք ծախսվել են՝

1) պարտապանի գույքի հայտնաբերման, զննման, դրա վրա արգելանք դնելու, փոխադրման, պահատվության, գնահատման և իրացման համար.

2) փորձագետների վճարման համար.

3) բռնագանձված գումարները պահանջատիրոջը փոխանցելու համար.

4) պարտապանի և (կամ) նրա գույքի հետախուզման համար.

5) կատարողական այլ գործողություններ կատարելու համար»:

Վերը նշված գործողություններից որևէ մեկը տվյալ դեպքում չի իրականացվել, ուստի Պաշտպանն առաջարկել է ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին ևս մեկ անգամ ուսումնասիրել Լ. Ե.-ի գործը և արդյունքների մասին իրազեկել:

Արդյունքում քաղաքացի Լ.Ե.-ի բողոքում բարձրացված հարցը դրական լուծում է ստացել:

3.8.2. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ

Ի տարբերություն նախորդ տարիների՝ հաշվետու տարում քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կողմից դատապարտյալների և կալանավորների նկատմամբ բռնություն գործադրելու և անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու վերաբերյալ բողոքներ չեն ստացվել: Ստացված դիմում-բողոքներից, ինչպես նաև Պաշտպանի ներկայացուցիչների նշված հիմնարկներ կատարած այցելությունների ուսումնասիրություններից, այնուամենայնիվ, հետևում է, որ նշված ոլորտում դեռևս առկա են չլուծված մի շարք խնդիրներ:[18]

Բողոքներ են ստացվել սահմանված պատժի փակ տիպի ռեժիմը բաց տիպի ռեժիմով փոխելու, կալանավորված անձանց պատշաճ կարգով բուժօգնություն չտրամադրելու, կալանավորին խցից մեկ այլ խուց չտեղափոխելու վերաբերյալ և այլն:

Քիչ չեն եղել բողոքները՝ ուղղված պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն առավել մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի գործողությունների (անգործության) ու որոշումների դեմ: Այդ կապակցությամբ դիմումատուներին բացատրվել է, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշումը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի՝ հավանություն չտալու մասին որոշումն ստանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալին պատիժը կրելուց

[18] Այդ մասին տե՛ս սույն զեկույցի 1.1.4. պարագրաֆում:

պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը քննարկում է հավանություն չստանալու որոշումը կայացվելուց երեք ամիս անց, բացառությամբ քրեակատարողական օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված դեպքերի»:

3.9. ՀՀ պաշտպանության նախարարություն

Թեև նախորդ տարիների համեմատ ՀՀ պաշտպանության նախարարության դեմ բերված դիմում-բողոքների թիվն ավելացել է, այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ ընթացիկ տարում Պաշտպանի և զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի համատեղ աշխատանքների արդյունքում դիմում-բողոքներում բարձրացված շատ հարցեր ստացել են իրենց դրական լուծումները:

Այս տեսակետից դրական պետք է գնահատել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև գոյություն ունեցող համագործակցությունը, որը կարող է լավ օրինակ ծառայել ՀՀ մյուս գերատեսչությունների և նրանց ղեկավարների համար:

Շարադրվածը, իհարկե, չի նշանակում, թե այս ոլորտում թերություններ և բացթողումներ չկան: Խոսքը, պարզապես, վերաբերում է վերհանված թերացումներն ընդունելու և դրանք շտկելու ՀՀ պաշտպանության նախարարության պատրաստակամության մասին, ինչը շատ այլ պետական մարմինների դեպքում բացակայում է: Մինչդեռ, խախտված իրավունքների լիարժեք վերականգնումը, ինչպես արդեն նշել ենք, մեծապես կախված է նաև իրենց իրավախախտ վարքագծի շտկման նկատմամբ պետական մարմինների դրսևորած վերաբերմունքից:

Ընթացիկ տարում անհամեմատ հաճախակիացել են բազմաթիվ զինվորական ստորաբաժանումներ, ընդհուպ մինչև սահմանամերձ զորամասերի ենթակայության տակ գտնվող մարտական դիրքեր Պաշտպանի ներկայացուցիչների այցելությունները: Կատարված այցելությունների արդյունքում բացահայտված թերություններն ու բացթողումները ներկայացվել են անմիջապես ՀՀ պաշտպանության նախարարին, ում հետևողական հսկողության արդյունքում ձեռնարկվել են դրանց վերացմանն ուղղված միջոցներ:

Պրակտիկան ցույց է տալիս, որ զինված ուժերում ցանկալի արդյունքի կարելի է հասնել այն ժամանակ, երբ թերությունների մասին տեղյակ է պահվում անմիջապես զինված

ուժերի ղեկավարը՝ ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի, իսկ զորամասի հրամանատար, զինկոմիսարներ, ՀՀ ԶՈՒ ԳԾ վարչության պետեր և այլոք, շատ դեպքերում տեղյակ չլինելով Պաշտպանի լիազորություններին և չգիտակցելով Պաշտպանի հաստատության դերն ու նշանակությունը, Պաշտպանի գործունեությանը խոչընդոտող վարքագիծ են դրսևորում:[19]

Հատկանշական է, որ ՀՀ պաշտպանության նախարարի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի համատեղ աշխատանքային քննարկումների արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ որոշ հարցերի լուծման օպերատիվությունն ապահովելու նպատակով ՀՀ պաշտպանության փոխնախարարի և Պաշտպանի ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդականի մշտական կապի մեջ լինելու վերաբերյալ: Չնայած նման փոխհամագործակցության կարճ ժամանակահատվածին, այնուամենայնիվ, դրական արդյունքներ եղել են:

Օրինակ՝ ս. թ. դեկտեմբերի 22-ին Պաշտպանին է դիմել Գյումրի քաղաքի բնակիչ Ա.Ն.-ն՝ հայտնելով, որ ունի երակների լայնացում հիվանդությունը, քայլում է դժվարությամբ, այնուամենայնիվ, զինկոմիսարիատը ամեն կերպ փորձում է իրեն զորակոչել բանակ: Խնդրել է Պաշտպանի միջամտությունը՝ լրացուցիչ բուժհետազոտություն անցնելու համար:

Դիմումի մասին տեղյակ է պահվել ՀՀ պաշտպանության փոխնախարար Ա. Նազարյանը, ով հեռախոսազրույց է ունեցել ՀՀ զինկոմիսար, գեներալ-մայոր Ս.Չալյանի հետ: Վերջինը հայտնել է, որ քաղաքացին մանրակրկիտ հետազոտվել է, նրան առաջարկվել է վիրահատել ոտքը, սակայն նա գրավոր հրաժարվել է, ինչն առկա է զինակոչիկի անձնական գործում: Մինչդեռ, քաղաքացին պնդում էր, որ նման գրություն չի գրել:

Դեկտեմբերի 29-ին զինակոչիկը բերվել է հանրապետական հավաքակայան: Պաշտպանի ներկայացուցիչները փորձել են ներկա գտնվել նրա բուժհետազոտման գործընթացին, քանի որ դիմումատուն պնդում էր, որ իր հայտնած տեղեկությունները հաշվի չեն առնվում: Սակայն այդ հանգամանքը բացասաբար է ընդունվել Ս. Չալյանի կողմից, ով արհամարհական տոնով ասել է, որ Պաշտպանի ներկայացուցիչները չփորձեն վերահսկել իր աշխատանքները, որ միևնույն է, քաղաքացուն զորակոչելու են բանակ:

Միայն պաշտպանության նախարարին տեղեկացնելուց հետո հարցի լուծումն այլ կերպ է ընթացել: Պարզվել է, որ իսկապես, զինակոչիկի մոտ առկա է համապատասխան հիվանդությունը, նրան տրվել է տարկետման իրավունք՝ միաժամանակ պարտավորվելով

[19] Խոսքը չի վերաբերում ՀՀ ՊՆ իրավաբանական վարչությանը, Ռազմական ոստիկանության վարչությանը, ՀՀ ՊՆ թիվ 1-ին և 3-րդ բանակային զորամիավորումներին, քանի որ վերջիններս մշտապես հայտնել են իրենց պատրաստակամությունը համատեղ աշխատանքի արդյունքում միջոցներ ձեռնարկել թերությունները վերացնելու ուղղությամբ:

միջոցներ ձեռնարկել վիրահատությունը կազմակերպելու համար: Հաստատվել է նաև, որ իրականում զինակոչիկը նման գրություն չի գրել, այն բացակայում էր նաև նրա անձնական գործում:

ՀՀ պաշտպանության նախարարության դեմ 2009թ. ստացված դիմում-բողոքների բնույթի, դրանց ընթացքի և արդյունքների մասին ամփոփ տեղեկատվությունը զետեղված է սույն զեկույցի 4.1. պարագրաֆում:

3.10. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն /ենթակառուցվածքներ/

ՀՀ տարածքային կառավարման նախարարության դեմ ուղղված բողոքները վերաբերել են ՀՀ տարածքային կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների (պատվիրակված և պարտադիր լիազորությունների սահմաններում) աշխատանքների՝ սահմանված կարգով չվերահսկմանը, այդ մարմինների գործունեության վերաբերյալ դիմումներին և բողոքներին պատշաճ ընթացք չտալուն և այլն:

Տարբեր մարզերից ստացված դիմում-բողոքները վկայում են, որ դպրոցների տնօրենների հետ մարզպետները կնքում են որոշակի ժամկետով /հիմնականում մեկ տարով/ պայմանագրեր: Դրա հետևանքով խախտվում է ինչպես աշխատանքային հարաբերությունների կայունությունը, այնպես էլ աճում է կոռուպցիոն ռիսկը:

Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարման պայմանները, եթե սույն օրենսգրքով կամ օրենքով այլ բան նախատեսված չէ»:

Դպրոցը, որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն, մշտապես, անորոշ ժամկետով գործող գործատու է, հետևաբար տնօրենի աշխատանքը չի կարող լինել որոշակի ժամկետով, քանի որ տվյալ դեպքում խախտվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված աշխատանքային օրենսդրության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ աշխատանքային հարաբերությունների կայունությունը:

Պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով և կիրառելի են

միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթները: Այս մասին պարզաբանում է ներկայացրել ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը:

Իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. սեպտեմբերի 26-ի թիվ 3-483 (ՎԴ) քաղաքացիական գործով (Հ.Մ.-ի բողոքն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի) կայացրած որոշմամբ նշվել է, որ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը հանդիսանում է բացառություն ընդհանուր կանոնից, այսինքն, որպես կանոն, աշխատանքային հարաբերությունները պետք է կարգավորվեն անորոշ ժամկետով պայմանագրով, և միայն բացառիկ դեպքերում է թույլատրելի որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքումը:

Այսինքն՝ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել միայն այն դեպքերում, երբ կատարվելիք աշխատանքը կամ կատարման պայմանները կրում են ոչ մշտական բնույթ կամ առկա են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված նախապայմանները, այն է՝

«2. Ընտրովի պաշտոններում աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է ընտրված ժամանակահատվածով:

3. Աշխատանքային պայմանագիրը որոշակի ժամկետով կարող է կնքվել նաև, եթե՝

1) աշխատողը գործատուին մատուցում է անձնական բնույթի ծառայություններ.

2) աշխատանքը կատարում են տնաշխատները.

3) կատարվում է համատեղությամբ աշխատանք.

4) կատարվում են սեզոնային աշխատանքներ.

5) կատարվում է ժամանակավոր (մինչև երկու ամիս ժամկետով) աշխատանք»:

Բարդ է նաև ներքին տեղահանված անձանց աշխատանքի տեղավորման խնդիրը: Կան քաղաքացիներ, որոնք բնակվել են սահմանամերձ շրջաններում, ղարաբաղյան ազատամարտի տարիներին ադրբեջանցիների կողմից ենթարկվել ավազակային հարձակման, ամբողջովին թալանվել, հրկիզվել, ավերվել է իրենց տարածքը: Այդ պատճառով ժամանակավոր բնակություն են հաստատել Հայաստանի տարբեր շրջաններում:

Զինադադարից հետո բազմիցս դիմել են պետական տարբեր ատյաններ՝ պարզելու, թե երբ կարող են վերադառնալ իրենց բնակավայր: Նրանց հայտել են, որ այդ շրջանները կվերականգնվեն, սակայն մինչ այսօր ոչինչ չի ձեռնարկվել:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 25.09.2008թ. նիստի թիվ 39 արձանագրային որոշման համաձայն՝ վերաբնակեցման ծրագրով նախատեսվում է եռամյա ժամկետում ստեղծել պայմաններ տարեկան ավելի քան 330 ընտանիքի վերադարձ իրենց ծագման բնակավայրեր

ապահովելու համար, իսկ ժամանակավոր կացարաններում և բարեկամների տանը բնակվող, այլ երկրներում գտնվող տեղահանվածների հիմնախնդիրներով պետք է զբաղվի ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, որը կհամակարգի և կնպաստի այս ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացմանը:

Քանի որ վերոնշյալ արձանագրային որոշման քաղվածքի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված է, որ ծրագիրը հնարավոր կլինի իրականացնել միայն միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների միջոցների ներգրավման դեպքում, իսկ նման միջոցներ այսօր չկան՝ ծրագիրը դեռ չի իրականացվում:

Դրա հետ մեկտեղ, այն անձինք, ովքեր գաղթել են Լեռնային Ղարաբաղի տարածքից, չեն կարողանում օգտվել «1988-1992թթ. Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի մի շարք արտոնություններից, քանի որ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը գտնում է, որ տվյալ օրենքի պահանջները տարածվում են միայն Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած անձանց վրա:

Ստեղծվում է մի իրավիճակ, երբ քաղաքացին, լինելով ներքին տեղահանված անձ, չի կարողանում վերադառնալ նախկին բնակավայր, միաժամանակ, չհանդիսանալով Ադրբեջանից բռնագաղթած անձ, չի օգտվում փախստականի կարգավիճակից բխող իրավունքներից: Այս հարցում, կարծում ենք, որոշակի անելիք ունեն ոլորտի պատասխանատուները:

Դժգոհություններ են եղել Սևան-Գավառ ավտոճանապարհի Լճաշեն համայնքի վարչական տարածքին հարող ջրածածկման խնդիր ունեցող շուրջ երկու կիլոմետր ճանապարհահատվածի վերանորոգման կապակցությամբ ժամանակավորապես շահագործվող այլընտրանքային ճանապարհի վիճակի վերաբերյալ: Նշվել է, որ այդ ճանապարհը չի համապատասխանում ճանապարհային անվտանգության և կահավորման կանոններին, չկան երթևեկության նշաններ, նեղ է երկկողմանի երթևեկության համար, բացակայում են եզրային հենապյուները, տեղումների դեպքում ավտոճանապարհը դառնում է գրեթե անանցանելի: Եվ սա այն դեպքում, երբ այդ ճանապարհը հանդիսանում է տարանցիկ և ռազմավարական նշանակություն ունի:

Այս կապակցությամբ կատարված հարցմանն ի պատասխան ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալն ի թիվս այլ տեղեկությունների, հայտնել է, որ իրականացվում են աշխատանքներ, որպեսզի մինչև ձյան տեղումները ավարտին հասցվեն ճանապարհի հողային պաստառի աշխատանքները, ինչը հնարավորություն կտա ավտոտրանսպորտի երթևեկությունը կազմակերպել հիմնանորոգվող ճանապարհով:

3.10.1. Միգրացիոն գործակալություն

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում փախստական ընտանիքներից շարունակվում են ստացվել բողոքներ՝ ուղղված Միգրացիոն գործակալության դեմ: Դրանց հիմնական մասը վերաբերել է բնակարանային պայմանների բարելավման խնդիրներին:

Չնայած պետությունը միջոցներ է ձեռնարկում փախստականներին բնակարաններով ապահովելու ուղղությամբ, սակայն ցուցակներում հաշվառելու, այս կամ այն ծրագրերում որոշված առաջնահերթությունների առումով առաջանում են դժգոհություններ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմում-բողոքներով փախստականները հայտնել են, որ Հայաստան բռնագաղթելուց հետո բնակություն են հաստատել ազգականների և բարեկամների բնակարաններում: Ներկայումս բարեկամների հետ տարաձայնություններ են առաջանում ինչպես երեխաներին նրանց հասցեներում հաշվառելու, այնպես էլ հետագա բնակության հարցերի շուրջ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալությունը այդ կապակցությամբ պարզաբանել է, որ ներկայումս ՀՀ կառավարության կողմից իրականացվում է առաջնահերթ կարիքավոր փախստական ընտանիքների բնակարանային ապահովության ծրագիր, իսկ վերոնշյալ կարգավիճակում գտնվող ընտանիքները այդ ծրագրում չեն կարող ընդգրկվել, քանի որ նրանք բնակվում են անհատական հասցեում՝ ազգականների մոտ: Անհատական հասցեներում /բարեկամների, ծանոթների մոտ կամ վարձով/ բնակվող փախստական ընտանիքների համար առայժմ բնակապահովության ծրագրեր չեն իրականացվում:

ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 330 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն, որպես բնակարանի կարիքավոր նրանք կարող են հաշվառվել համայնքի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունում՝ ըստ բնակության վայրի: Միգրացիոն գործակալությունը նշել է նաև, որ համապատասխան բնակապահովության ծրագրեր իրականացնելիս այդպիսի դիմումները կքննարկվեն:

Նշված կարգի 24-րդ կետի համաձայն առաջնահերթության ցուցակում ընդգրկվում են՝

ա) պատերազմի հաշմանդամների ու զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված ռազմիկների (պարտիզանների) ընտանիքները և սահմանված կարգով նրանց հավասարեցված անձինք.

բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները.

գ) պետական կամ հասարակական պարտականությունները կատարելիս, մարդկային կյանք փրկելիս զոհված անձանց ընտանիքները.

դ) չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքները.

ե) մինչև 8 տարեկան երկվորյակ երեխաներ ունեցող ընտանիքները:

Կարգի 25-րդ կետի համաձայն՝ 24-րդ կետում նշված ցուցակներում չընդգրկված փախստականները հերթագրվում են ընդհանուր ցուցակում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետություն ներգաղթելու տարեթիվը, ընտանիքի անդամների թիվը՝ հետևյալ հերթականությամբ՝

ա) վթարային ու խարխուլ տներում, նկուղներում, բարաքներում և բնակության համար ոչ պիտանի այլ շինություններում, ինչպես նաև սահմանված կարգով նախկինում հատկացված, բայց բնակության համար ոչ պիտանի ճանաչված այլ բնակելի տարածություններում բնակվողները.

բ) դպրոցներում, մանկապարտեզներում բնակվողները.

գ) ժամանակավոր այլ կացարաններում բնակվողները.

դ) ազգականների մոտ բնակվողները.

ե) ապօրինի զբաղեցրած բնակարաններում բնակվողները.

զ) հանրակացարաններում բնակվողները.

է) հյուրանոցներում բնակվողները.

ը) վարձով, իսկ պետական բնակարանային ֆոնդի տներում՝ ենթավարձակալությամբ բնակվողները:

Գնահատելով առաջնահերթության ցուցակներում ընդգրկված անձանց վաստակը և հայրենիքին մատուցած ծառայությունները, ինչպես նաև հաշվի առնելով առաջնահերթության ցուցակում ընդգրկված անձանց կարգավիճակը՝ կարծում ենք, որ բնակարանային պայմանների բարելավման ծրագրերն իրականացնելիս պետք է հաշվի առնվեն այդ պահին նրանց բնակվելու վայրը, պայմանները, սոցիալական վիճակը և այլ հանգամանքներ:

Հարկ ենք համարում ևս մեկ անգամ անդրադառնալ բնակարանային գնման վկայագրերի տրամադրման ծրագրին: ՀՀ մարզերում մեծ թվով ընտանիքներ չեն կարողացել բնակարանի գնման վկայագրերով ձեռք բերել բնակարաններ՝ շուկայում գների անընդհատ

փոփոխության և տրամադրվող գումարի ցածր լինելու պատճառով: Շատ ընտանիքներ դեռևս կարիք ունեն ստանալու բնակարանի գնման վկայագրեր: Երևանում բնակարանի գնման վկայագիր ստանալու առաջնահերթությունը տրված է 1100 ընտանիքների, որոնց բնակարանային խնդիրը պետք է լուծվեր 2009թ.-ի ընթացքում, սակայն այդ հարցի կարգավորումը բաց է մնացել համաշխարհային ճգնաժամի պատճառով /պետական բյուջեից համապատասխան ֆինանսավորման բացակայության հետևանքով/: Մնացած այն փախստականները, որոնք չեն ընդգրկվել առաջնահերթ ցուցակում, լավագույն դեպքում բնակարան կարող են ձեռք բերել 2010-2012 թթ.-ին:

3.10.2. Ջրային տնտեսության պետական կոմիտե

ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի դեմ բողոքները հիմնականում գյուղական բնակավայրերի հողօգտագործողներից են, որոնք դժգոհում են, որ ոռոգման սեզոնին ջրօգտագործող ընկերություններն անհրաժեշտ քանակի ջուր չեն տրամադրում ցանքատարածությունները, այգիները և այլ մշակովի հողերը ջրելու համար, որի հետևանքով կրում են զգալի վնասներ, իսկ ջրային տնտեսության պետական կոմիտեն անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկում խնդիրները հարթելու ուղղությամբ: Բացի դրանից, լրատվության տարբեր միջոցներով քաղաքացիներն իրենց դժգոհություններն են հայտնում օրերով խմելու ջուր չունենալու կապակցությամբ. կան դեպքեր, երբ ջուրը գյուղական բնակավայրեր է տարվում մեքենաներով, այն էլ՝ շաբաթվա հատուկ օրերի:

Պաշտպանի 2008թ. տարեկան զեկույցում /բաժին 3.9.2./ անդրադարձ էր կատարվել ՀՀ Արարատի մարզի Դարբնիկ համայնքի բնակիչներից մեկի բնակարանային խնդրին:

Խնդիրն այն է, որ 2001թ. հողամասի գլխամասում գտնվող արտեզյան ջրհորի մաշվածության պատճառով ջուրը լցվել էր իրենց հողամաս: Սկզբում ջրի ճանապարհը փակել են հողով և շարունակել մշակել մոտ 1000մ հողամասն ու 30 պտղատու ծառերը, որոնք հետագայում ոչնչացել են:

2002 թվականից սկսած քաղաքացին դիմումներ է հասցեագրել համայնքի ղեկավարին, ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ Նախագահին, ՀՀ վարչապետին, ՀՀ բնապահպանության նախարարություն, Արարատի մարզպետին, տարածքային կառավարման նախարարին և այլ պետական մարմիններ:

Նամակները մի տեղից վերահասցեագրվել են մեկ այլ տեղ, սակայն խնդրին լուծում չի տրվել:

Մարդու իրավունքների պաշտպանի գրության հիման վրա 2008թ. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարը խնդրի կարգավորման նպատակով հանձնարարականներ էր տվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին, ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային պետական կոմիտեի 2008 թվականի սեպտեմբերի 13-ի գրությամբ տեղեկացվել է, որ ՀՀ Արարատի մարզի Դարբնիկ համայնքի արտեզյան հորի վերանորոգման աշխատանքները նախատեսված է իրականացնել Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ-Հայաստան ծրագրի Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման բաղադրիչի շրջանակներում: Համաձայն ժամանակացույցի՝ աշխատանքները կիրականացվեն 2009-2010 թվականների ձմռան ամիսներին:

Փաստորեն, 2002թ. մինչև օրս իրավասու անձանց կողմից միջոցներ չձեռնարկելու արդյունքում քաղաքացին զրկվել է իր բնակարանից, որը դարձել է վթարային և կոմունալ պայմաններից զուրկ, և հողամասից, որը վերածել է ճահճի: Արդեն մի քանի տարի բնակվում է վարձակալած բնակարանում, իսկ վարձավճարները վճարելու հնարավորություն չունենալու պատճառով վարձատուն պահանջում է ազատել բնակարանը:

Մեկ այլ խնդիր է քաղաքացիներից իրականացվող կրկնակի գանձումները:

Մի քանի քաղաքացիներ ՀՀ ԿԱ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ոռոգում» ՓԲԸ-ի նկատմամբ հանդես են գալիս որպես պարտապան՝ իրենց կողմից պարտավորությունները պատշաճ կերպով չկատարելու համար /օգտագործված ջրային ռեսուրսների դիմաց համապատասխան գումարներ չմուծելու պատճառով/: Դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտից հետո քաղաքացիների կողմից պարտավորությունները պատշաճ կերպով կատարվել են: Միաժամանակ, ԴԱՀԿ ծառայությունում կատարողական վարույթ է հարուցվել, որի ընթացքում քաղաքացիների կենսաթոշակից պահվել են համապատասխան գումարները: Այնպես է ստացվել, որ քաղաքացիները կատարել են կրկնակի մուծում: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանում գործը քննելու ընթացքում պարզվել է այդ հանգամանքը և կայացվել վճիռ՝ տվյալ գումարները ՀՀ ԿԱ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ոռոգում» ՓԲԸ-ից քաղաքացիների օգտին բռնագանձելու մասին:

Սակայն վճիռը 2006թ. մինչ այսօր չի կատարվել, քանի որ ՀՀ ԿԱ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ոռոգում» ՓԲԸ-ն ՀՀ տնտեսական դատարանի

07.06.2007թ. վճռով ճանաչվել է սնանկ, իսկ ջրային տնտեսության պետական կոմիտեն կենսաթոշակառու անձանց գումարները ետ վերադարձնելու պատրաստակամություն չի հայտնել:

3.11. ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դասվում է այն քիչ պետական մարմինների շարքին, որի հետ Պաշտպանի հաստատության համագործակցությունը գտնվում է բարձր մակարդակի վրա, իսկ բացահայտված թերացումներն ու բացթողումները առնվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի անմիջական ուշադրության ներքո, ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ բարձրացված հարցերին հնարավորինս լուծում տալու համար:

2009թ. դժգոհության մեծ ալիք բարձրացրեց ՀՀ կառավարության՝ 2008թ. հուլիսի 24-ի թիվ 878-Ն որոշմամբ հաստատված ծրագրի «4.4.3. Կրթություն և գիտություն» բաժնի 3.1.-րդ և 2009թ. հունվարի 15-ի թիվ 40-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի 148-րդ կետերին համապատասխան ՀՀ կառավարության հաստատած ավագ և հիմնական դպրոցների ցանկը, քանի որ հաշվի չէին առնվել ընտանիքների սոցիալական վիճակը, երեխայի դպրոց հաճախելու հետ կապված հնարավոր բարդությունները, /տրանսպորտային ծախսեր, երեխայի հոգևոր զարգացման հետ կապված խնդիրներ՝ հիմնական շրջապատից կտրելու հետևանքով և այլն/:

Խնդիրն ավելի սրված է հատկապես այն մարզերում, որտեղ առկա է մեկ կամ երկու ավագ դպրոց /Վայոց ձորի մարզ, Տավուշի մարզ/, իսկ առանց այն էլ սոցիալական ծանր պայմաններում գտնվող բնակիչությունը ստիպված է լինում հաղթահարել նաև ճանապարհների անցանելիության /առատ ձյան պայմաններում/ և տրանսպորտի անխափան աշխատանքն ապահովելու խնդիրներ: Ակնհայտ է, որ կրթության իրավունքը արհեստականորեն սահմանափակվում է՝ անմիջականորեն կախվածության մեջ դրվելով ընտանիքի ապահովվածությունից:

Մեկ այլ խնդիր է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող երեխաների համար իրենց մայրենի լեզվով կրթության մատչելիության ապահովումը, քանի որ ոչ բոլոր ավագ դպրոցներում է նախատեսված այդ լեզուներով կրթությունը: Ի դեպ, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն արձանագրել է ազգային

փոքրամասնություններին պատկանող երեխաների համար իրենց մայրենի լեզվով կրթության մատչելիության անբավարար լինելը:

Այս կապակցությամբ Պաշտպանի կողմից կատարված հարցումներին ի պատասխան ՀՀ կրթություն և գիտության նախարարը հայտնել է, որ 2010 թվականից կավելացվի ավագ դպրոցների քանակը և կշտկվեն ի հայտ եկած բոլոր թերությունները:

Միջնակարգ կրթություն ապահովող հաստատություններում /հատկապես մարզերում/, դեռևս լիարժեք լուծված չէ ջեռուցման խնդիրը, կան սոցիալական պայմաններից ելնելով դպրոց չհաճախող երեխաներ, շարունակվում է ծնողներից տարբեր առիթներով /դասարանների վերանորոգում, հեռուստացույցի կամ նվագարկչի ձեռք բերման համար և այլն/ դրամահավաքը:

Մարզերից բողոքներ են ստացվել նաև այն մասին, որ ավարտական դասարանների դասամատյաններում հայտնվում են երևանաբնակ և տարբեր մարզերից երեխաների ազգանուններ, ովքեր ընդհանրապես չեն հաճախել կամ մասնակի են հաճախել դպրոց, սակայն ստանում են գերազանց գնահատականներով ատեստատներ:

Կրթության ոլորտում կարևոր խնդիրներից է նաև բարձրագույն կրթության հասանելիության ապահովումը բնակչության անապահով խավերի համար: Դա առաջին հերթին հնարավոր է հանրակրթական դպրոցի ավարտական և ընդունելության քննությունների միասնական համակարգի արդյունավետ կիրառման, պետպատվերի շրջանակներում բուհերին հատկացվող տեղերի ավելացման, վճարովի համակարգում արտոնությունների շրջանակի ընդարձակման ճանապարհով:

3.12. ՀՀ առողջապահության նախարարություն

Ինչպես նախորդ տարիներին, 2009 թվականի ընթացքում ևս առողջապահության նախարարության դեմ ուղղված դիմում-բողոքները վերաբերել են պետպատվերի շրջանակում անվճար բուժօգնություն, դեղորայք, ուղեգրեր չտրամադրելուն, հոգեբուժական ստացիոնարում բուժվող անձանց իրավունքների պաշտպանությանը և այլն:

Բնակչությունը բավարար իրազեկված չէ, թե բժշկական ո՞ր ծառայություններն են վճարովի, որոնք՝ անվճար, ինչն էլ հիմք է հանդիսանում առողջապահության համակարգում չարաշահումների համար:

Բողոքներ են ստացվել նաև բուժաշխատողներից՝ բուժհաստատությունների տնօրենների կողմից իրենց աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ:

Նրանցից ոմանք չցանկանալով ներկայացնել իրենց տվյալները՝ հայտնել են, որ պոլիկլինիկաների տնօրեններն իրենցից պահանջում են յուրաքանչյուր ամիս վճարել գումարներ, չեն թույլատրում քաղաքացիներին տրամադրել նրանց անվճար հասանելիք դեղորայքը և այլն:

Մտահոգիչ է անձին հոգեբուժական ստացիոնարում 24 օր հոժարակամ պահելու խնդիրը, ինչը նախատեսված չէ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքով: Ինչպես արդեն նշվել է Պաշտպանի նախորդ տարեկան զեկույցներում, նշված ժամկետը պայմանավորված է պետության կողմից հիվանդի համար տրվող գումարի /սնունդ և այլ ծախսեր/ չափով: Այսինքն՝ հիվանդի ապաքինման, հետագա ստացիոնար բուժման անհրաժեշտությունից 24-օրյա ժամկետը լրանալուց հետո նա դուրս է գրվում հիվանդանոցից:

Խնդիր է առաջանում նաև անձին հարկադիր /ոչ հոժարակամ/ բուժման ենթարկելու դեպքում: Այսպես, հիշյալ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգեկան խանգարումներով տառապող անձն առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության կարող է հոսպիտալացվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացու՝ հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման վերաբերյալ դիմումը տրվում է այդ հոգեբուժական հաստատության գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան, իսկ 140-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Ստացվում է, որ եթե անձը տալիս է իր համաձայնությունը հոժարակամ բուժվելու համար, ապա դատարան դիմելու կարիք չի առաջանում, իսկ եթե չի տալիս ու հիմնարկը դիմում է դատարան, ապա վճիռը օրինական ուժի մեջ է մտնում մեկ ամիս հետո, սակայն մինչ այդ քաղաքացուն արդեն ենթարկում են հարկադիր բուժման՝ առանց սպասելու բողոքարկման արդյունքում կայացվող դատական ակտին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների՝ ՀՀ Շիրակի մարզ այցելության ընթացքում պարզվել է, որ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տարածքը պարսպապատված չէ:

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1.1. կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպություն հոսպիտալացվող անձն ունի հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի իրավունք, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել բժշկական կամ այլ գործողություններում:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տարածքի պարսպապատված չլինելու հետևանքով խախտվում է հոգեբուժական կազմակերպություն հոսպիտալացվող անձի՝ օրենքով սահմանված բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության իրավունքը: Ուստի, Պաշտպանը դիմել է ՀՀ Շիրակի մարզպետին՝ նշված ՊՈԱԿ-ի տարածքի պարսպապատման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

Հրատապ լուծում են պահանջում առուտիզմով հիվանդ երեխաների բուժման խնդիրները: 2009թ. Պաշտպանին են դիմել նման հիվանդությամբ տառապող երեխաների ծնողներ, որոնք խնդրել են միջոցներ ձեռնարկել մինչ այժմ իրենց կողմից վճարովի հիմունքներով իրականացվող հետազոտությունները և տարբեր մեթոդներով բուժումները պետպատվերի շրջանակներում կազմակերպելու ուղղությամբ:

Բարձրացվել է նաև այդ հիվանդությամբ տառապող երեխաների բուժման համար անհրաժեշտ դեղերի գրանցման հարցը, որը, ներկայումս հնարավոր է միայն համապատասխան մասնագետների դրական եզրակացության դեպքում:

Այս կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարության հետ պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ:

Հարցը Պաշտպանի ուշադրության կենտրոնում է:

3.13. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

2009թ. ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և համակարգի մարմինների դեմ ուղղված բողոքներն առավելապես վերաբերել են աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման խնդիրներին: Այդ մասին բազմիցս նշվել է Պաշտպանի տարեկան զեկույցներում, սակայն հարցը մինչ օրս լուծում չի ստացել:

Հաղթանակ թաղամասի ծերանոցի բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ «Հայկական երկաթուղի» ընկերությունում աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ ստացած աշխատանքային խեղման հետևանքով ձեռք է բերել առողջությանը պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունք: Ընկերության նոր սեփականատերը՝ «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ն, հրաժարվում է վճարել փոխհատուցման

գումարները՝ պատճառաբանելով, որ պատասխանատու չէ «Հայկական երկաթուղիներ» ընկերության պարտավորությունների համար:

Հարցի կապակցությամբ պարզաբանում ստանալու նպատակով Պաշտպանի կողմից կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալը հայտնել է, որ «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ում աշխատանքային խեղման պատճառով հաշվառված աշխատակիցների՝ այդ թվում՝ դիմումատուի առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման ամսական վճարի հետ կապված հարցի կարգավորման նպատակով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ և նրան տրամադրվել է փոխհատուցման գումարը:

Բողոքի քննարկումը դադարեցվել է հարցը դրական լուծվելու կապակցությամբ:

3.13.1. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական ծառայություն

Սոցիալական ապահովագրության պետական ծառայության դեմ ուղղված բողոքներով քաղաքացիները դժգոհել են որոշ դեպքերում ոլորտի օրենսդրության կամայական մեկնաբանման հանգամանքից:

Նշենք, որ Մարդու իրավունքների պաշտպանի 2008թ. տարեկան զեկույցում բերվել էր օրինակ, որը վերաբերում էր ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշմամբ հաստատված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին երկարամյա ծառայության համար մասնակի կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնների և աշխատանքային գործունեության տեսակները հաստատող ցանկին:

Խնդիրն այն էր, որ Պաշտպանին էին դիմել ուսուցիչներ, որոնք աշխատել են նախկին Մյասնիկյանի շրջանի ժողկրթբաժնի ենթակայության թիվ 6 ուսումնաարտադրական կոմբինատում, որն իր բնույթով համարվել է դպրոցին կից հաստատություն: Տարիքը լրանալու հիմքով դիմել են մասնակի կենսաթոշակի նշանակման խնդրանքով, սակայն ստացել են մերժում այն պատճառաբանությամբ, որ ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ հաստատված ցանկով իրենց կատարած աշխատանքները նախատեսված չեն:

Այս կապակցությամբ Պաշտպանը 2008թ. դիմել էր ՀՀ կառավարություն՝ առաջարկելով ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793 որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ, սակայն հարցը 2009 թվականին ընթացքում չի լուծվել:

2009 թվականին նույն որոշման դրույթների հետ կապված հարց է բարձրացվել նաև մեկ այլ դիմումի քննարկման արդյունքում: Խնդիրը վերաբերում է ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշման 2-րդ հավելվածի 4-րդ մասի 7-րդ կետի «ա» ենթակետին, ըստ որի՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք են ստանում բոլոր անվանումների ավիացիոն ավիատեխնիկները:

Այդ ոլորտի մի աշխատակից Պաշտպանին հասցեագրած դիմումում հայտնել է, որ Ավիացիոն տեխնիկական ուսումնարանն ավարտելուց հետո աշխատել է քաղաքացիական ավիացիայում՝ որպես շարժիչների գծով ավիատեխնիկ, ներկայացրել է նաև տեղեկանք առ այն, որ 1995-2004թթ. աշխատել է «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ի Ավիացիոն տեխնիկական բազայի դիագնոստիկայի լաբորատորիայում՝ որպես տեխնիկ: Կատարված աշխատանքները հավաստող տեղեկանքը 55 տարին լրանալուց հետո ներկայացրել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովագրության պետական ծառայություն՝ երկարամյա կենսաթոշակի համար հաշվառվելու նպատակով, սակայն մերժվել է:

Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշման 2-րդ հավելվածի 4-րդ մասի 22-րդ կետի 7-րդ ենթակետի՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն ինժեներատեխնիկական անձնակազմի բոլոր անվանումների ավիացիոն տեխնիկները (մեխանիկներ, մոտորիստներ), բոլոր անվանումների ավիացիոն ինժեներները, օդային նավատորմի և այլ թռչող ապարատների տեխնիկական սպասարկման արտադրամասերի, հերթափոխերի, տեղամասերի, ծառայությունների խմբերի պետերը: Նույն հավելվածի 24-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական ավիացիայի առանձին կատեգորիայի աշխատողների երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող ապահովագրական ստաժը հաստատվում է աշխատանքային գրքույկով, ինչպես նաև տեխնիկական սպասարկման աշխատանքներով անմիջականորեն զբաղված լինելու մասին կազմակերպության տված տեղեկանքով:

Բողոքի կապակցությամբ Պաշտպանը պարզաբանում է պահանջել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովագրության պետական ծառայության Արտաշատի տարածքային բաժնից այն մասին, թե ի՞նչ իրավական հիմնավորմամբ ավիացիոն լաբորատորիայում աշխատանք կատարող ավիատեխնիկները չեն մտնում ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 793-Ն որոշման 2-րդ հավելվածի 4-րդ մասի 7-րդ կետի «ա» ենթակետում նշված «բոլոր անվանումների ավիացիոն ավիատեխնիկներ» հասկացության մեջ:

Պատասխան գրությամբ Պաշտպանին ներկայացվել է ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության պետի առաջին տեղակալի գրությունը, ըստ որի՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի, ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի կենսաթոշակ նշանակելու համար ապահովագրական ստաժը հաշվարկելու, դրանում աշխատանքային կամ այլ բնույթի գործունեության առանձին տեսակներ հաշվառելու Կարգի 22 կետի 7-րդ ենթակետի «ա» կետի և 24-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ քաղաքացու 05.05.1995-16.01.2004թթ. «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ լաբորատորիայում ավիատեխնիկ կատարած աշխատանքները նշված կետերով նախատեսված չեն:

Փաստորեն, Ծառայությունը ոչ հիմնավորում է թե լաբորատորիայում աշխատանք կատարած ավիատեխնիկները ինչո՞ւ չեն մտնում ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ նշված «բոլոր անվանումների ավիացիոն տեխնիկներ» հասկացության մեջ, ոչ էլ նշում է, թե ովքե՞ր և ինչպիսի՞ աշխատանք կատարած անձինք են մտնում այդ ցանկի մեջ, սակայն մերժում է քաղաքացու խնդրանքը՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու մասին՝ հայտնելով, որ այդ ցանկով իր կատարած աշխատանքը նախատեսված չէ:

Այսպիսով բարձրացված հարցը մնում է չլուծված:

Ուլորտում հատուկ նշանակություն ունեն նաև այն դիմում-բողոքները, որոնք վերաբերում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթներին, որի մասին ներկայացվել է սույն զեկույցի երկրորդ բաժնում:

Պաշտպանի կողմից ուշադրության կենտրոնում են պահվել ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. հուվարի 15-ի որոշման հետ կապված խնդիրները: Հարցը կարևորվում է նրանով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. հուվարի 15-ի որոշման ընդունումից հետո քաղաքացիների կողմից կենսաթոշակների վերահաշվարկ կատարելու խնդրանքների հետ միասին ներկայացվել են նաև լրացուցիչ փաստաթղթեր, որոնք հիմնավորում են նրանց կողմից առանձնապես վտանգավոր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատանք կատարած լինելու հանգամանքը, մինչդեռ վերահաշվարկի արդյունքում քաղաքացիներին ոչ միայն չէին վճարվում կենսաթոշակի գումարների տարբերությունները, այլև ներկայացված դիմումներն ընդունվում էին որպես կենսաթոշակի նոր նշանակման հիմք:

Այս առումով Պաշտպանի կողմից վկայակոչվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73.1 հոդվածը, համաձայն որի՝ մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է Օրենքով սահմանված կարգով և համարվում է **նոր նշանակում:** Այդ դեպքում կենսաթոշակի գործում առկա՝ օրենսդրությամբ

սահմանված կարգով հաշվարկված ստաժում առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատած ժամանակահատվածը, քաղաքացիական ավիացիայի աշխատողների՝ թռիչքային ժամերով հաշվարկված ժամկետները, վկայությամբ հաստատված ժամանակահատվածը, երեխաների խնամքի ժամանակահատվածը, ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածն ապահովագրական ստաժի մեջ **պահպանվում են նույնությամբ:**

Մինչդեռ, կենսաթոշակի վերահաշվարկման ժամանակ առաջանում են տարատեսակ խնդիրներ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ օրենքով սահմանված ընթացակարգը չի պահպանվում, և առանձնապես վտանգավոր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատած լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում, նույնիսկ, կենսաթոշակը համարվում է նոր նշանակված:

Երևան քաղաքի բնակիչ Թ.Մ.-ն Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ երկար տարիներ աշխատել է «Նաիրիտ» ՓԲԸ-ում առողջության համար առանձնապես վտանգավոր պայմաններում և կենսաթոշակի անցել ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 13-ի թիվ 1987-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 ցուցակով: 2008թ. կենսաթոշակի վերահաշվարկման գործընթացը սկսվել է, սակայն տարածվել է միայն այն քաղաքացիների վրա, որոնք հաշվառվել են մինչև 2003թ., իսկ իր կենսաթոշակը 1.5տ. գործակցով նշանակվել է միայն մինչև 1996թ. աշխատած տարիների համար: ՀՀ ՍԴ թիվ ՍԴՈ-723 որոշման հիմքով իր կենսաթոշակի հաշվարկման հարցը չի լուծվել:

Դիմումի քննարկման արդյունքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովագրության պետական ծառայության կողմից տեղեկացվել է, որ քաղաքացու ստաժը հաշվարկվել է 1.5 անգամ՝ համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման, և վճարվել է կենսաթոշակի գումարի տարբերությունը՝ 70842 ՀՀ դրամ: 2009թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ նրա ստաժը կազմում է 48 տարի 9 ամիս, կենսաթոշակի չափը ՝ 40634 ՀՀ դրամ:

Բողոքի քննարկումը դադարեցվել է հարցը դրական լուծվելու կապակցությամբ:

3.13.2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն

Այս մարմնի դեմ ուղղված դիմումները վերաբերել են տարբեր պատճառաբանություններով անձանց որպես գործազուրկ չգրանցելու, բյուրոկրատական քաշքշուքների, դիմումների անհիմն մերժումների, տեղեկատվության չտրամադրման, վճարված գումարները ետ պահանջելու դեպքերին:

Քաղաքացի Ս.Ս.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումում հայտնել է, որ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Մալաթիա-Սեբաստիա համայնքի տարածքային կենտրոնում գրանցված է եղել 2008թ. 3-րդ ամսից, 4 ամիս անց լրացել է իր 55 տարին և իրեն 9-րդ ամսից նշանակվել է կենսաթոշակ: Հետագայում իրենից պահանջել են ետ վերադարձնել մինչև 2008թ.-ի 12-րդ ամիսը ստացած նպաստը:

Դիմումի կապակցությամբ պարզաբանում է պահանջվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետից, ով հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված պատասխանը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածի 3-րդ կետի մեջբերմամբ, հայտնել է, որ կդադարեցնի քաղաքացուց գործազրկության նպաստի հետ գանձման գործընթացի իրականացումը:

Նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ որպես անհիմն հարստացում, ենթակա չեն վերադարձման քաղաքացու մոտ անբարեխղճության բացակայության դեպքում, նրան՝ որպես գոյության միջոց տրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարները, կենսաթոշակները, նպաստները, կյանքին ու առողջությանը պատճառված վնասի հատուցումը, ալիմենտը և այլ դրամական գումարներ:

Բողոքի քննարկումը դադարեցվել է հարցը դրական լուծվելու կապակցությամբ:

3.13.3. Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով /ԲՍՓՀ/

Շարունակվում են բողոքներ ստացվել Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի /այսուհետ՝ ԲՍՓՀ/ գործունեությունից: Քաղաքացիների դժգոհությունները վերաբերել են հաշմանդամության խմբերի տրման կամ այդ խմբերը փոփոխելու մասին

դիմումների անհիմն մերժումներին, պաշտոնատար անձանց կողմից ցուցաբերվող բյուրոկրատական քաշքշուքներին:

Շարունակվում են ստացվել բողոքներ նաև աշխատանքային խեղման արդյունքում ԲՍՓՀ-ի կողմից սահմանված հաշմանդամության ժամկետում տրամադրման ենթակա, սակայն կազմակերպության գործունեության դադարման արդյունքում չտրամադրվող խեղման նպաստի վերաբերյալ: Հարցն արտացոլվել է նաև Պաշտպանի՝ 2006-2008թթ. տարեկան զեկույցներում:

3.13.4. Աշխատանքի պետական տեսչություն

2009թ. ընթացքում շարունակվել է աշխատանքային իրավունքներին առնչվող բողոքների հոսքը, որոնք վերաբերել են գործատուների կողմից վերջնահաշվարկ չկատարելու, վերջնահաշվարկի գումարը չվճարելու, աշխատանքից ազատման մասին պատշաճ ձևով չծանուցելու, ազատման հիմքերի մասին տեղյակ չպահելու, օրենքով սահմանված պահանջների խախտմամբ աշխատանքից ազատելու և այլ դեպքերին:

Նկատի ունենալով, որ այդ բողոքները հիմնականում ուղղված են եղել մասնավոր ընկերությունների ներկայացուցիչ հանդիսացող գործատուների դեմ, դրանք «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն փոխանցվել են ՀՀ աշխատանքի պետական տեսչության քննարկմանը: Արդյունքում որոշ բողքներում բարձրացված հարցերը դրական լուծում են ստացել:

3.14. ՀՀ ֆինանսների նախարարություն

Ֆինանսների նախարարության դեմ ուղղված բողոքներով քաղաքացիները դժգոհություններ են հայտնել ավանդների փոխհատուցման, անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնություն տրամադրելու խնդիրների վերաբերյալ:

Չլուծված են մնում ԽՍՀՄ խնայբանկի 07.05.1988թ. թիվ 98/26 համատեղ հրահանգով սահմանված կարգով Համամիութենական միավորում «Վնեշպոսիլտորգ»-ի 1976թ. թողարկման միասնական չեկեր ունեցող ԽՍՀՄ ֆիզիկական անձանց կողմից ԽՍՀՄ խնայբանկում բացված հատուկ /ռուբլային/ հաշիվներում գտնվող պարտավորությունների

կատարմանն առնչվող հարցերը: Նշված հրահանգի 5.2 կետի համաձայն՝ խնայբանկի կողմից ընդունված չեկերը նույն օրը մարվել են և ոչնչացվել, իսկ այդ գումարների փոխհատուցման պարտավորությունը դրվել է ԽՍՀՄ արտտնտբանկի վրա:

ՀՀ ֆինանսների նախարարությունը մերժել է քաղաքացու պահանջը՝ վերադարձնել նրա գումարին համարժեք արտարժույթ:

Այսպիսով, պարզ չէ, թե 07.05.1988թ. «Վնեշպոսիլտորգ»-ի և ԽՍՀՄ խնայբանկի կողմից սահմանված ուղեցույցով նախատեսված պահանջների պահպանմամբ հատուկ ռուբլային հաշիվ բացած քաղաքացիները ի՞նչ կարգով և ի՞նչ հիմքով պետք է փոխհատուցվեն:

Այս կապակցությամբ պարզաբանում է պահանջվել ՀՀ ֆինանսների նախարարից:

3.15. ՀՀ բնապահպանության նախարարություն

Վերջին տարիների ընթացքում բնապահպանական խնդիրներն էլ ավելի են սրվում: Երևանում և Հայաստանի տարբեր մարզերում ոչ պատշաճ վերահսկողության պատճառով հատվում են ծառեր, ոչնչացվում կամ ոչ նպատակային են օգտագործվում կանաչ գոտիները, շինարարական և արդյունաբերական թափոնները արտանետվում են դրանց համար չսահմանված վայրեր և այլն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները 11.03.2009թ. այցելել են ՀՀ Լոռու մարզ՝ մամուլում հրապարակված ապօրինի ծառահատումների վերաբերյալ փաստը տեղում ուսումնասիրելու համար:

Խումբն այցելել է Ահնիձորի համայնքի Ղլորկուտ, Տանձիձոր և Աթանիղաշ հանդամասեր կոչվող տարածքներ, որտեղ կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ հատված են մի քանի տասնյակ ծառեր, որոնց կոճղերը ՀՀ օրենսդրության համաձայն համարակալված չեն եղել:

Այդ կապակցությամբ Պաշտպանը դիմել է իրավասու մարմիններին՝ նշված տարածքներում կատարված ծառահատումների օրինականության փաստը ստուգելու և ապօրինի ծառահատման փաստեր հայտնաբերելու դեպքում օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

Արդյունքում պարզվել է, որ Լոռու մարզի Ահնիձոր համայնքի Ղլորկուտ, Տանձուտ և Աթանիղաշ հանդամասերը գտնվում են «Դսեղի անտառտնտեսություն» մասնաճյուղի Մոտկորի անտառպետությունում, որտեղ բնապահպանական պետական տեսչության կողմից

2009թ. մարտի 11-ից 26-ը իրականացված ստուգումների ժամանակ արձանագրվել է 31 ապօրինի հատված ծառ, որոնց համար հաշվարկվել է 1533500 ՀՀ դրամի բնությանը պատճառված վնասի հատուցման գումար, իսկ ամբողջ անտառտնտեսության ստուգման արդյունքում արձանագրվել է 84 ապօրինի հատված ծառ և հաշվարկվել է 4352000 ՀՀ դրամի բնությանը պատճառված վնասի հատուցման գումար:

Փաստի առթիվ Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ ոստիկանապետը հայտնել է, որ նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 315 հոդվածի 1-ին և 296 հոդվածի 3-րդ մասերի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն:

Հարցը գտնվում է Պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Մինչ այժմ խնդիրներ են ծագում ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Սևանի քաղաքապետարանի միջև Սևանա լճի ափամերձ տարածքների վարձակալության իրավունքով տրամադրելու իրավասության տարանջատման շուրջ: Օրինակ, միևնույն հողատարածքը ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Սևանի քաղաքապետարանի կողմից միևնույն ժամանակ վարձակալության իրավունքով տրվում են տարբեր անձանց, ինչի հետևանքով տուժում են քաղաքացիները:

Վերոնշյալից բացի, կան մի շարք օրենսդրական և իրավակիրառ պրակտիկային առնչվող խնդիրներ: Չնայած գոյություն ունեցող իրավական կարգավորմանը, միևնույն է, շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով պատճառված վնասի իրական չափերի հաշվարկման արդիական մեթոդների, դրանց տիրապետող մասնագետների և կառույցների բացակայության, ինչպես նաև ֆինանսական միջոցների չհատկացման պատճառներով չեն իրականացվում շարունակական ուսումնասիրություններ և չեն գնահատվում աղտոտման հետևանքով շրջակա միջավայրի և մարդկանց առողջությանը պատճառված վնասի չափերը:

Պետք է արձանագրել շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող հարցերով հանրային իրազեկության ցածր մակարդակը: Թեև ՀՀ կառավարության 28.10.1998թ. թիվ 660 որոշման համաձայն պետք է իրականացվի ՀՀ-ում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկում և ապահովվի հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը, այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությամբ բավարար չափով կարգավորված չէ պետական մարմինների կողմից հասարակությանը բնապահպանական տեղեկատվության տրամադրման ընթացակարգը, հստակեցված չեն շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցությունն ապահովող ընթացակարգերը: Նշված ընթացակարգերի

Ինչ վերաբերում է կանաչ գոտիները բնակչությանը հասանելի դարձնելու խնդիրներին, ապա ստորև բերվող օրինակից կարելի է հետևություն անել:

2009 թվականի օգոստոսի 18-ին «Գոլոս Արմենիի» թերթում տպագրվել է «20 հեկտար բազմապատկած 30 տարվա աշխատանքին» վերնագրով հոդված, որտեղ տեղ են գտել հետևյալ հարցադրումները՝ սոճու անտա՞ռ, թե՞ աղբանոց, ինչո՞ւ է փոխանցվել Ողջաբերդին, այլ ոչ Ջրվեժին:

Համաձայն նշված հոդվածի՝ 2007թ. «Ջրվեժ» անտառապարկի տարածքի քարտեզագրմամբ պարզվել է, որ այն ոչ թե 404 հեկտար է, այլ՝ 423: «Սխալը» իսկույն ուղղվել է՝ «ավելորդ» հեկտարները քարտեզից հանելու միջոցով: Ընդ որում՝ հատվածը պակասեցվել է ոչ թե անտառապարկի տարածքի եզրից, այլ՝ կենտրոնից: 2009 թվականի հունիսին ՀՀ կառավարությունը հաստատել է այդ քարտեզը՝ «ավելորդ» տարածքը Ողջաբերդ համայնքին տրամադրելով: Այդ տարածքով է անցնում անտառապարկը սնուցող հիմնական ջրագիծը, որն անտառապարկի պահպանման համար կենսական նշանակություն ունի: Նշված 20 հեկտար անտառահատվածի օտարումն անտառապարկի տարածքից պատճառաբանվում է նրանով, որ այն հանդիսանում է աղբանոց: Հոդվածագիրը նշել է նաև, որ «Ջրվեժ» անտառապարկի տարածքում առկա են ավելի քան քսան տեսակ բույսեր, որոնք գրանցված են կարմիր գրքում:

Հոդվածում 20 հեկտարի խնդրից բացի, արծարծված է մեկ այլ հարց ևս: Բանն այն է, որ Վարդանյանների ընտանիքի բարեգործական հասարակական կազմակերպությանը վարձակալության իրավունքով հատկացվել է անտառապարկի 32 հեկտար տարածք, և տեղեկություններ կան, որ վարձակալը դիմել է կառավարություն՝ այն սեփականաշնորհելու խնդրանքով:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներն այցելել են «Ջրվեժ» անտառապարկի տարածք և արձանագրել, որ անտառապարկի զգալի հատված ցանկապատված է, նշված տարածքում տեղադրված է ցուցանակ «Գրանդ անտառ. կողմնակի անձանց մուտքը խստիվ արգելվում է» գրառումով:

Այս կապակցությամբ պարզաբանում է պահանջվել ՀՀ բնապահպանության նախարարից, ով պատասխան գրությանը կից ներկայացրել է նյութեր, որոնք վերաբերում են Ջրվեժ անտառ պուրակի տարածքի մակերեսը 400.43 հա-ից 423.8 հեկտար դարձնելուն,

ինչպես նաև անտառապարկի 32 հեկտար տարածքը Վարդանյանների ընտանիքի բարեգործական հասարակական կազմակերպությանը վարձակալության հանձնելուն:

Ստացված նյութերի ուսումնասիրության արդյունքում բնապահպանության նախարարին տեղեկացվել է, որ ուղարկված՝ «ՀՀ բնապահպանության նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության Ջրվեժի անտառապարկի 30 հա վարձակալվող տարածքի անտառավերականգնման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատական» ծրագրի 1-ին կետով նախատեսվել է, որ ծրագրի նպատակներից է նաև հանգստի գոտու հիմնումը: 4.1. կետով նախատեսվել է, որ ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի ներմուծված ծառաթփային բուսատեսակներով կենդանի մի հավաքածու, որը կծառայի որպես հանգստյան գոտի Ջրվեժի անտառապարկի հարավային հատվածում՝ «Գրանդ Պարկ» անվանումով: Ծրագրի 5.2. կետով սահմանվել է, որ դրա իրագործումը թույլ կտա բարելավել անտառապարկի աշխատանքը և ապահովել բնակչության հանգիստը բնության գրկում՝ առանց վնաս հասցնելու պարկի կանաչ տարածքներին:

ՀՀ կառավարության 01.12.2005թ. թիվ 2286-Ն որոշմամբ լրացում է կատարվել ՀՀ կառավարության 18.07.2002թ. թիվ 1046-Ն որոշման մեջ: Որոշմամբ հաստատված՝ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ կանոնադրության 29-րդ կետը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Կազմակերպության համապատասխան տարածքներում հողամասերը կարող են օրենքով սահմանված կարգով վարձակալությամբ տրամադրվել՝ հանգստի կազմակերպման նպատակով՝ մինչև 25 տարի, հիմնական շինություններով կառուցապատման դեպքում՝ մինչև 60 տարի, իսկ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով՝ մինն 10 տարի ժամկետներով»:

Գրությամբ նախարարին խնդրվել է պարզաբանել, եթե «Ջրվեժ» անտառապարկի կենտրոնական մասում 25 տարի վարձակալության իրավունքով տրամադրված 30.22 հա տարածքի օգտագործման նպատակներից է նաև բնակչության հանգստի կազմակերպումը, ապա ի՞նչ է նշանակում ցանկապատված տարածքում տեղադրված ցուցանակը՝ «Գրանդ անտառ կողմնակի անձանց մուտքը խստիվ արգելվում է» գրառումով, ովքե՞ր են կողմնակի անձինք և ինչպե՞ս կարող են ցանկացողները իրենց հանգիստն անցկացնել այդ տարածքում:

Նամակին ի պատասխան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարը հայտնել է, որ տարածքի վարձակալը ս.թ. նոյեմբերի 25-ի դրությամբ հանել է վերոնշյալ գրառումներով ցուցանակները՝ ապահովելով կողմերի միջև կնքված պայմանագրային պարտավորությունները:

3.16. Տրանսպորտի և կապի նախարարություն

2009թ. ընթացքում բազմաթիվ բողոքներ են ստացվել կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող փոխադրողների կողմից չվացուցակների պահանջները խախտելու և ավտոտրանսպորտային միջոցների անխափան աշխատանքը ապահովելու վերաբերյալ: Նշված բողոքները եղել են հիմնականում այն ժամանակ, երբ Երևանում ընդդիմության ներկայացուցիչները հրավիրել են հանրահավաքներ:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահը Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ 2009թ. մարտի 1-ին, մայիսի 1-ին և մայիսի 15-ին Վանաձոր-Երևան ուղղությամբ ուղևորափոխադրում փաստացի չի իրականացվել, չնայած այն հանգամանքին, որ ավտոկայանում առկա էին մեկնելուն պատրաստ տրանսպորտային միջոցներ: Իր հարցին, թե որ՞ն է քաղաքացիների տեղափոխումը չիրականացնելու պատճառը, վարորդները պատասխանել են, որ «վերևից բանավոր հրահանգ կա»: Նշված օրերին Վանաձոր քաղաքի ավտոկայանում ուղևորների հոծ բազմություն է կուտակվել, որոնց մեծամասնությունը հանդիսացել են Երևան քաղաքում աշխատող, ուսանող կամ բնակվող քաղաքացիներ, որոնք որևէ հիմնավոր բացատրություն չեն ստացել ստեղծված իրավիճակի մասին, ավելին չեն տեղեկացվել, թե ե՞րբ կշտկվի ստեղծված իրավիճակը:

Այս փաստի առթիվ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին առաջարկվել է ներկայացնել պարզաբանում, որը, ի թիվս այլ տեղեկությունների, հայտնել է, որ 2009թ. մարտի 1-ին, մայիսի 1-ին և մայիսի 15-ին «Հայավտոկայան» ՓԲ ընկերության բոլոր ավտոկայանների գործունեությունը կազմակերպվել է սահմանված աշխատանքային գրաֆիկին համապատասխան:

Ինչ վերաբերում է 2009թ. մարտի 1-ին, մայիսի 1-ին և մայիսի 15-ին Վանաձոր-Երևան միկրոավտոբուսային երթուղիով ուղևորափոխադրումներ չիրականացնելուն, ապա հայտնել է, որ ՀՀ տրանսպորտային տեսչության կողմից կատարված ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ նշված օրերին ուղևորափոխադրումների թվաքանակի ավելացման պատճառով առաջացել են ուղևորների կուտակումներ և Վանաձոր-Երևան միկրոավտոբուսային երթուղու սպասարկման համար «Ոսկեթև» ՍՊ ընկերությունում չվացուցակով նախատեսված տրանսպորտային միջոցները չեն բավարարել ուղևորների պահանջարկը:

Նախարարը հայտնել է նաև, որ Վանաձոր-Երևան-Վանաձոր երթուղին սպասարկվում է նաև «Միլլարեն» ՍՊ ընկերությանը պատկանող ավտոբուսների միջոցով և վերը նշված օրերին ընկերության կողմից իրականացվող ուղևորափոխադրումների վերաբերյալ բողոքներ չեն արձանագրվել: Միաժամանակ, ՀՀ տրանսպորտային տեսչության կողմից «Ոսկեթև» ՍՊ ընկերությանը զգուշացվել է՝ ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը առարկել է Նախարարի կողմից ներկայացված պարզաբանումների՝ իրականությանը համապատասխանելու կապակցությամբ և բերել որոշակի հակափաստարկներ:

Նշենք, որ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումների մասին քաղաքացիների ահազանգերի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմի աշխատակիցների կողմից 2009թ. մարտի 1-ին 9^{25}-ից մինչև 14^{30}-ն, 2009թ. մայիսի 15-ի ժամը 13^{30}-ից մինչև 14^{25}-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է Էջմիածին-Երևան մայրուղու դիտարկում: Պարզվել է, որ Երևան-Էջմիածին մայրուղու՝ Փարաքարում տեղակայված ՀՀ ճանապարհային ոստիկանության հենակետում ճաղավանդակով փակված է եղել մայրուղու Երևան եկող հատվածի երեք շարքերից երկուսը: Ոստիկանները կանգնեցրել են դեպի Երևան եկող տրանսպորտային այն միջոցները, որոնցում եղել են երեք և ավելի ուղևորներ կամ եթե դրանց ապակիները մգեցված են եղել: Որոշ դեպքերում կատարվել է նաև տրանսպորտային միջոցի զննում: Արձանագրվել է, որ ավելի քան մեկուկես ժամվա ընթացքում Էջմիածին կամ Արմավիր քաղաքներից դեպի Երևան եկող որևէ հասարակական տրանսպորտ՝ ավտոբուս կամ երթուղային տաքսի չի անցել:

Դրա պատճառը պարզելու նպատակով խումբն այցելել է Էջմիածին քաղաք, որտեղ պարզվել է, որ Երևան մեկնող տրանսպորտի համար նախատեսված կայանատեղում վաղ առավոտից բացի տաքսի մեքենաներից, որևէ այլ տրանսպորտային միջոց չի կայանել: Էջմիածնում գտնվելու ժամանակ խումբն ահազանգ է ստացել, որ նույն իրավիճակն է նաև Արմավիր քաղաքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին գրություն է ուղարկվել, որ օբյեկտիվ իրականությունը պարզելու նպատակով՝ այսուհետ, նմանատիպ բողոքների ստացման դեպքում Պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմի արագ արձագանքնման խումբը մոնիտորինգի կենթարկի յուրաքանչյուր դեպք՝ օգտագործելով լուսանկարահանող և ձայնագրող սարքեր: Միաժամանակ, նախարարին առաջարկվել է ուղարկել Վանաձոր-Երևան-Վանաձոր և Էջմիածին-Երևան-Էջմիածին երթուղիների չվացուցակները:

Այս գրությունից հետո Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահը բանավոր հայտնել է, որ ուղևորափոխադրումներ իրականացնող փոխադրողների կողմից չվացուցակների պահանջները չկատարելու դեպքեր չեն արձանագրվել:

Բողոքներ են ստացվել նաև ՀՀ կառավարության 08.07.1997թ. թիվ 251 որոշմամբ հաստատված ցանկի վերաբերյալ: Խնդիրն այն է, որ թեև վերոնշյալ ցանկը վերաբերում է առանձին խմբերի քաղաքացիների երթևեկության արտոնություններին ՀՀ քաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներով՝ անկախ սեփականության ձևից /բացի տաքսուց/, սակայն 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների և բռնադատվածների համար արտոնությունը վերաբերում է ներքաղաքային ուղևորատար տրանսպորտին, բացառությամբ ավտոբուսից: Միաժամանակ հիշյալ որոշմամբ հաստատված ցանկով նախատեսված են արտոնություններ նախկին ԽՍՀՄ հերոսների համար, այնինչ, մամուլում տեղ գտած հրապարակումների համաձայն՝ սույն թվականի նոյեմբերի 15-ին մահացել է Հայաստանում բնակվող Խորհրդային Միության 103 հերոսներից վերջինը:

Գտնում ենք, որ ՀՀ կառավարության 08.07.1997թ. թիվ 251 որոշմամբ հաստատված ցանկը վերանայման կարիք ունի:

3.17. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ

2009թ. ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները այցելություններ են կատարել մարզեր՝ ստացված բողոքները տեղում քննարկելու, ինչպես նաև մարզերի բնակիչների խնդիրներին ծանոթանալու համար:

Բնակիչներին հուզող հարցերը քննարկվել են մարզերում գործող հասարակական կազմակերպությունների, մարզպետարանների ու քաղաքապետարանների ներկայացուցիչների, անհրաժեշտության դեպքում՝ նաև քաղաքացիների հետ:

Որոշ հարցերի տեղում տրվել են լուծումներ, դրանց մի մասի վերաբերյալ գրություններ են հասցեագրվել ՀՀ կառավարություն կամ այլ պետական մարմիններ:

3.17.1. Մարզպետարաններ

Բազմաթիվ են եղել աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակվող անօթևան ընտանիքներից ստացված բողոքները, որոնք վերաբերել են ՀՀ կառավարության կողմից նոր կարգ ընդունվելու արդյունքում անօթևանների հաշվառման ցուցակներից դուրս մնալու հանգամանքին:[20]

Մարզերում առկա են բազմաթիվ բազմաբնակարան վթարային շենքեր, որոնց ամրացման կամ շենքի բնակիչներին այլ բնակարաններով ապահովելու ծրագրեր պետությունը չի իրականացնում՝ միջոցներ չունենալու պատճառով:

Բողոքներ են եղել նաև մարզերում գործող դպրոցների, առողջապահական հիմնարկների աշխատակիցներց՝ մարզպետների կողմից իրենց աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակիչներ Հ.Պ.-ն և Թ.Կ.-ն Պաշտպանին հասցեագրած դիմում-բողոքով հայտնել են, որ աշխատում են «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ Հ.Պ.-ն որպես գլխավոր հաշվապահ, իսկ Թ.Կ.-ն որպես գլխավոր տնտեսագետ: Գեղարքունիքի մարզպետի կողմից իրենց աշխատանքային իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ ՀՀ Նախագահին դիմելու արդյունքում ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից Գեղարքունիքի մարզպետարանում և «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են ՀՀ աշխատանքային օրենսդրության մի շարք դրույթների խախտումներ, որոնց վերացման նպատակով Գեղարքունիքի մարզպետին ներկայացվել է համապատասխան միջնորդագիր՝ մինչև հոկտեմբերի 25-ը կատարման ժամկետով:

Դիմումատուները բողոքել են, որ միջնորդագրի պահանջները Գեղարքունիքի մարզպետի կողմից չեն կատարվել, իրենց իրավունքների խախտումները չեն վերացվել:

Այդ կապակցությամբ Պաշտպանի կողմից պարզաբանումներ են պահանջվել Գեղարքունիքի մարզպետից և ՀՀ աշխատանքի պետական տեսչության պետից:

Բողոքը գտնվում է քննարկման փուլում:

Դիմումատու Ա.Զ.-ի բողոքի քննարկման ընթացքում պարզվել է, որ նրա՝ Գյումրի քաղաքում գտնվող բնակարանը երկրաշարժի հետևանքով քանդվել է: Ապաստան չունենալու պատճառով տեղափոխվել է Երևանի «Էրեբունի» հյուրանոց, որը 2005թ. վաճառվել և իրեն տրվել է 3-օրյա ժամկետ հյուրանոցն ազատելու համար: Որպես օգնություն՝ Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամի կողմից իրեն տրամադրվել է 3700 ԱՄՆ դոլար, որով

[20] Այդ մասին մանրամասն տես սույն զեկույցի 3.2. բաժնում:

բնակարան գնելը եղել է անհնար: Ուստի, նա հարկադրված է եղել գնել շարժական տնակ: Դիմել է Գյումրու քաղաքապետարան՝ իրեն որպես անօթևան հաշվառելու խնդրանքով, սակայն իր խնդրանքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ ստացել է գումար, հետևաբար իր բնակարանային ապահովվածության խնդիրը համարվում է լուծված:

Դիմումի քննարկման ընթացքում պարզաբանումներ են պահանջվել Գյումրու քաղաքապետից, ՀՀ քաղաքաշինության նախարարից և ՀՀ Շիրակի մարզպետից, ովքեր գտել են, որ Ա.Զ.-ն օրինական հիմքերով է հանվել անօթևան ընտանիքների հաշվառման ցուցակից՝ նկատի ունենալով, որ նա օգտվել է բնակարանային պայմանների բարելավման իրավունքից: Հայտնել են նաև, որ այդ գումարը Ա.Զ.-ին հատկացվել է որպես բարեգործական օգնություն՝ բնակարանների գնման վկայագրերի ձեռք բերման նպատակով: Սակայն վկայագիրն անվանական փաստաթուղթ է, որը հավաստում է վկայագիր ստացած անձի կողմից ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից պատրաստի բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունքը: Ուստի, անհասկանալի է, թե ինչպե՞ս կարող է մասնավոր անձի կողմից գումար տրամադրվել բնակարանի գնման վկայագիր ձեռք բերելու նպատակով:

Պաշտպանը գտել է, որ այդ գումարի տրամադրումը ինքնին չի հանդիսանում բնակարանային պայմանների բարելավում, հետևաբար, Ա.Զ.-ն չպետք է հանվեր անօթևան անձանց հաշվառման ցուցակից, ուստի, Պաշտպանի որոշմամբ մարդու իրավունքների խախտում է համարվել ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ հաստատված Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգի 12-րդ կետի «ա» ենթակետի հիմքով քաղաքացուն անօթևան ընտանիքների բնակարանային հերթացուցակից հանելը, և առաջարկվել է Գյումրու քաղաքապետին հաշվառել նրան բնակարան ստանալու համար:

Քաղաքացին ի լրումն դիմումով հայտնել է, որ Պաշտպանի որոշումը չի կատարվել, և իր բնակարանային հերթը չի վերականգնվել:

29.10.2009թ. գրություն է հասցեագրվել Գյումրու քաղաքապետին՝ առաջարկելով ներկայացնել տեղեկատվություն, որին ի պատասխան Գյումրու քաղաքապետի տեղակալը հայտնել է, որ Ա.Զ.-ի բնակարանային հերթը վերականգնելու մասին Պաշտպանի որոշման օրինակը կից գրությամբ ուղարկվել է ՀՀ փոխվարչապետին՝ համապատասխան հանձնարարություն ստանալու համար, սակայն պատասխան չի ստացվել: Հերթի վերականգնումը կկատարվի ՀՀ փոխվարչապետից հանձնարարություն ստանալուց հետո:

Հաշվի առնելով, որ Ա.Զ.-ն երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների հերթացուցակից հանվել է Շիրակի մարզպետի գրության համաձայն՝ հարցը Պաշտպանի

կողմից քննարկվել է Շիրակի մարզպետի հետ՝ մարզ կատարած այցելության ժամանակ, միաժամանակ գրություն է ուղարկվել մարզպետին:

Պատասխան գրությամբ Շիրակի մարզպետը հայտնել է, որ Ա.Զ.-ին երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում հաշվառելու նպատակով Գյումրու քաղաքապետին առաջարկվել է քննարկել հարցը և օրենսդրությամբ սահմանված կարգով լուծում տալ:

Պաշտպանը վերոգրյալի մասին 23.12.2009թ. գրությամբ տեղյակ է պահել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարին՝ պարզաբանում ստանալու ակնկալիքով:

Մի քանի քաղաքացիներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած տարբեր դիմումներով հայտնել են, որ 1992թ.-ից Արզնի համայնքի վարչատարածքի I թաղամասի թիվ 189 հողակտորը և IV թաղամասի թիվ 33 հողակտորը հանդիսանում է իրենց սեփականությունը /հիմք՝ սեփականության իրավունքի պետական ակտը/, սակայն Արզնիի գյուղապետարանը, առանց իրեն տեղյակ պահելու, այդ հողատարածքը վաճառել է այլ անձի՝ փոխարենն իրեն առաջարկելով մեկ այլ հողատարածք, ինչին իրենք համաձայն չեն:

Վերոգրյալի կապակցությամբ Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Կոտայքի մարզպետը հայտնել է, որ նշված քաղաքացիներին հատկացված հողամասերի տեղը վերջին քարտեզագրման ժամանակ, առանց հաշվի առնելու սեփականատերերի համաձայնությունը, փոփոխության է ենթարկվել, և նրանք չեն ընդգրկվել հողհատկացման արխիվային ցուցակներում, ինչի հետևանքով անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից նրանց հողամասերի պետական գրանցումը մերժվել է: Հայտնել է նաև, որ հարցը հնարավոր է լուծել բացառապես դատական կարգով:

Հարցի կապակցությամբ Պաշտպանի հարցմամբ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի դիրքորոշումն ստանալուց հետո բողոքին կտրվի համապատասխան ընթացք:

3.17.2. Երևանի քաղաքապետարան

Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների տարեկան զեկույցներում բազմիցս վեր են հանվել քաղաքաշինության ոլորտին վերաբերող օրենսդրական խնդիրները, մասնավորապես այն առումով, որ շատ դեպքերում դժվար էր լինում տարանջատել Երևանի քաղաքապետարանի և թաղապետարանների պատասխանատվությունը ինքնակամ

կառույցների իրականացումը կասեցնելու, կանխարգելելու կամ դրանց հետևանքները վերացնելու հարցերում:

26.12.2008թ. ընդունվեց «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեց Երևան քաղաքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները: Երևանը դարձավ համայնք, իսկ Երևանի համայնքները՝ վարչական շրջաններ:

Օրենքով ամրագրվեց, որ Երևանի քաղաքապետը կազմակերպում է ինքնակամ կառուցման կասեցման, ինքնակամ կառույցների վերացման, ապօրինի հողօգտագործման կասեցման ուղղությամբ վարչական շրջանի ղեկավարների կողմից կատարվող աշխատանքները:

Չնայած դրան, 2009թ. ընթացքում Պաշտպանին են դիմել բազմաթիվ քաղաքացիներ, որոնք իրենց բողոքներն են հայտնել ինքնակամ շինարարությունը չկանխելու՝ հատկապես բակային տարածքներում, դրանց հետևանքները չվերացնելու և հողազավթումների վերաբերյալ: Բողոքների նման քանակը հիմք է տալիս ենթադրելու, որ Երևանի քաղաքապետարանի կողմից ինքնակամ կառուցման կասեցման, դրանց հետևանքների վերացման, ապօրինի հողազավթումները կանխելու ուղղությամբ կազմակերպվող աշխատանքներն արդյունավետ չեն, բացի այդ, միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում:

Բողոքներ են եղել նաև քաղաքաշինական նորմերի խախտումներով տրված փաստաթղթերի հիման վրա կառուցապատումների վերաբերյալ, որոնցով առանց հաշվի առնելու հարակից բնակելի տների, շենքերի կամ այլ շինությունների միջև եղած հեռավորությունը, հակահրդեհային և ինսոլյացիոն պահանջները թույլատրվում են կատարել շինարարական աշխատանքներ:

Բողոքների մի մասն էլ արդյունք է այն բանի, որ բնակիչները «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի և «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկման և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 28.10.1998թ. թիվ 660 որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան չեն իրազեկվում նախատեսվող կառուցապատումների մասին, նախագծերը չեն ներկայացվում քննարկման:

Հաճախ հակասություններ են առաջանում տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինարարության համար տրվող փաստաթղթերի՝ ՀՀ օրենսդրության համապատասխանելիության հարցը որոշելու վերաբերյալ: Օրինակ,

Երևանի քաղաքապետարանը պնդում է, որ իր կողմից տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին, իսկ ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությունը հիմնավորում է, որ նույն այդ փաստաթղթերով խախտվել են քաղաքաշինական նորմերն ու կանոնները:

Ուշադրության է արժանի ինչպես մամուլում հրապարակված, այնպես էլ Պաշտպանին դիմած քաղաքացիների ներկայացրած տեղեկատվությունն այն մասին, որ Երևան քաղաքի տարբեր հատվածներում (բակային և ընդհանուր օգտագործման տարածքներում) պարբերաբար հատվում են ծառեր, ոչնչացվում կանաչ տարածքներ: Այդ կապացությամբ Պաշտպանի գրություններին Երևանի քաղաքապետարանից պատասխանել են, որ ծառահատումներ չեն իրականացվել, այլ կատարվել են ծառերի երիտասարդացման աշխատանքներ: Իսկ երբ արդեն նշված տարածքներում սկսվել են շինարարական աշխատանքներ, արդեն անհնար է եղել ապացուցել ծառահատումների փաստը:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ որոշ պետական մարմինների կողմից ՀՀ օրենսդրության՝ իրենց ձեռնտու ձևով մեկնաբանելու արդյունքում տուժում են քաղաքացիները: Օրինակ, բազմաբնակարան շենքին կից իրականացված ինքնակամ կառույցը Երևանի քաղաքապետի որոշմամբ ճանաչվում է պետական սեփականություն, որը մինչ քաղաքացուն օտարելը պետք է ենթարկվի պետական գրանցման: ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեն պատճառաբանում է, որ կառույցի չափագրման և գրանցման գումարը պետք է վճարի Երևանի քաղաքապետարանը, իսկ քաղաքապետարանն էլ գտնում է, որ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեն պետք է այդ աշխատանքները կատարի առանց որևէ գումարի վճարման: Նշվածի մասին Պաշտպանը գրավոր տեղեկացրել է ՀՀ վարչապետին, ով տվել է հանձնարարական կադաստրի պետական կոմիտեին և առաջարկել Երևանի քաղաքապետին քննարկել հարցը և տալ համապատասխան լուծում, սակայն խնդիրը մինչ օրս չի լուծվել:

Շարունակվում են բողոքներ ստացվել հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գոտիներում գույքային իրավունքներ ունեցող անձանցից՝ հիմնականում փոխհատուցման խնդիրների, ինչպես նաև պետության կողմից կառուցապատողների նկատմամբ հսկողության բացակայության վերաբերյալ:

Այսպես, «Գրադինվեստ» ՍՊԸ-ն մինչև 2008թ. հունիս ամիսը Երևանի Եկմալյան փող. 1 հասցեում պետք է կառուցեր բազմաբնակարան շենք և այդտեղ բնակարաններ հատկացներ պայմանագրի կողմ հանդիսացող բնակիչներին: Շենքից մինչև օրս կառուցվել է երկու հարկ, և շինարարական աշխատանքները գրեթե դադարեցվել են:

Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից հայտնել են, որ նշված հասցեում կառուցվող շենքի շինարարական աշխատանքները վերսկսվել են և իրականացվում է լայնածավալ շինարարություն: Կառուցվել է 0-ական նիշից բարձր 2 հարկ, իսկ բնակիչների հետ վարվում են բանակցություններ: Միաժամանակ հայտվնել է, որ «Գրադինվեստ» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքը մշտապես լինելու է Երևանի քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում:

Քաղաքապետարանի պատասխանից հետո մամուլում տեղ գտած հրապարակումից և բնակիչների հայտնած տեղեկատվությունից պարզվել է, որ «Գրադինվեստ» ՍՊԸ-ն չի կատարում իր ստանձնած պարտավորությունները: Շինարարության վրա աշխատում են ընդամենը երեք-չորս բանվորներ և պարզ է, որ նման տեմպերով նրանք չեն կարող շենքը կառուցել ողջամիտ ժամկետներում: «Գրադինվեստ» ՍՊԸ-ն չի կատարում նաև պայմանագրի այն կետը, որով պարտավորվել է բնակիչներին՝ որպես վարձավճար, տրամադրել ամսական 100 դոլարին համարժեք դրամ: Ինչ վերաբերվում է բնակիչների հետ վարվող բանակցություններին, ապա դիմումատուների պնդմամբ՝ «Գրադինվեստ» ՍՊԸ-ի տնօրինությունը խուսափում է իրենց հետ հանդիպել:

2009թ. ընթացքում բազմաթիվ բողոքներ են ստացվել նաև «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի շրջանակում անշարժ գույքի ոչ ճիշտ օրինականացման կամ օրինականացման անհիմն մերժման վերաբերյալ:

Բնակիչները բողոքել են, որ օրինականացման աշխատանքները պատշաճ չեն կազմակերպվում, լինում են ձգձգումներ, քաղաքապետարանի և կադաստրի աշխատակիցների կողմից կատարված չափագրումների արդյունքում ի հայտ են գալիս մակերեսների զգալի տարբերություններ, լինում են չհիմնավորված մերժումներ կամ, ասենք, տասնյակ տարիներ քաղաքացու օգտագործած հողամասը օրինականացվում է հարևանի անվամբ:

Խնդրահարույց է նաև Երևանի քաղաքապետի 2007թ. նոյեմբերի 28-ի թիվ 5082-Ա որոշմամբ ստեղծված պետական միջոցների հաշվին վթարային բնակելի շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու աշխատանքներն իրականացնող հանձնաժողովի գործունեությունը, քանի որ քաղաքացիներին պատասխան է տրվում, որ խնդրի վերջնական լուծման համար այն պետք է քննարկվի հանձնաժողովի առաջիկա նիստում, որի գումարումը ձգձգվում է անորոշ ժամկետով /մի քանի ամսով, նույնիսկ՝ մեկ տարով/:

Կարծում ենք, որ հանձնաժողովի աշխատանքների թերի կազմակերպման պատճառը կանոնակարգի բացակայությունն է:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի հիման վրա, որով որոշվել է քաղաքացիներին բնակարան հատկացնել, քաղաքապետարանից պատասխանում են, որ հարցը քննարկվել է Երևանի քաղաքապետի 2009թ. օգոստոսի 11-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» հ. 7592-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից, որի արդյունքում որոշվել է անհատական կարգով ուսումնասիրել բնակարանի հատկացման յուրաքանչյուր հարց և բավարար հիմքերի առկայության պարագայում՝ Երևանի քաղաքապետի քննարկմանը ներկայացնել բնակարանի տրամադրման հարցը /գործ թիվ 1-0850/09 քաղաքացի Ս.Կ./:

Հիշեցնենք, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ոչ թե քննարկվում, այլ պարտադիր կատարվում են կամ դրա հետ համաձայն չլինելու դեպքում բողոքարկվում են օրենքով նախատեսված կարգով:

Բնակարանային պայմաններին վերաբերող խնդիրներից կարելի է առանձնացնել այն, որ բազմաթիվ բնակիչներ տասնյակ տարիներ բնակվել են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում, հանրակացարաններում, տարիների ընթացքում կատարել են գույքի անբաժանելի բարելավումներ, հոգացել պահպանման ծախսերը: Զբաղեցրած բնակարանները սեփականաշնորհելու խնդրանքով բազմիցս դիմել են Երևանի քաղաքապետարան, սակայն ստացել են պատասխան, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի ավագանու կողմից պետք է սահմանվի Երևանի սեփականություն համարվող գույքի կառավարման կարգ, որից հետո հնարավոր կլինի զբաղեցրած սենյակները սեփականաշնորհել դրանց տիրապետողներին: Երևանի ավագանու ընտրությունից անցել է կես տարուց ավել ժամանակ, կայացել են ավագանու բազմաթիվ նիստեր, սակայն վերոնշյալ կարգը դեռևս չի ընդունվել:

Նշված հարցերով Մարդու իրավունքների պաշտպանի կատարած հարցումներին պատասխանվում են օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ, իսկ որոշ դեպքերում էլ ընդհանրապես չեն պատասխանվում նույնիսկ մի քանի հիշեցումներից հետո:

Եղել են բողոքներ, որոնցով քաղաքացիները հայտնել են, որ դիմել են Երևանի քաղաքապետարան այս կամ այն պահանջվող փաստաթուղթը ստանալու նպատակով և իրենց պարտադրել են նախապես «Երևան» հիմնադրամին տրամադրել գումարներ, այլապես, սպառնալով, որ քաղաքապետարանին ուղղված դիմումը կմերժվի: Գումարներ վճարելուց հետո էլ, երբ քաղաքացիների դիմումները, այնուամենայնիվ, մերժվել են, իսկ

նրանք պահանջել են վերադարձնել վճարված գումարները /ինչը մի քանի հարյուր հազար դրամ է/, պատասխան են ստացել, որ գումարները օգտագործվել են բարեգործական նպատակներով:

Իհարկե դժվար է ապացուցել՝ քաղաքացիները հոժարակա՞մ են վճարել այդ գումարները, թե՞ հարկադրված: Սակայն նման բողոքներից, կարծում ենք, կարելի է հետևություն անել քաղաքացիների իրական կամքի մասին:

Մեկ այլ խնդիր է մի շարք վճիռներով Երևանի քաղաքապետարանի՝ որպես պարտապան հանդես գալը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննարկվում է երեք բողոք, որոնց համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը չի կատարում օրինական ուժի մեջ մտած վճռի պահանջները, իսկ ներգործության միջոցներ համարվող վարչական կամ քրեական պատասխանատվությունը, ինչպես արդեն նշել ենք, հարկադիր կատարողների կողմից չեն կիրառվում, եթե պարտապանը պետական մարմին կամ պաշտոնատար անձ է:

Վերոնշյալ խնդրի շուրջ դեռևս 2008թ. գրություն է ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարին, որը ծառայողական քննություն է նշանակել, սակայն ապարդյուն: 2009թ. գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազին, սակայն նույնպես դրական շարժ չի արձանագրվել: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 01.10.2009թ. գրություն է ուղարկել ՀՀ նախագահի աշխատակազմ:

Հարցը գտնվում է քննարկման փուլում:

Երևան քաղաքի բնակիչ Ա.Մ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումում հայտնել է, որ իր սեփականությունը հանդիսացող տան հարևանությամբ՝ ընդամենը 20սմ հեռավորության վրա, ընթանում է շենքի շինարարություն, որի պատուհաններից ամբողջությամբ տեսանելի է իր տունն ու բակը:

Դիմել է Երևանի քաղաքապետարան և ստացել պատասխան առ այն, որ Երևանի քաղաքապետարանի կողմից տրվել է բնակելի տան վերակառուցման թույլատվություն, գոյություն ունեցող հատակագծային սահմաններում՝ հարկայնության ավելացմամբ:

Բողոքի կապակցությամբ Պաշտպանի կողմից պահանջված պարզաբանումների արդյունքում տրվել են հակասական պատասխաններ:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը ներկայացրած պարզաբանմամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի հետ 29.07.2008թ. համաձայնեցված նախագծի և 08.08.2008թ. տրված շինարարության թույլտվության համաձայն՝ նախատեսված է իրականացնել երկհարկանի բնակելի տան վերակառուցման աշխատանքներ /2 հարկ և մանսարդային հարկի ավելացում/ և շինարարական աշխատանքները կառուցապատողի կողմից իրականացվում են ըստ համաձայնեցված նախագծի: Կառուցվող օբյեկտի

նախագծային փաստաթղթերը ենթարկվել են փորձաքննության և «Քաղսեյսմշին և փորձաքննություն» ՍՊԸ-ի կողմից տրվել է համապատասխան դրական եզրակացություն:

ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության պետը հայտնել է, որ կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ վիճահարույց հասցեում կառուցվում է չորս հարկանի բնակելի տուն, մանսարդային հարկով՝ համաձայն Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի կողմից 2008 թվականի ապրիլի 30-ին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա մշակված, 2008 թվականի հուլիսի 29-ին համաձայնեցված նախագծի և Երևանի քաղաքապետարանի կողմից 2008 թվականի օգոստոսի 8-ին տրված շինարարության թույլտվության: Կառուցվող բնակելի տան քաղաքաշինական փաստաթղթերը ձևակերպված են Հայաստանի Հանրապետությունում գործող կարգերի խախտումներով՝ պահպանված չէ հեռավորության, արևահարության, լուսավորության, տեսանելիության և հակահրդեհային պահանջները /СНИП 2.07.01-89,2.12 կետի և հակահրդեհային պահանջները՝ աղյուսակ 1/: Շինարարության թույլտվությունը տրվել է ՀՀ կառավարության 02.02.02թ. թիվ 91 որոշման 11 կետի պահանջի խախտումով:

Դիմումի քննարկման արդյունքում ձեռք բերված փաստերը թույլ են տվել եզրակացնելու, որ Երևանի քաղաքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերը, մասնավորապես՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը, ձևակերպվել է ՀՀ գործող օրենսդրության խախտումներով, ինչը հիմք է հանդիսացել նախագծի մշակման, շինարարության թույլտվության տրման և շինարարության իրականացման համար: Արդյունքում խախտվել է դիմումատուի սեփականության իրավունքը:

Հիմք ընդունելով դիմում-բողոքի քննարկման ընթացքում ձեռք բերված տվյալները՝ Պաշտպանի կողմից 05.11.2009թ. կայացվել է որոշում, որով մարդու իրավունքների խախտում է դիտվել Երևանի քաղաքապետարանի՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տված աշխատակցի գործողություններում և առաջարկվել է Երևանի քաղաքապետին լուծել նշված պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու հարցը:

Երևանի քաղաքապետարանից ստացված պարզաբանման համաձայն Պաշտպանի առաջարկը չի ընդունվել և ներկայացվել է նախկին դիրքորոշումը:

Երևան քաղաքի բնակիչ Գ.Զ.-ն հայտնել է, որ 2008թ. նոյեմբերից դիմել է Երևանի քաղաքապետարան սեփականության իրավունքով իրեն պատկանող շենքի նպատակային նշանակության փոփոխման խնդրանքով, սակայն հարցը անհիմն ձգձգվում է: 05.12.2008թ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությունից

ստացել է գրություն առ այն, որ Երևանի քաղաքապետարան անհրաժեշտ է ներկայացնել հողամասի տեղագրական հանույթը /նշելով դիտարկվող տարածքը/:

22.12.2008թ. ներկայացրել է նշված փաստաթուղթը, ինչից մեկ ամիս անց Երևանի քաղաքապետարանից կրկին ստացել է գրություն այն մասին, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության մասնագիտական եզրակացության համաձայն շինության տեղագրական հանույթի և անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականի միջև առկա է անհամապատասխանություն: Անհամապատասխանությունը ճշտելուց հետո, 04.02.2009թ. կրկին դիմել է Երևանի քաղաքապետարան, սակայն ստացել է մեկ այլ գրություն, ըստ որի՝ իր հարցը հնարավոր կլինի քննարկել ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի մյուս սեփականատերերի համաձայնությունը, ինչպես նաև տարածքի օտարման հիմքերը /թաղային ավագանու որոշումը, առուվաճառքի պայմանագիրը/ ներկայացնելու դեպքում:

Դիմումատուն նաև հայտնել է, որ իր հարևանները՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի մյուս սեփականատերերը, արդեն փոխել են իրենց շենքերի նպատակային նշանակությունն առանց իր համաձայնության, ինչից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանում շենքերի նպատակային նշանակությունը փոխելիս նրանցից չեն պահանջել նման փաստաթուղթ:

Գործի հանգամանքներից, փաստորեն, հետևում է, որ Գ.Զ.-ի նկատմամբ ցուցաբերվել է խտրական մոտեցում: Այդ կապակցությամբ Պաշտպանի կողմից պահանջված պարզաբանմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը հայտնել է, որ քաղաքացի Գ.Զ.-ի դիմումի կապակցությամբ ընդունվել է Երևանի քաղաքապետի 2009թ. ապրիլի 29-ի՝ շինության գործառական նշանակությունը փոխելու և բնակելի ֆոնդում ընդգրկելու մասին հ. 349-Ա որոշումը, ինչի արդյունքում խնդիրը ստացել է վերջնական լուծում:

Բողոքի քննարկումը դադարեցվել է դրանում բարձրացված հարցը դրական լուծվելու կապակցությամբ:

Երևան քաղաքի Աղբյուր Սերոբ փողոցի բնակիչները Պաշտպանին հասցեագրած դիմումում հայտնել են, որ 1988-1992թթ. բռնագաղթել են Ադրբեջանից և բնակություն են հաստատել Երևանի Աղբյուր Սերոբ փողոցի NN 46, 48, 50, 52, 54, 110, 112 լքյալ տներում, որտեղ ապրում են մինչև օրս: Այդ լքյալ տներում տարիներ շարունակ բնակվել են նաև տեղաբնակ հայաստանցիներ: Տները սեփականաշնորհելու խնդրանքը Արաբկիր համայնքի ղեկավարի կողմից մերժվել է այն հիմքով, որ այդ տարածքում դեռևս 1980 թվականից պետք է

իրականացվի Աղբյուր Սերոբ և Բաբայան փողոցները միացնող մայրուղու շինարարությունը, որը հեռանկարային ծրագրից հանված չէ:

Արաբկիրի թաղապետարանը 1998թ.-ին առաջարկել է ազատել ապօրինի զբաղեցրած տարածքները, սակայն նկատի ունենալով փախստականների վերաբերյալ ՀՀ կառավարության 29.04.1992թ. թիվ 255 որոշման պահանջները՝ վտարումները կասեցվել են՝ մինչև մշտական բնակության վայր տեղափոխվելու հարցի լուծումը կամ որևէ կացարանի տրամադրումը: Խնդրել են Պաշտպանի աջակցությունը բնակարանների սեփականաշնորհման հարցի լուծմանը:

Բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Երևանի քաղաքապետից և ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանման ղեկավարից, ինչպես նաև հարցը լուծելու ուղղությամբ առաջարկ է ուղարկել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարից ստացված պարզաբանման համաձայն՝ նշված բնակելի տների նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու և բնակարանները բնակիչներին նվիրաբերելու հարցերը քննարկելու համար Երևանի քաղաքապետարանում առկա փաստաթղթերը համայնքին փոխանցելու մասին համապատասխան գրություն է ուղարկվել Երևանի Արաբկիր համայնքի ղեկավարին:

Արաբկիր համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունների հիմքով Երևանի քաղաքապետի կողմից 10.07.2008թ.-ին ընդունվել է հ.3179-Ա որոշումը և թողարկվել են գլխավոր հատակագծեր: Նշված շենքերում առկա յուրաքանչյուր բնակարանի համար առանձին-առանձին կատարվում է սեփականության իրավունքի պետական գրանցում և համայնքի ավագանու համապատասխան որոշման համաձայն նվիրաբերության պայմանագիր կնքելու գործընթացը շարունակվում է:

2009թ. հոկտեմբերի 13-ին Երևան քաղաքի Աղբյուր Սերոբ փողոցի բնակիչները, նամակ-շնորհակալագրով դիմել են Պաշտպանին:

Փաստորեն, Պաշտպանի միջամտության արդյունքում վերջնական լուծում ստացան **39 ընտանիքի /105 անձանց/ բնակարանային խնդիրները:**

3.17.3. Երևանի վարչական շրջաններ

Երևանի վարչական շրջաններին վերաբերող բողոքները հիմնականում վերաբերել են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեությանը և նպաստների նշանակման աշխատանքներին:

Բողոքներ են եղել նաև վարչական շրջաններում գործող բար-ռեստորանների, զվարճանքների օբյեկտների՝ սահմանված նորմաներից բարձր աղմուկների վերաբերյալ, որոնք կասեցնելու ուղղությամբ վարչական շրջանների ղեկավարները անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել: Քաղաքացիները բողոքել են նաև վարչական շրջաններում ինքնակամ շինարարության և հողազավթումների դեպքերը կանխելու ուղղությամբ անհրաժեշտ հսկողության բացակայության, իրենց բողոքներն անտեսելու հանգամանքներից, ինչի հետևանքով խախտվել է նրանց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

Թեև որոշ վարչական շրջաններում ակտիվորեն կազմակերպվում են փողոցների, հրապարակների, բնակավայրերի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, սակայն կան այնպիսիները, որոնցում պատշաճ կերպով չեն իրականացվում աղբահանության, փողոցների ասֆալտապատման աշխատանքները:

Դեռևս կայացած չեն համատիրությունները և բազմաբնակարան շենքերի կառավարման այլ մարմինները: Դրանց մեծ մասը կրում են ձևական բնույթ և չեն ծառայում իրենց նպատակներին:

Հիմնականում չեն կատարվում բազմաբնակարան շենքերի պահպանման պարտադիր նորմերը, որոնք հետագայում՝ ժամանակից շուտ, հանգեցնում են շենքի քայքայմանը և վթարային դառնալուն:

Երևան քաղաքի Մ. Բաղրամյան պողոտայի թիվ 2 շենքի բնակիչները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել են, որ իրենց շենքի նկուղում տեղակայված «Պիոներ» բար-ռեստորանի գիշերային գործունեության պատճառով իրենք չեն կարողանում գիշերը հանգիստ քնել: Նախկինում իրենք դիմել են քաղաքապետարան, թաղապետարան, բնակարաններում մի քանի անգամ անցկացվել են լսվող աղմուկի չափումներ, որոնց արդյունքները ներկայացվել են քաղաքապետարան և թաղապետարան: Այդ չափումները վկայում էին բոլոր նորմերի խախտումների մասին, սակայն իրենց դիմումներն ուղղակի անտեսվել են: Բար-ռեստորանից լսվող աղմուկը երկարատև է. սկսվում է երեկոյան ժամերից և չի դադարում մինչև առավոտյան ժամը 6-ը: Իրենք նկատում են, որ աղմուկից առաջացած վիբրացիան վնասում է նաև շենքի ամրությանը՝ որոշ

բնակարաններում առկա են դրա հետևանքները: Բացի այդ, իրենց զայրացնում է մեքենաների և հարբած հաճախորդների, ամբողջ օրն աշխատող հզոր օդափոխիչների աղմուկը, ռեստորանի տհաճ հոտերը և շենքի 5-րդ մուտքի հակասանիտարական վիճակը:

Ի պատասխան պաշտպանի գրությանը Երևանի «Կենտրոն» թաղային համայնքի ղեկավարը հայտնել է, որ նշված օբյեկտը ներկայացնող ընկերության տնօրենը իրավախախտման համար ենթարկվել է վարչական պատասխանատվության, միաժամանակ նախազգուշացվել է, որ իրավախախտումը կրկնելու դեպքում կրկին կենթարկվի վարչական պատասխանատվության:

05.08.2009թ. դիմումատուները ներկայացրել են լրացուցիչ բողոք, որի կապակցությամբ Պաշտպանը 01.06.2009թ. դիմել է Երևանի «Կենտրոն» թաղային համայնքի ղեկավարին: Վերջինս 19.06.2009թ. գրությամբ տեղեկացրել է, որ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի սպասարկումների և ծառայությունների բաժնի աշխատակիցների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում իրավիճակը կարգավորվել է: Բաղրամյան պող. 2 հասցեում գտնվող բար-ռեստորանը դադարեցրել է իր գործունեությունը:

Բողոքի քննարկումը դադարեցվել է հարցը դրական լուծվելու կապակցությամբ:

3.17.4. Քաղաքապետարաններ

Քաղաքապետարանների դեմ ուղղված դիմում-բողոքները վերաբերել են ինքնակամ շինարարության դեպքերին, համայնքների ղեկավարների կողմից դրանց հետևանքների վերացմանը, տարածքը նախկին տեսքին բերելուն ուղղված այլ միջոցներ չձեռնարկելուն՝ բավարարվելով իրավախախտին միայն վարչական պատասխանատվության ենթարկելով:

Որոշ դեպքերում կառուցապատողներին շինարարություն կատարելու համար տրամադրվում են օրինական փաստաթղթեր, սակայն հսկողություն չի իրականացվում դրանց պահանջների պահպանման նկատմամբ, ինչի հետևանքով տեղի են ունենում նախագծային շեղումներ:

Ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի մյուս քաղաքներում կառուցապատումից առաջ բնակիչները չեն իրազեկվում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին, մասնակից չեն դարձվում հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանն ու որոշումների ընդունմանը, որի հետևանքով խախտվում է նրանց՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով տրված իրավունքները:

Որպես աղետի գոտու բնակավայրեր, այս տարի նույնպես շատ են եղել բողոքները Գյումրու և Վանաձորի քաղաքապետարանների դեմ: Չնայած պետությունը յուրաքանչյուր տարի միջոցներ է ձեռնարկում աղետի գոտու բնակավայրերում բնակարանաշինության ուղղությամբ, սակայն բնակիչները բողոքում են, որ բնակարանների բաշխումը կատարվում է անարդարացի, տեղի են ունենում անօթևանների ցուցակներում հաշվառված անձանց հերթերի փոփոխություն, հաշվի չի առնվում իրենց արտոնությունը, չեն հերթագրում այդ ցուցակներում և այլն:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Երևանյան փողոցի թիվ 9 և 11 շենքերի բնակիչները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել են, որ նշված շենքերի միջանկյալ հատվածում նույն քաղաքի բնակչի կողմից կատարվել է ապօրինի շինարարություն: Այդ կապակցությամբ բազմիցս դիմել են Մարտունու քաղաքապետարան և ոստիկանության բաժին, սակայն քաղաքապետարանը բավարարվել է միայն զանցառուին 400.000 դրամի չափով վարչական տույժի ենթարկելով:

Բողոքի կապակցությամբ Պաշտպանի կատարած հարցմանը Մարտունու քաղաքապետը հայտնել է, որ նշված բազմաբնակարան շենքերի միջև ընկած տարածքում քաղաքացի Հ.Ա.-ին սեփականության իրավունքով պատկանում է 30 քմ հողատարածք, որի վրա տեղադրված է եղել նրան պատկանող առևտրի տաղավարը: Քաղաքապետարանն օրինականորեն թույլատրել է Հ.Ա.-ին սեփականության իրավունքով նրան պատկանող հողամասում տեղադրված տաղավարի վերակառուցում իրականացնել՝ ըստ հաստատված նախագծի:

Հ.Ա.-ն վերակառուցման աշխատանքների կատարման ընթացքում խախտել է նախագծի պահանջները և թույլատրված 30 քմ-ի փոխարեն, կառուցել է 44,5 քմ տաղավար՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողերից զավթելով 14,5 քմ տարածք, թույլ տալով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանք, որի համար Մարտունու քաղաքապետարանի վարչական իրավախախտումների հանձնաժողովի 29.10.2008թ. որոշմամբ տուգանվել է 400.000 ՀՀ դրամի չափով և նրան պարտավորեցվել է վերացնել հետևանքները: Մարտունու քաղաքապետարանը հիշյալ տուգանքը բռնագանձելու հայցապահանջ է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որը 23.12.2009թ. որոշումով ընդունվել է վարույթ և 06.02.2009թ. կայացվել է վճիռ: Հ.Ա.-ն իր միջոցներով, կամավոր ձևով վերացրել է զանցանքի հետևանքները և շինությունը համապատասխանեցրել է նախագծային չափերին:

Բողոքի քննարկումը դադարեցվել է հարցը դրական լուծվելու կապակցությամբ:

Մարտունի քաղաքի թվով 39 բնակիչներ Պաշտպանին հասցեագրած բողոքում հայտնել են, որ ՀՀ կառավարության և Մարտունու սեփականաշնորհման հանձնաժողովի 1991թ. թիվ 4 որոշման հիման վրա Մարտունի քաղաքի բնակիչներին տարբեր վայրերից հատկացվել են հողատարածքներ: «Հիվանդանոցի տակ» կոչվող տարածքից 120 բնակիչների հատկացվել է յուրաքանչյուրին 0.04 հա տնամերձ հողամաս: Որոշման հիման վրա 1998թ. տրվել են հողի սեփականության իրավունքի պետական ակտեր, որոնք կադաստրում ստացել են պետական գրանցում:

Վերոնշյալ հիմքերը հաշվի չառնելով, «Հիվանդանոցի տակ» կոչվող տարածքում իրենց հատկացված տնամերձ հողամասերը 2005թ. քարտեզագրվել է իբր սեփականաշնորհման ոչ ենթակա, կառուցապատման գոտի և շուկայի տարածք: Արդյունքում խախտվել է իրենց սեփականության իրավունքը:

Այդ կապակցությամբ 2007 թվականից սկսած Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Մարտունու քաղաքապետից, ինչպես նաև հարցը մի քանի անգամ քննարկվել է քաղաքապետարանում:

2007թ. պատասխանով Մարտունու քաղաքապետը հայտնել է, որ վիճելի հարցը քննարկվել է համայնքի ավագանու 26.10.2007թ. թիվ 8 նիստում, որի արդյունքում Մարտունի համայնքի պահուստային ֆոնդի հողերի նպատակային և գործառնական նշանակությունը փոխելու խնդրանքով քաղաքապետարանը դիմել է Գեղարքունիքի մարզպետարան և ՀՀ կառավարություն:

2008թ. քաղաքապետը հայտնել է, որ քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված խառը կառուցապատման և հասարակական օգտագործման կանաչ գոտիները, բնակելի կառուցապատման գոտիով փոխելու վերաբերյալ հարցը քննարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության նախարարությունների, ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակիցների, շահագրգիռ պետական մարմինների և նախագծային փաստաթղթերը մշակող հեղինակային խմբի մասնակցությամբ: Արված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի առնելով, նախագծի հեղինակային խմբի և քաղաքապետարանի կողմից լրամշակված փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության նախարարություն վերջնական համաձայնեցման: Հարցի լուծումը մտել է վերջնական փուլ, սակայն տվյալ տարածքում դեռ պետք է կատարվեն մանրամասն հատակագծման և որոշակի գեոդեզիական աշխատանքներ, որից հետո հարցին կտրվի վերջնական լուծում:

Պաշտպանի ներկայացուցիչների 04.12.2009թ. այցի ընթացքում Մարտունու քաղաքապետը հայտնել է, որ չնայած սեփականության իրավունք ունեցող քաղաքացիներին

առաջարկվել է շուկա կառուցելուց հետո այնտեղ անհատույց ձեռք բերել համապատասխան տարածքներ, սակայն դրա կառուցումը ևս անհնարին է, քանի որ այդ տարածքով 5-6 շարքով անցնում են բարձր լարման հոսանքի լարեր: Քաղաքապետարանը դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, որպեսզի ապամոնտաժի էլեկտրասյուները և մալուխներ անցկացնի շրջանցելով նշված հողատարածքը, սակայն վերջինս հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ այն գտնվում է համայնքի տարածքում և քաղաքապետարանը պետք է իրականացնի այդ աշխատանքները: Քաղաքապետարանը նման հնարավորություն չունի, քանի որ նախնական հաշվարկներով այդ աշխատանքների գումարը կազմում է մոտ հարյուր միլիոն դրամ: Արդյունքում քաղաքացիները զրկվում են իրենց սեփականությունը տնօրինելու սահմանադրական իրավունքից:

Հարցին լուծում տալու նպատակով Պաշտպանը դիմելու է ՀՀ կառավարություն:

Սևան քաղաքի բնակիչ Կ.Հ.-ն Պաշտպանին հասցեագրած բողոքում հայտնել է, որ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, Սևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված գլխավոր հատակագծի հիման վրա Սևան-Երևան ավտոմայրուղու ձախ կողմում կառուցապատման իրավունքով 24.01.2007թ. իրեն հատկացրել է 900 քմ մակերեսով հողամաս՝ հանգստի գոտի հիմնելու նպատակով: Պայմանագիրը կնքվել է 25 տարով, որը ստացել է նոտարական վավերացում և պետական գրանցում: Բարեխղճորեն վճարել է հարկերը, կատարել տարածքի բարեկարգման աշխատանքներ: Երկու տարի անց՝ 30.04.2009թ. դիմել է Սևանի քաղաքապետարան շինարարություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու նպատակով, սակայն ստացել է մերժում այն պատճառաբանությամբ, որ նշված տարածքը կառուցապատման իրավունքով դեռևս 25.12.2007թ. հատկացվել է «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ին, որն այդ իրավունքն օտարել է այլ անձի:

Նշված հարցով Պաշտպանը դիմել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարին՝ առաջարկելով պարզաբանել ստեղծված իրավիճակի պատճառները և միջոցներ ձեռնարկել քաղաքացու իրավունքները վերականգնելու ուղղությամբ: Փոխվարչապետի հանձնարարականով ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի նախագահը, ՀՀ բնապահպանության նախարարը և Գեղարքունիքի մարզպետը կատարել են ուսումնասիրություն և հայտնել, որ խնդիրը կարող է լուծվել բանակցությունների միջոցով կամ դատական կարգով: Ապա դիմումատուն հայտնել է, որ բանակցությունների արդյունքում իրեն առաջարկվել է հողամաս, որը համարժեք չէ հատկացվածին:

Հարցին վերջնական լուծում տալու նպատակով Պաշտպանը գրավոր դիմել է ՀՀ փոխվարչապետին՝ Սևանի քաղաքապետարանի, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի,

Գեղարքունիքի մարզպետարանի և քաղաքացու մասնակցությամբ քննարկում կազմակերպելու առաջարկով: Քաղաքացուն առաջարկվել է, որպեսզի քննարկմանը ներկայանա իր կողմից նախընտրած հողատարածքների լուսանկարներով:

21.01.2009թ. ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում կազմակերպվել է քննարկում, որի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել մեկ ամսվա ընթացքում պատրաստել անհրաժեշտ փաստաթղթերը և հարցին տալ դրական լուծում:

3.17.5. Գյուղապետարաններ

2009 թվականի ընթացքում գյուղական համայնքներից ստացված բողոքները վերաբերել են հողային վեճերին, ուժեղ քամիների, կարկուտների հետևանքով տուժած գյուղացիներին պետության կողմից փոխհատուցում չտրամադրելուն, տարբեր անասնահամաճարակների բռնկման արդյունքում ընտանի կենդանիներին ոչնչացնելու և համարժեք չփոխհատուցելուն և այլն:

Գյուղական բնակավայրերում առկա է այն խնդիրը, որ 1991 թվականից սկսած հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովների կողմից գյուղացիներին սեփականության իրավունքով հատկացվել են հողատարածքներ, որոնց կապակցությամբ նրանց տրվել են հողի սեփականության իրավունքի պետական ակտեր, սակայն շատ դեպքերում այդ հողամասերը համայնքների ղեկավարների կողմից հատկացվել են այլ անձանց: Խնդիրներ են առաջացել նաև 1991 թվականից հետո կատարված քարտեզագրումների արդյունքում, երբ տեղի են ունեցել հողամասերի տեղի և դիրքի փոփոխություն՝ գյուղացիների միջև կրկին առաջացնելով վեճեր:

ՀՀ Արարատի մարզի Նոր Կյանք համայնքի բնակիչ Ա. Խ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ 1991թ. հողային բարեփոխումների և սեփականաշնարհման հանձնաժողովի արձանագրային որոշմամբ իրեն տրամադրվել է 0.36 հա հողատարածք, որը հաստատվում է հողի սեփականության իրավունքի պետական ակտով: Չնայած վերոնշյալ փաստաթղթերի առկայությանը՝ դիմումատուն չի կարողանում ստանալ սեփականության իրավունքի գրանցման նոր նմուշի վկայական:

2008թ. Նոր Կյանք համայնքի ղեկավարը հողի ապօրինի օգտագործման համար դիմումատուին ենթարկել է վարչական տույժի՝ 70.000 ՀՀ դրամի չափով, չնայած այն հանգամանքին, որ 2007թ. Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից քննած գործի ընթացքում Նոր Կյանք գյուղապետարանի ներկայացուցիչը հայտնել է, որ վիճելի

տարածքը ժամանակավորապես տրամադրվել է դիմումատուին՝ վագոն-տնակ տեղադրելու և բնակվելու համար:

Նոր Կյանք համայնքի ղեկավարը դեռևս 2007թ. տեղեկացված էր դիմումատուի կողմից հողի ապօրինի օգտագործման վերաբերյալ, մինչդեռ, վարչական տույժը նշանակել է 2008թ. օգոստոսի 7-ին՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կատարված հարցումների արդյունքում պարզվել է, որ վարչական տույժը չմուծելու փաստն անտեսվել է, իսկ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվել, այն պատճառաբանությամբ, որ քաղաքացին այդ իրավունքի ճանաչման պահանջով դիմել է դատարան, սակայն դրա վերաբերյալ համապատասխան ակտ չի կայացվել:

ԲԱԺԻՆ 4.
ՀԱՏՈՒԿ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

4.1. Զինակոչիկների և զինծառայողների իրավունքներ

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ զինված ուժերը Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության համակարգի հիմքը կազմող պետական ռազմական կառույցն է, որն ապահովում է ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության զինված պաշտպանությունը: Ակնհայտ է, որ նման կարևոր կառույցում ընդգրկված անձանց իրավունքների պաշտպանությունն ու խախտված իրավունքների վերականգնումը պետք է առանձնահատուկ ուշադրության արժանանա նաև Պաշտպանի կողմից: Այդ նպատակով դեռևս 2007թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվել է ռազմական և զինծառայողների հարցերով Պաշտպանի խորհրդականի հաստիք:[21]

2004թ. ի վեր Պաշտպանն իր տարեկան զեկույցներում բազմիցս անդրադարձել է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանվածությանն առնչվող մի շարք խնդիրների, իսկ նախորդ տարեկան զեկույցում ներկայացվել է դրանց համակարգային լուծման վերաբերյալ առաջարկներ:

Զինված ուժերի բնագավառում Պաշտպանի գործունեությունն ուղղված է իրավասու պետական պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններից զինծառայողների (ներառյալ սպայական, ենթասպայական և բարձրագույն հրամանատարական կազմի) իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ կոնկրետ միջոցների ձեռնարկմանը, այդ թվում՝ զինծառայողների շրջանում հանրային իրազեկմանն ուղղված ակտիվ աշխատանքների իրականացումը:

Այդ գործունեությունն իրականացնելու համար Պաշտպանը դիմում է նաև միջազգային հեղինակավոր կազմակերպությունների աջակցությանը. համատեղ քննարկումներ են կազմակերպվում ոլորտում առկա հիմնախնդիրների շուրջ, տարբեր երկրների գործընկերների հետ իրականացվում է փորձի փոխանակում:

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործին ակտիվ դերակատարություն ունի ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը, որի հետ ստորագրված փոխըմբռնման

[21] Այդ մասին, տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի 2008թ. տարեկան զեկույցի 4.1. պարագրաֆում:

հուշագրում ամրագրված է, որ ԵԱՀԿ-ն փորձագիտական օժանդակություն է ցուցաբերելու Պաշտպանի աշխատակազմին:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2009թ. ընթացքում Պաշտպանը զինծառայողների իրավունքների պաշտպանությունն իրականացրել է երկու ուղղությամբ. դիմում-բողոքների (ներառյալ գրավոր և բանավոր) ուսումնասիրության և սեփական նախաձեռնությամբ զինվորական ստորաբաժանումներ այցելություններ իրականացնելու միջոցով: Բացի այդ, Պաշտպանը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ոլորտին առնչվող օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացրել է դիտողություններ և առաջարկություններ:

Նախորդ տարիներին սկիզբ առած և դեռևս չլուծված հիմնախնդիրներից հիշարժան են ստորև ներկայացվածները.

Այսպես, ապագա զինծառայողների նկատմամբ իրավասու պետական մարմինները այդպես էլ պատշաճ ուշադրություն չեն դարձնում դեռևս դպրոցական տարիքից, այդ պատճառով շարունակում է նույնը մնալ զորակոչիկների իրավագիտակցության մակարդակը: Կարծում ենք՝ այստեղ մեծ անելիքներ ունեն ինչպես կրթության ոլորտի պատասխանատուները, այնպես էլ տարածքային զինկոմիսարիատները, որոնց պատշաճ հսկողության իրականացման դեպքում արդյունավետ կլինեն դպրոցներում դասավանդվող թե ռազմագիտություն, և թե իրավագիտություն առարկաները: Կարևորելով այս խնդիրը՝ Պաշտպանը և/կամ աշխատակազմի աշխատակիցները տարբեր զորամասեր կազմակերպած այցելությունների ընթացքում զինծառայողների հետ ունեցած առանձնազրույցից բացի, ներկայացնում են նաև զինծառայությանը և զինակոչիկների իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության դրույթները:

Հարկ է նշել, որ թեև մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը գոյություն ունի արդեն 6.5 տարի, ցավոք, զինված ուժերի սպայական կազմի որոշ հատվածներում այդպես էլ չի ընկալվել այս ինստիտուտի դերն ու նշանակությունը: Ավելին, սպայական կազմը հաճախ տեղյակ չլինելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների, անտեսելով նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը, պնդում են, որ որևէ օրենքի պահանջ կկատարեն միայն վերադասից հրաման ստանալու դեպքում: Հետևությունն այն է, որ վերոնշյալ անձինք ոչ միայն չեն կարևորում մարդու իրավունքների պաշտպանությունը, այլև գտնում են, որ դրա անհրաժեշտությունը չկա:

Գիտակցելով զինված ուժերի դերն ու նշանակությունը երկրի անվտանգության գործում՝ Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները երբևէ չեն խախտել ռազմական գաղտնիք պարունակող տեղեկությունների մեջ չներթափանցելու կանոնը, միաժամանակ

իրենց գործողություններն իրականացրել են ի նպաստ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների:

Այսպես, Լոռու մարզում տեղակայված ՀՀ ՊՆ զորամաս այցելության ժամանակ զորամասի շտաբի պետ, փոխգնդապետ Զ. Դ-ն Պաշտպանի աշխատակազմի աշխատանքներին խոչընդոտելու վարքագիծ է դրսևորել՝ պատճառաբանելով զորամասի առանձնահատկությունը: Աշխատանքային խմբի անդամները ներկայացրել են իրենց աշխատանքների իրականացման սահմանները և ցանկություն են հայտնել շրջել զորամասի տարածքում՝ առաջարկելով հրամանատարական կազմից մեկին կցել իրենց: Այդ առաջարկին ի պատասխան՝ թե Զ. Դ-ն, և թե զորամասի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Գ. Մ-ն արգելել են խմբին զորամասում ուսումնասիրություններ կատարել՝ նշելով, որ ընդմիջման ժամին այցելելով՝ խանգարում են իրենց: Զորամասի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Գ. Մ-ի և ՀՀ ԶՈՒ ԳԾ հրետանու վարչության պետ, գնդապետ Մ-ի միջև տեղի ունեցած հեռախոսազրույցից հետո միայն Պաշտպանի ներկայացուցիչներին թույլատրվել է շրջել զորամասի տարածքով՝ այն էլ խիստ սահմանափակումով:

Որոշ դեպքերում Պաշտպանի աշխատակիցներին չի թույլատրվել ծանոթանալ զինվորների անհատական գրքույկներին, զինծառայողներին տրամադրվող արձակուրդի գրաֆիկին՝ կրկին պատճառաբանելով դրանց գաղտնիության փաստը:

Հետաքրքիր է, թե ի՞նչ գաղտնիք կարող է պարունակել զինծառայողներին տրամադրվող արձակուրդի գրաֆիկի վերաբերյալ տեղեկատվությունը կամ ի՞նչ ռազմական գաղտնիք են պարունակում զինվորների անհատական գրքույկները:

ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացված բազմաթիվ գրություններով մեզ տեղեկացրել են, որ զինված ուժերի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է առաջնորդվել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով, այդուհանդերձ, օրենքի պահանջները լիարժեքորեն չեն կատարվում:

Զինվորական ծառայության հետ կապված իրավունքների իրականացման և պաշտպանության ոլորտին առնչվող դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են հետևյալին.

1. **Պայմանագրում նախատեսված ժամկետից շուտ զորացրվելու ցանկություն հայտնող սպաների հանդեպ տարբերակված մոտեցում դրսևորելը:**

Հաշվետու տարում Պաշտպանին հասցեագրված դիմումներում ՀՀ ԶՈՒ սպաները, ովքեր հիմնականում ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի կամ էլ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի շրջանավարտներ են, հայտնել են, որ ընտանեկան, սոցիալական և այլ տարբեր հիմնավոր հանգամանքների պատճառով ցանկություն են

հայտնել դադարեցնել իրենց և ՀՀ ՊՆ միջև կնքված համապատասխան պայմանագրերը՝ պատրաստակամություն հայտնելով վճարել օրենքով սահմանված բոլոր վճարները: Սակայն ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի հրամանատարության կողմից որոշ անձանց նման խնդրանքը բավարարվել է, իսկ մյուսներինը՝ մերժվել, միաժամանակ սպառնալով, որ այդ դեպքում նրանց պետք է զրկեն իրենց ունեցած զինվորական կոչումից:

Գտնում ենք, որ նման դեպքում ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պատասխանատուների կողմից խախտվում են ՀՀ Սահմանադրության 18, 27.1 և 32 հոդվածների, ինչպես նաև «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջները:

ՀՀ Սահմանադրության 32 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ զինծառայողը ենթակա է զինվորական ծառայությունից արձակման՝ ռազմաուսումնական հաստատությունն ավարտելուց հետո տասը տարվա ընթացքում պայմանագրային զինծառայությունից հրաժարվելու դեպքում՝ ուսման հետ կապված ծախսերը փոխհատուցելու պայմանով:

Նշված պարագայում անտրամաբանական է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբում այդ հարցի վերաբերյալ դրսևորած ոչ միատեսակ մոտեցումը:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը ամրագրում է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի լիազորությունները, որի շրջանակներից դուրս այն չի կարող գործել: Ավելին, շատ դեպքերում, զինծառայողների փոխանցմամբ, նման հարցով ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետին դիմելիս արժանանում են պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած նույանբովանդակ բոլոր դիմումները գրեթե ստացել են դրական լուծում, այսինքն՝ վաղաժամկետ դադարեցվել է զինվորական ծառայության անցնելու մասին կնքված պայմանագիրը:

2. **Հիվանդության պատճառով տարկետում ստացած անձանց նախատեսված ժամկետից շուտ կրկնակի փորձաքննության ուղարկելը:** Այս բովանդակությամբ բողոքներ Պաշտպանին հասցեագրվել են գրեթե ամեն տարի, սակայն երևույթը գնալով հաճախակի է դառնում, և հիվանդության պատճառով տարկետում ստացած որևէ քաղաքացի չի կարող վստահ լինել, որ յուրաքանչյուր պահի իրեն չեն հրավիրի զինկոմիսարիատ ու չեն զորակոչի բանակ: ՀՀ պաշտպանության նախարարի 2006թ. մարտի 30-ի թիվ 378 հրամանով նախատեսված կարգի համաձայն՝ Հանրապետական բժշկական հանձնաժողովը հիվանդության պատճառով կարող է զորակոչիկին տալ տարկետման իրավունք՝ համաձայն «Զինապարտության մասին»

ՀՀ օրենքի: Իրավակիրառ պրակտիկայում հաճախ տարկետում ստացած զինակոչիկին պարտադրում են ներկայանալ զինկոմիսարատ և անցնել կրկնակի բժշկական փորձաքննություն: Այսինքն, քաղաքացուն կարող է տրվել, օրինակ, երեք տարվա ժամկետով տարկետման իրավունք, ապա նա կարող է կանչվել և ներկակայացվել մեկ այլ հանձնաժողովի հետազոտության, որտեղ կարող է փոխվել նախորդ հանձնաժողովի եզրակացությունը և նախկինում տարկետում ստացած քաղաքացին զորակոչվի բանակ: Իսկ եթե տարկետում ստացած զինակոչիկը չի ներկայանում տարածքային զինկոմիսարիատ, լինում են դեպքեր, երբ զինկոմիսարիատի աշխատակիցները ահաբեկում են նրան և նրա ընտանիքի անդամներին: Նման դեպք արձանագրվել Պաշտպանի աշխատակազմում Էրեբունու զինկոմիսարիատի հետ կապված:

Նշված խնդրի վերաբերյալ ստացված բողոքների կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով ամիսներ շարունակ ՀՀ ՊՆ ուղարկվել են բազմաթիվ գրություններ, ի պատասխան՝ մշտապես ստանալով «խուսափողական», օրենքից չբխող հիմնավորումներ: Միայն Պաշտպանի հոկտեմբեր ամսվա գրությանն ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ ընտրովիության սկզբունքով լրացուցիչ բուժ. հետազոտության ուղարկելը կատարվում է ՀՀ զինվորական դատախազի կողմից ներկայացված համապատասխան միջնորդությամբ: Սակայն, ՀՀ օրենսդրությամբ զինվորական դատախազությունը նման լիազորությամբ օժտված չէ: ՀՀ պաշտպանության նախարարը ս/թ ապրիլ ամսին ստորագրած հրամանով «օրինականացրել է» դատախազության նման գործունեությունը (միջնորդություն ներկայացնելը): Մեր խորին համոզմամբ, անհրաժեշտ է, որ ՀՀ պաշտպանության նախարարը քննարկի նման հրամանն ուժը կորցրած ճանաչելու նպատակահարմարության հարցը, քանի որ այդ հրամանի ուժով ուղղակիորեն վատթարանում է անձի իրավական վիճակը, իսկ կոռուպցիոն երևույթների դեմ նման եղանակով պայքարելը համարում ենք անընդունելի, ավելին, հենց «ընտրովիության» գաղափարն ավելի մեծ ռիսկեր է իր մեջ պարունակում կոռուպցիոն քայլերի գնալու համար:

Բացի այդ, հարց է առաջանում, եթե քաղաքացին տարկետման իրավունք ստանալուց հետո բացակայում է ՀՀ-ից, ապա վերադառնալու դեպքում արդյոք կարո՞ղ են պատասխանատվության միջոցներ կիրառվել նրա նկատմամբ, ինչը տեղի էր ունեցել քաղաքացի Ա. Ա.-ի դեպքում: Մեկ այլ քաղաքացու դեպքում էլ նրան տրված տարկետման ժամկետից շուտ ուղարկել են բուժհետազոտման, որտեղ փոխելով նախկին բժշկական եզրակացությունը, զորակոչել են բանակ:

Նշենք, որ ՀՀ օրենսդրությունը նման հնարավորություն չի նախատեսում, չկա նաև հանրապետական բժշկական հանձնաժողովի որոշումը վերանայելու կամ բողոքարկելու մեխանիզմ:

3. **Լիարժեք և մանրակրկիտ բժշկական հետազոտության չենթարկելու հետևանքով հիվանդություն ունեցող անձանց ՀՀ ԶՈՒ զորակոչելը:** Բազմաթիվ քաղաքացիներից ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ դեռևս շարունակվում է և ավելի հաճախակի բնույթ է կրում տարածքային զինկոմիսարիատների կողմից առողջական խնդիրներ ունեցող զինծառայողներին բանակ զորակոչելու պրակտիկան: Քաղաքացիների դժգոհում են նաև նրանից, որ տարածքային զինկոմիսարիատները մեծ «դժվարությամբ» են զինակոչիկներին տրամադրում ուղեգրեր՝ համապատասխան բուժ. հաստատություններում հետազոտվելու համար, իսկ երբեմն էլ ընդհանրապես հրաժարվում են ուղեգիր տրամադրելուց: Մինչդեռ, ՀՀ օրենսդրությունն ուղղակիորեն պարտավորեցնում է տեղական զորակոչային հանձնաժողովին ուղեգիր տրամադրել. «Եթե տեղում հնարավոր չէ ստանալ քաղաքացու՝ զինվորական ծառայությանը պիտանի լինելու մասին բժշկական եզրակացություն, ապա տեղական զորակոչային հանձնաժողովը պարտավոր է նրան ուղարկել համապատասխան բժշկական հիմնարկ՝ բուժհետազոտում անցկացնելու համար» /«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված/:

Ահա նման դեպքերը հանգեցնում են նրան, որ ընդամենը բարձրագույն կրթություն ստացած մի քանի օրվա զինծառայողը մահանում է զորամասում: Խոսքը Արաբկիրի զինկոմիսարիատից զորակոչված Ա. Մ.-ի մասին է, ով տառապելով աղեստամոքսային քրոնիկ հիվանդությամբ, ներկայացնելով նաև համապատասխան բժշկական փաստաթղթեր, այնուամենայնիվ, զորակոչվել է ՀՀ զինված ուժեր:

Նշենք նաև, որ զինկոմիսարիատի գործողություններից դժգոհող քաղաքացիների մեծ մասը խուսափում է գրավոր դիմում ներկայացնելուց՝ մտավախություն ունենալով, որ զինկոմիսարը նրա նկատմամբ հաշվեհարդար կլինի և կմիջնորդի, որ իր որդուն զորակոչեն ամենահեռավոր զորամաս: Նման բանավոր դիմումներով դժգոհել են Նոր-Նորքի, Շահումյանի, Արարատի մարզի Մասիսի, Արագածոտնի մարզի Ապարանի, Շիրակի մարզի Գյումրու, Կոտայքի մարզի Չարենցավանի զինկոմիսարիատներից:

Հիվանդություն ունեցող զինակոչիկներին բանակ զորակոչելու վերաբերյալ մամուլում պարբերաբար տպագրվում են կոնկրետ դեպքեր, որոնց նույնպես, օրենքով նախատեսված կարգով, Պաշտպանը ընթացք է տալիս: Այդպիսի դեպքերից է զինծառայողներ Ա. Ռ.-ի, Է. Մ.-ի վերաբերյալ մամուլում հրապարակված տեղեկատվությունը:

Բացի դրանից, հիվանդ զինակոչիկների զորակոչման փաստն արձանագրվել է նաև տարբեր մարզեր կատարած այցելությունների ընթացքում: Գրեթե բոլոր զորամասերում Պաշտպանի ներկայացուցիչները հանդիպել են նման զինծառայողների:[22]

Այսպես, ՀՀ ՊՆ թիվ 81151 զորամասի զինծառայող Մ.Ն.-ն /Մարտունու զինկոմիսարիատ/ հայտնել է, որ ունի աճուկային ճողվածք, ինչի պատճառով որոշակի ֆիզիկական աշխատանք կատարելուց հետո ունենում է ցավեր, իսկ հրետանային դիվիզիոնի ղեկավարման դասակի ժամկետային զինծառայող շարքային Զ. Մ.-ն Պաշտպանի ներկայացուցիչներին հայտնել է, որ իր քաշը զորակոչվելիս և ներկայումս կազմում է 46 կիլոգրամ, ինչպես նաև մանկուց տառապում է սրտանոթային հիվանդությամբ:

ՀՀ ՊՆ թիվ 55035 զորամասի ժամկետային զինծառայող շարքային /Գ. Մ.-ն (Վանաձորի Զ/կ), 08/2 զորակոչ/, հայտնել է, որ ունի մոտ 10-13 առողջ ատամ, խանգարված է իր ծամողական ֆունկցիան, սակայն զինգրքույկում նշված է, որ պիտանի է շարային ծառայության և զորակոչվել է բանակ: Խնդրել է անցկացնել մանրակրկիտ բուժհետազոտություն: Այդպիսի առաջարկություն Պաշտպանը ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարին:

ՀՀ ՊՆ թիվ 73128 զորամասի զինծառայող, շարքային **Վ. Դ.-ն** (Արթիկի զ/կ) հայտնել է, որ մանկուց պարանոցի շրջանում ունեցել է ցավեր և ձգվածություն, սակայն Հանրապետական բժշկական հանձնաժողովի որոշմամբ նրան ճանաչել են պիտանի ոչ շարային ծառայության համար /37գ/ ու զորակոչել բանակ: Մինչդեռ, զինծառայողի վիճակը ավելի է վատթարացել, զորամասի հրամանատարությունը նրան ներկայացրել է Զանգեզուրի կայազորի հոսպիտալ, սակայն, հոսպիտալի պետը հրաժարվել է վիրահատություն կատարել: Բացի դրանից, Վ. Դ.-ի զինվորական գրքույկում բացակայում էին համապատասխան կնիքները:

4. **Հոգեկան հիվանդության տարբեր աստիճան ունեցող զորակոչիկներին սահմանային զորամասեր զորակոչելը, և նրանց հետագա հերթապահումը մարտական դիրքերում:** Այս խնդիրը վեր է հանվել Պաշտպանի հանձնարարությամբ կատարված այցելությունների ընթացքում: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ այդ զինծառայողներն իրենց ծառայությունն անցկացնում են սահմանամերձ հատվածներում գտնվող զորամասերում: Այսպես, աշխատանքային խմբի անդամները, զրուցելով մի շարք զինծառայողների հետ, պարզել են, որ

[22] Յուրաքանչյուր մարզային այցելության ժամանակ բացահայտված թերությունների վերաբերյալ Պաշտպանը գրություն է ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարին՝ առաջարկելով, միջոցներ ձեռնարկել վեր հանված թերությունները վերացնելու և շտկելու ուղղությամբ: Ընդ որում, դրանում ընդգրկված են եղել նաև առողջական խնդիրներ ունեցող զինծառայողների վերաբերյալ տեղեկությունները: Տես նաև Պաշտպանի կայքէջում:

մեծ թվով զինծառայողներ բժշկական հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա ունեն ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանի 7 «գ» կետով նախատեսված հիվանդությունը, որի դեպքում զինծառայությունն անցկացնում են սահմանափակումով, ընդհուպ մինչև զենքի կրման արգելք, սակայն անհասկանալի ձևով զինծառայողները զորակոչվել են սահմանային զորամասեր: Խոսքը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր տարբեր տարիքում փորձել են ինքնավնասման փորձեր կատարել՝ կտրել դաստակների երակները կամ մարմնի տարբեր մասերում առաջացնել սպիներ և քերծվածքներ: Զինծառայողներից շատերն էլ գտնում էին, որ իրենց չպետք է դասեին հոգեկան որոշակի շեղումներ ունեցող անձանց թվին և խնդրում էին կրկնակի բուժհետազոտության անցկացում, որով կվերանայվեն նախկին որոշումները: Կային նաև այնպիսի զինծառայողներ, ովքեր իրականում ունեին հոգեկան հիվանդության հետ կապված լուրջ խնդիրներ և, զորամասերի հրամանատարներից շատերի հավաստմամբ, իրենցից ավելի մեծ վտանգ են ներկայացնում, այդ իսկ պատճառով սպայական կազմի հսկողության տակ են գտնվում:

Այս պայմաններում, կարծում ենք, մեծ անելիքներ ունի ՀՀ ԶՈՒ ԳՇ կազմզորահավաքային վարչությունը, որը հանրապետական հավաքակայան Պաշտպանի ներկայացուցիչների այցը խոչընդոտելու փոխարեն, պետք է կարողանա հետամուտ լինել, որպեսզի զորակոչիկների տեղաբաշխումն իրականացվի նպատակային, և դրա արդյունքում հոգեկան հիվանդություն ունեցող զինծառայողները չզորակոչվեն սահմանամերձ զորամասեր, միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաները չզորակոչվեն «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բնակավայրից 100 կմ-ից ավելի հեռավորության վրա գտնվող զորամասեր և այլն:

5. Տարածքային զինկոմիսարիատների կողմից զորակոչիկների անձնագրերը վերցնելը: Վերոնշյալ խնդրով Պաշտպանին հասցեագրած դիմում-բողոքների թիվն այնքան էլ մեծ չէ, այնուամենայնիվ, վստահ ենք, որ երևույթը համատարած բնույթ է կրում: Գործող օրենսդրությունը այդպիսի իրավասությամբ չի օժտել զինկոմիսարիատների ներկայացուցիչներին, հետևաբար, նման գործընթացն ուղղակիորեն անօրինական է: Բացի այդ, ՀՀ կառավարության 1998թ. թիվ 821 որոշմամբ, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հստակ նշված են այն դեպքերը, երբ քաղաքացուց կարելի է վերցնել անձնագիրը: Պաշտպանի աշխատակազմ մուտք եղած նույնաբովանդակ դիմումով քաղաքացին դժգոհում էր Արաբկիրի զինկոմիսարիատի աշխատակիցներից: ՀՀ պաշտպանության նախարարը Պաշտպանի գրությամբ նշված հարցերին օրենքից բխող պարզաբանումներ տալու փոխարեն խուսափողական, անհիմն բացատրությունից հետո նշել էր, թե իրենք բազմիցս հրավիրել են քաղաքացուն՝ անձնագիրը ստանալու նպատակով,

սակայն նա հրաժարվել է: Գտնում ենք, որ զինկոմիսարիատի կողմից անձնագրերը վերցնելը անօրինական վարքագծի դրսևորում է և ինքնին առաջացնում է կոռուպցիոն ռիսկեր:

Վերոգրյալի կապակցությամբ Պաշտպանի կողմից կայացվել է մարդու իրավունքների խախտում բացահայտելու մասին որոշում:

6. Զինծառայողների բնակարանային ապահովման հարցը: Խնդրին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի նախորդ տարվա զեկույցում: Այս տարի թեև նման խնդիրներով գրավոր բողոքները քիչ են եղել, սակայն տարբեր մարզեր Պաշտպանի ներկայացուցիչների կատարած այցելությունների ընթացքում մեծ թվով սպաներ բարձրացրել են այդ հարցը և ներկայացրել դրա չլուծման բացասական հետևանքները:

Խնդիրը պետք է դիտարկել նախևառաջ ՀՀ Սահմանադրության տեսանկյունից, որի 34 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»: Սահմանադրության 48 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը նույնպես անդրադառնում է այդ հարցին, ըստ որի՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են ....խթանել բնակարանային շինարարությանը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը: Իհարկե, զինծառայողներին նման պայմանների կամ հնարավորությունների ընձեռումը, իր հերթին, ավելի է նպաստում զինված ուժերում նրանց կողմից անձնվիրաբար ծառայությանը: Ընթացիկ տարվա ժամանակահատվածում քաղաքացու կողմից ներկայացված գրավոր դիմում-բողոքի ուսումնասիրությունը դրական արդյունք է տվել:

Քաղաքացի Հ. Ղ-ն հայտնել է. որ 1993-2002թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում, ներկայումս զինվորական թոշակառու է, պաշտոնաթող փոխգնդապետ: Ծառայության ընթացքում իրեն հատկացվել է բնակարան: 2002թ. կենսաթոշակի անցնելուց հետո ցանկացել է սեփականաշնորհել նշված բնակարանը, սակայն հարցը մինչ օրս լուծում չի ստացել, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությանը հասցեագրված բազմաթիվ դիմումներին ի պատասխան, նախարարության բնակկենցաղային բաժինը տվել է անհիմն պատասխաններ առ այն, որ բնակարանի ձևակերպման և սեփականաշնորհման հարցը կքննարկվի ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական բնակարանային հանձնաժողովի կայանալիք նիստերից մեկում: Դիմումատուն միաժամանակ հայտնել է, որ նման անորոշ կարգավիճակի պատճառով խախտվել են իր և իր ընտանիքի անդամների իրավունքները, ընդհուպ՝ զրկվել են ընտրություններին մասնակցելու իրավունքից:

Բողոքի կապակցությամբ Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից պատասխանել են, որ նախկին զինծառայող, զինվորական թոշակառու Հ. Ղ-ի բնակարանի սեփականաշնորհման հարցը քննարկվել է ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական հանձնաժողովի 16.06.2009թ. նիստում և հանձնաժողովի որոշմամբ, ինչպես նաև ՀՀ ՊՆ 17.07.2009թ. թիվ 778 հրամանի պահանջների համաձայն, թույլատրվել է նշված հասցեի բնակարանը սեփականաշնորհել քաղաքացի Հ. Ղ-ի անունով:

Մի շարք զորամասերում, սպաները հայտնել են նաև, որ բնակարանային պայմանների բացակայությունը ընտանիք կազմելու խոչընդոտ է հանդիսանում, իսկ շատերն էլ իրենց բնակության վայրից այլ տարածքում ծառայության անցնելու դեպքում թեև ունեն համապատասխան պայմանագիր (վարձակալության), սակայն ՊՆ համապատասխան վարչությունը երբեմն անհարկի պատճառաբանություններով նույնիսկ այդ դրամական փոխհատուցումը չի տրամադրում:

Սոցիալական խնդիրներից մարտական դիրքերում ծառայություն անցնող սպաները նշել են, որ իրենց վճարվող արձակուրդը և աշխատավարձը ինչպես նաև Երևան քաղաքում և քաղաքամերձ զորամասերում ծառայություն անցնող զինծառայողների վճարվող արձակուրդն ու աշխատավարձերը նույնն են, ինչը չի նպաստում մարտական դիրքերում ծառայություն անցնելու ցանկություն ունեցող անձանց թվի ավելացմանը: Այս հարցին Պաշտպանը կանդրադառնա նաև հաջորդ տարվա զեկույցում, քանի որ որոշակի ուսումնասիրություններ անցկացնելու անհրաժեշտություն կա:

7. Որևէ կարգապահական տույժ չունեցող զինծառայողների երկու տարին լրանալուց հետո նրանց չզորացրելն ու տարբեր հրամանատարների կողմից անհեթեթ մեկնաբանություններ կատարելը: 2009թ. աշնանային զորակոչի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել են բազմաթիվ հեռախոսազանգեր, որոնք վերաբերել են զորամասերի հրամանատարների կողմից երկու տարվա ծառայություն անցած զինծառայողներին չզորացրելու խնդրին: Նման դեպք արձանագրել է նաև Պաշտպանի կողմից ստեղծված աշխատանքային խումբը, որը եռօրյա այցով եղել է Լոռու մարզում տեղակայված մի շարք զորամասերում: Վերջիններիս ղեկավարության փոխանցմամբ՝ իրենք ղեկավարվում են ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով, զորացրման աշխատանքները սկսվելու են մի քանի փուլերով և իրենք զորացրում կարող են սկսել միայն ս/թ նոյեմբերի 16-ից, մինչդեռ, ՀՀ Նախագահի հրամանագրով այն պետք է սկսվեր նոյեմբերի 1-ից:

Ս/թ նոյեմբերի 17-ին ՀՀ մարդու իրավունքների Պաշտպանի ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդականը հեռախոսազրույց է ունեցել ՀՀ ՊՆ N զորամասի հրամանատար Թ. Շ-ի հետ, ումից փորձել է տեղեկանալ, թե ինչով է պայմանավորված շարքային զինծառայող Կ. Ա-ի չզորացրելու հանգամանքն այն դեպքում, երբ լրացել է նրա պարտադիր զինվորական ծառայության երկու տարին: Ի պատասխան, զորամասի հրամանատարը արհամարհական տոնով հայտնել է, որ ինքը գործում է օրենքի շրջանակներում և պետք չէ իրեն վախեցնել դիմում-բողոքներով, քանի որ իր վախը «տասը տարի առաջ են բռնել»: Ավելին, Թ. Շ-ն Պաշտպանի խորհրդականին հայտնել է, որ օրենքով նախատեսված է ոչ թե 24 ամիս պարտադիր զինվորական ծառայության ժամկետ, այլ 24 և ավելի ամիսներ, հետևաբար, նրանց գործողությունները իրավաչափ են և բխում են գործող օրենքներից, իսկ իրենք որոշել են զորացրումն իրենց զորամասում սկսել ընթացիկ տարվա դեկտեմբերի 5-ից:

Հետաքրքիրն այն է, որ նման դիրքորոշմանը համամիտ է նաև ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի աշխատակազմի ղեկավար, գնդապետ Ա. Բ-ն, ով նույնպես Պաշտպանի խորհրդականի հետ հեռախոսազրույցի ընթացքում հայտնել է նույն մոտեցումը:

Գտնում ենք, որ զորացրման այդ ընթացակարգը հակասում է ՀՀ Սահմանադրության և գործող օրենսդրության պահանջներին, իսկ նշված բարձրաստիճան սպաների մեկնաբանությունները օրենքից չբխող և անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է՝ շարքային կազմի համար 24 ամիս: Այսինքն՝ գործող օրենսդրությունը շատ հստակ և իմպերատիվ կերպով ամրագրում է 24-ամսյա զինվորական ծառայության ժամկետը: Ընդ որում՝ օրենքը նախատեսում է անհրաժեշտության դեպքում ծառայության ժամկետի երկարացման կարգը, ըստ որի՝ անհրաժեշտության դեպքում կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունը կարող է երկարաձգվել մինչև երկու ամիս ժամկետով: Նշված պարագայում, սակայն, բացակայում է Կառավարության կողմից ընդունված նման որոշումը: Այստեղից հետևում է, որ զինված ուժերում անտեսվում են ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածի պահանջները, ըստ որի՝ Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Վերոգրյալի հաշվառմամբ Պաշտպանը ՀՀ պաշտպանության նախարարությանը առաջարկել է ներկայացնել պարզաբանումներ՝ հետևյալ հարցերի կապակցությամբ.

- Արդյո՞ք զորամասի հրամանատարի և ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի աշխատակազմի ղեկավարի տված պատասխանները հիմնավոր են և իրավաչափ, եթե ոչ, ապա ի՞նչ քայլեր են ձեռնարկվելու նմանատիպ երևույթները վերացնելու ուղղությամբ,

- Արդյո՞ք ՀՀ պաշտպանության նախարարի 14.10.2009թ. N0244 հրամանը բխում է ՀՀ Սահմանադրությունից և չի հակասում «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներին:

Միաժամանակ առաջարկվել է մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել զորակոչի աշխատանքների կարգավորմանը վերաբերող կարգ, որտեղ կհստակեցվեն նաև զորացրման կարգն ու պայմանները:

Պաշտպանության նախարարությունը ընդունելի է համարել Պաշտպանի առաջարկը՝ նախաձեռնել զորացրման կարգ սահմանելու մասին իրավական ակտի ընդունման գործընթացը:

Կարծում ենք՝ այս հարցում անելիք ունի ՀՀ ԶՈՒ ԳՇ Կազմզորահավաքային վարչությունը, քանի որ նրա կողմից նախապես ծրագրված գրաֆիկը պետք է արտացոլի իրական պատկերը, և զորացրվող զինծառայողների թիվը /յուրաքանչյուր զորամասի հաշվարկով/, պետք է համապատասխանի զորակոչվող անձանց թվաքանակին:

Խոսելով ՀՀ ԶՈՒ ԳՇ կազմզորահավաքային վարչության մասին՝ պետք է արձանագրել Պաշտպանի ինստիտուտի հետ նրա համագործակցելու թերացման փաստը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է զորակոչի ժամանակաշրջանի ընթացքում համագործակցությանը:

Պետք է նշել, սակայն, որ զորակոչի աշխատանքներին ընդգրկված են ոչ միայն Կազմզորահավաքային վարչության աշխատակիցները, այլև մի քանի գերատեսչությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ մի քանի կառուցվածքային ստորաբաժանումներ, այդ թվում՝ ՀՀ զինվորական դատախազություն, ՀՀ զինկոմիսարիատի զորակոչային բաժին, ՀՀ ԶՈՒ ԳՇ բուժ. վարչություն և այլն: Ուստի, Պաշտպանի ներկայացուցիչների գործունեությանը խոչընդոտելը, ըստ էության, վերագրվում են բոլոր այդ սուբյեկտներին:

Այսպես, 2009թ. գարնանային զորակոչի ընթացքում ՀՀ ՊՆ ՌՈ վարչության ներկայացուցիչներն ուղղակիորեն խոչընդոտում էին Պաշտպանի ներկայացուցիչների աշխատանքներին, ավելին պատասխանատու Ա. Բ.-ն և նրա ենթակա սպաները պնդում էին, որ Պաշտպանի ներկայացուցիչները իրավունք չունեն մեկուսի առանձնազրույցներ ունենալ զորակոչիկների հետ, իսկ ՀՀ ԶՈՒ ԳՇ կազմզորահավաքային վարչության պետը փորձում էր

արդարացնել այդ գործելաոճը, միաժամանակ, հիմնավորելով, որ իրենք գործում են օրենքի շրջանակներում: Իսկ ահա նույն տարվա աշնանային զորակոչի ընթացքում նույն վարչության ներկայացուցիչները ուղղակիորեն աջակցել են Պաշտպանի ներկայացուցիչների աշխատանքներին և դա կատարվել է վարչության պատասխանատու Ա. Ա.-ի անմիջական միջամտությամբ: Պաշտպանի ներկայացուցիչները որևէ այցելություն չի խոչընդոտվել, ավելին մի շարք հարցերի շուրջ կազմակերպվել են քննարկումներ:

Նշենք, որ զորակոչի անցկացման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով այդ աշխատանքներին մասնակցում է նաև ՀՀ զինվորական դատախազության ներկայացուցչը, ինչը պրակտիկայում, ըստ էության, չի արդարացվում, քանի որ զինդատախազության ներկայացուցիչը Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխան գործելու փոխարեն այլ վարքագիծ է դրսևորում: Նման իրավիճակում, կարծում ենք, արժե քննարկել զորակոչի անցկացման աշխատանքներին զին-դատախազության ներկայացուցչի հետագա մասնակցության կամ նրան մեկ այլ ներկայացուցչով փոխարինելու նպատակահարմարության հարցը:

Ասվածի վառ օրինակ. Մասիսի զինկոմիսարիատից զորակոչվող զինակոչիկ Հ. Հ-ի անձնական գործում առկա բժշկական փաստաթղթերը վկայում էին, որ ինքը տառապում է փսորիազ հիվանդությամբ, ինչի պատճառով նախ թույլ չէին տվել, որպեսզի ընդունվի ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, բացի դրանից, ինքը Մ. Մելքոնյան վարժարանում սովորելու ընթացքում շուրջ երկու ամիս բուժվել է ՀՀ ՊՆ ԵԿՋ հոսպիտալում, որտեղ նույնպես նրա մոտ ախտորոշվել է փսորիազ հիվանդությունը:

Հետագայում, զինկոմիսարիատի կողմից տրված ուղեգրով զինակոչիկը հետազոտվել է մեկ այլ քաղաքացիական բուժհաստատությունում, որտեղ նրան տրված եզրակացության մեջ ամբողջովին բացառվում է այդ հիվանդության գոյությունը: Այսինքն ստացվում է, որ երկու բժշկական եզրակացությունների միջև առկա են հակասություններ:

Եղած հակասությունը վերացնելու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչների կողմից ներկայացվել էր առաջարկ, զինակոչիկին ուղարկել մեկ այլ բուժ. հաստատությունը, լրացուցիչ բուժ. հետազոտություն անցնելու: Քննարկմանը մասնակցելով զինդատախազության ներկայացուցիչ Հ. Մկրտչյանը սկզբնական շրջանում համաձայն էր այդ առաջարկին, սակայն երբ քննարկումը տեղափոխվեց մի քանի գերատսչությունների ներկայացուիչների քննարկման դաշտ, նույն զինդատախազության ներկայացուցիչը փորձեց հիմնավորել, որ նրան այլ հաստատություն բուժհետազոտության ուղարկելու անհրաժեշտություն չկա և նրան պետք է զորակոչեն բանակ: Ընդ որում, հետագայում, տեղեկացրել են, որ նրան զորակոչել են ՀՀ ՊԲ N զորամաս, ինչին մեր խորին համոզմամբ

նպաստել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունն ու հետևողականությունը:

Իսկ թե ՀՀ զինված ուժերում կարգապահական քաղաքականությունն իրականացնելիս ի՞նչ մակարդակով են պաշտպանվում մարդու իրավունքները, այդ մասին հաշվետու տարում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ Պաշտպանը հանրությանը ներկայացրել է արտահերթ հրապարակային զեկույց, որտեղ ընդգրկված է օրենդրության և իրավակիրառական պրակտիկայի ընթացքում վերհանված խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված միջոցառումների ցանկը:

4.2. Երեխաների իրավունքներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան բոլոր զեկույցներում առանձնահատուկ տեղ է հատկացվում երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրներին, դրանով իսկ փաստելով այն հանգամանքը, *որ երեխաների իրավունքների պաշտպանությունը բարդ և բազմակողմանի գործընթաց է, որում պետք է ներգրավվեն ոչ միայն նրանց ծնողները, ընտանիքի անդամները, այլև հասարակությունը և* ***պետությունը՝ պետական ողջ համակարգի*** *միջոցով:*

Լինելով անկախ և անփոփոխելի անձ, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր լիազորությունների շրջանակներում երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացնում է հետևյալ եղանակներով՝

ա/ երեխայի իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ մուտքագված դիմում-բողոքների քննարկման,

բ/ երեխայի իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում (ԶԼՄ-ի, այլ անձանց ահազանգերի միջոցով և այլն) նման իրավիճակներին արագ արձագանքելու և Պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ գործի քննություն անցկացնելու,

գ/ երեխայի դաստիարակության և ազգաբնակչության սոցիալական պաշտպանության այլ հաստատություններ (մանկատներ, երեխաների խնամքի և դաստիարակության հաստատություններ, ցերեկային կենտրոններ և այլն), կանանց և անչափահասների քրեակատարողական հիմնարկ պարբերաբար այցելություններ

կատարելու, դրանցում առկա խնդիրները վերհանելու և իրավասու մարմինների ուշադրությունը դրանց լուծմանը կենտրոնացնելու,

դ/ երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումներ կազմակերպելու և ոլորտի հիմնախնդիրները նաև հասարակական սեկտորի տեսակետից ուսումնասիրելու ու դրանց արձագանքելու եղանակներով:

Բացի այդ, 2008 թվականից Պաշտպանի աշխատակազմը սկսել է երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության ուսումնասիրության և դրա կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկների մշակման շարունակական գործընթաց: Առաջին արդյունքները արտացոլվել են 2008թ. հրապարակված «Երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ առկա որոշ խնդիրների վերաբերյալ» Պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում, որը տպագրվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի օժանդակությամբ: Զեկույցը ներկայացվել է իրավասու մարմիններ, այդ թվում՝ ՀՀ ԱԺ: Նախատեսվում է, որ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ Զեկույցում տեղ գտած հիմնական առաջարկներն առաջիկայում կընդունվեն:

Երեխայի իրավունքների պաշտպանության տեսակետից Պաշտպանը մշտապես կարևորվել է Պաշտպանի աշխատակազմում երեխայի իրավունքներով զբաղվող առանձին բաժնի ստեղծման կամ երեխայի իրավունքներով պատասխանատուի հաստիքի նախատեսման հարցը: Այդ կապակցությամբ հարկ է նաև մեջբերել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989թ. կոնվենցիայի դրույթների կիրառման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության զեկույցի կապակցությամբ Երեխայի իրավունքների Կոմիտեի ներկայացրած դիտողությունը, որով «…Կոմիտեն հանձնարարում է, որ անդամ պետությունը, համաձայն Կոմիտեի ընդհանուր դիտողություն 2-ի (2002թ.), որը վերաբերում է երեխայի իրավունքների սատարման ու պաշտպանության հարցում մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտների դերին, ստեղծի մի առանձին մարմին, որը կոնկրետ պատասխանատու կլինի երեխաների իրավունքների պաշտպանության համար կամ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հատուկ մի բաժին, որը պատասխանատու կլինի այդ հարցերի համար: Չնայած դրան, հարցը դեռևս լուծում չի ստացել, ինչը պայմանավորված է համապատասխան հաստիքի (հաստիքների) և դրա պետական ֆինանսավորման բացակայության հետ:

2009թ. ընթացքում երեխայի իրավունքների վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքների բնույթը նախորդ տարվա համեմատ չի փոխվել: Ստացված 12 դիմում-բողոքները վերաբերել են՝

ա) ալիմենտի վճարման վերաբերյալ դատական ակտերի կատարման դժվարություններին, ինչը պայմանավորված է ինչպես ծնողների կողմից ալիմենտը ժամանակին չվճարելու, իրական եկամուտները թաքցնելու, այլ երկիր մեկնելու, այնպես էլ դատական ակտերի հարկադիր կատարողների կողմից դատական ակտի հարկադիր կատարումն ապահովելու հարցում օրենսդրությամբ իրենց վերապահված բոլոր հնարավորությունները չօգտագործելու, ոչ օպերատիվ գործելու, որոշ դեպքերում անգործություն դրսևորելու դեպքերի հետ:

բ) միմյանցից առանձին ապրող ծնողների կողմից երեխայի հանդեպ ունեցած իրենց իրավունքները չարաշահելու դեպքերին: Տարբեր պատճառներով, հիմնականում ամուսնալուծության, երեխայից առանձին ապրող ծնողը հաճախ չարաշահում է երեխայի հետ տեսակցություն ունենալու իր իրավունքը՝ ի հաշիվ երեխայի լավագույն շահերի: Խնամակալության և հոգաբարձության մարմինը, որի մասնակցությունը նման հարցերով դատաքննությունների ժամանակ պարտադիր է, պետք է նախապես հանգամանորեն ուսումնասիրի խնդիրը և ունենա բոլոր հարցերի պատասխանները: Մինչդեռ իրականում այս մարմնի դիրքորոշումը հաճախ պայմանավորված է ծնողներից մեկի նկատմամբ համակրանքով, այլ ոչ թե երեխայի շահերի պաշտպանության պարտականությամբ:

գ) խնամակալության և հոգաբարձության մարմինների գործողություններին (անգործությանը)՝ երեխայի խնամքը ծնողներից որևէ մեկին հանձնելու, ծնողներից որևէ մեկի մոտ երեխայի մնալու նպատակահարմարությունը որոշելու և երեխայի կապակցությամբ այլ վեճերի առնչությամբ նրանց տված եզրակացություններից և որոշումներից դժգոհություններին:

Ինչպես արդեն նշել ենք, երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների շարքում Պաշտպանը և/կամ աշխատակազմի ներկայացուցիչները պարբերաբար այցելություններ են կատարում մանկատներ, գիշերօթիկ հաստատություններ և երեխայի խնամքի ու դաստիարակության տարբեր կազմակերպություններ:

«Երևանի մանկան տուն», «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն», «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն», «Զատիկ» մանկատուն և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ներ կատարած այցելությունների ընթացքում վեր են հանվել այնպիսի

խնդիրներ, ինչպիսիք են՝ նշված հաստատությունների շենքերի ոչ բարվոք վիճակը, վերանորոգման անհրաժեշտությունը, սահմանված նորմատիվներին երեխաների սենյակների մակերեսների անհամապատասխանությունը, մանկատների շրջանավարտներին բնակարանով և աշխատանքով ապահովելու խնդիրները և այլն:

Նշված և այլ հարցերը Պաշտպանի կողմից ներկայացվել են իրավասու մարմինների ուշադրությանը: Այդ կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը արձագանքել է՝ հայտնելով, որ նշված հաստատությունների շենքերի վերանորոգման, բարելավման հարցը նախարարությունը հաճախ ներկայացրել է Միջնաժամկետ ծախսային ծրագրերում, սակայն պետական միջոցների սղության պատճառով ՀՀ պետական բյուջեում չի ներառվել: 2009 թվականին ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել 2010-2012 թվականների ՄԺԾԾ հայտը, որի գործունեությունն էլ ժամանակավորապես դադարեցվել է: Նախարարությունն այն կընդգրկի 2010 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտում և կներկայացնի համաձայնեցման: Միաժամանակ նախարարությունը համագործակցում է միջազգային մի շարք դոնոր կազմակերպությունների հետ, որպեսզի վերը նշված աշխատանքներից որոշակի մասը իրականացվի վերջիններիս միջոցների հաշվին:

Մանկատների 18 տարին լրացած շրջանավարտների՝ մանկատանը մնալու հնարավորության հարցի առնչությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՀՀ կառավարություն է ներկայացրել «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց բնակարանային հաշվառման կարգը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պաականող անձանց բնակարանների գնման վկայագրերի տրամադրման կարգը, պետական աջակցություն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց ծրագիրը հաստատելու, ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի հ.983-Ն և 2003 թվականի հոկտեմբերի 30-ի հ. 1419-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվելու դեպքում հնարավորություն կստեղծվի երեխաներին տրամադրել գնման վկայագրեր և մեծ թվով երեխաներ կկարողանան իրենք գնել իրենց բնակարանները:

Բարձրացված հարցերը Պաշտպանի ուշադրության կենտրոնում են:

4.3. Հաշմանդամների իրավունքներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի բոլոր տարեկան զեկույցներում մանրամասն անդրադարձ է կատարվել Հայաստանում հաշմանդամների՝ որպես հասարակության առավել խոցելի խմբի հիմնախնդիրներին: Այնուամենայնիվ, ընդհանուր պատկերն այս ոլորտում, ըստ էության, չի փոխվել, էական տեղաշարժ այս ոլորտում չի գրանցվել:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության, հավասար հնարավորությունների ապահովման պետական քաղաքականության հիմնադրույթները սահմանված են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման առնչությամբ դրույթներ պարունակվում են առանձին ոլորտներ կարգավորող մի շարք այլ իրավական ակտերում:

ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի նիստի թիվ 44 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. ռազմավարությունը», որի նպատակն է ապահովել հաշմանդամների ինտեգրումը հասարակությունում, հաշմանդամների լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Ռազմավարությամբ սահմանված ուղղությունների հիման վրա յուրաքանչյուր տարի հաստատվում և իրականացվում են հաշմանդամների սոցիալական պաշտպանության տարեկան ծրագրերը:

Հատուկ ինստիտուցիոնալ մեխանիզմների ապահովման առումով հարկ է առանձնացնել ՀՀ վարչապետի 2008թ. փետրվարի 25-ի թիվ 98-Ն որոշմամբ ստեղծված հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը, որի նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն աջակցելն է: Ստեղծվել են նաև նմանատիպ մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովներ:

Չնայած ձեռնարկված բոլոր միջոցառումներին՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման և հասարակության մեջ նրանց ինտեգրացման մակարդակը մեր հանրապետությունում հեռու է բավարար լինելուց:

Հայաստանի Հանրապետությունում 2009թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվառված են 170 950 հաշմանդամ: Հաշմանդամների իրավունքների իրականացման հետ կապված հիմնախնդիրները առավել սուր դրսևորումներ են ստացել առողջապահության, սոցիալական ու հոգեբանական, վերականգնման, հանրային կրթության, տրանսպորտի,

հաղորդակցության, զբաղվածության մատչելիության ապահովման, սոցիալական պաշտպանության ոլորտներում:

Գրեթե բոլոր ոլորտներում առկա հիմնախնդիրները պայմանավորված են առաջին հերթին հաշմանդամություն ունեցող անձանց համար անմատչելի միջավայրով:

Ներառական կրթությունը նախկինի պես հաշմանդամների համար մնում է ոչ մատչելի, առաջին հերթին, համապատասխան ուսումնական հաստատությունների՝ հաշմանդամների կարիքներին հարմարեցված չլինելու պատճառով: Թեքահարթակներ առկա են մի շարք դպրոցների մուտքերի մոտ, սակայն նույնիսկ այս դպրոցների շենքերը մատչելի չեն հաշմանդամություն ունեցող երեխաների համար, քանի որ առաջին հարկից բարձր հարկերի դասասենյակները հաշմանդամների կարիքներին հարմարեցված չեն: Ինչ վերաբերում է սանհանգույցներին, ապա սայլակ օգտագործող երեխաների համար դրանց ֆիզիկական մատչելիության ապահովման խնդիրը մինչ օրս լուծված չէ: Հաշմանդամություն ունեցող անձանց համար միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության ապահովման ոլորտում առկա են նույն խնդիրները:

Ինչպես նախորդ, այնպես էլ այդ տարի զբաղվածության ոլորտի գերակա խնդիրները առնչվում են աշխատունակ հաշմանդամների աշխատանքի տեղավորման ցածր ցուցանիշների, օրենսդրությամբ սահմանված ոչ բավարար երաշխիքների և զաբաղվածության ապահովման մեխանիզմների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուներին տրվող երաշխիքների մասին գործատուների տեղեկացվածության ոչ բավարար մակարդակի, հաշմանդամների պահանջներին աշխատատեղերի հարմարեցված չլինելու, ինչպես նաև ոչ բավարար մասնագիտական ուսուցման հետ:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ աշխատունակ հաշմանդամների միայն 8%-ն է զբաղված, ինչը չափազանց ցածր ցուցանիշ է:

Մյուս բոլոր ոլորտներում առկա հիմնախնդիրները կրկին պայմանավորված են սոցիալական ենթակառուցվածքի շենքերի ու շինությունների, փողոցների՝ հաշմանդամների կարիքներին հարմարեցված չլինելու հետ, ինչի հետևանքով զգալիորեն խոչընդոտվում է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հասարակական, քաղաքական և մշակութային կյանքին (մասնակցություն ընտրություններին, այցելություններ մշակութային և մարզական օջախներ և այլն): Սրված է նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտի մատչելիության խնդիրը, ինչը գրեթե ամբողջությամբ սահմանափակում է նրանց տեղաշարժի իրավունքը: Խնդիրները շարունակում են գերակա մնալ հաշմանդամների բուժօգնության կազմակերպման, պետական պատվերի շրջանակում

նրանց դեղորայքով ապահովման, վերականգնողական առողջության ապահովման առնչությամբ:

2009թ.-ի մայիսի 31-ի Երևանի ավագանու ընտրությունների դիտարկումների արդյունքում արձանագրվել, որ քվեարկությանը հաշմանդամ ընտրողների մասնակցությունն ապահովելու համար բավարար պայմաններ չէին ստեղծվել: Աննշան բացառություններով, իրավասու մարմինների կողմից անհրաժեշտ քայլեր չէին ձեռնարկվել սայլակ օգտագործող և դժվարությամբ տեղաշարժվող ընտրողների համար ընտրական տեղամասերը ֆիզիկապես մատչելի դարձնելու համար:[23]

Այսպիսով, թեև օրենսդրությամբ շատ դեպքերում սահմանված են հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման անհրաժեշտ երաշխիքներ, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում վերջիններիս ներգրավվածության ապահովման խրախուսման մեխանիզմներ, սակայն գործնականում այս դրույթները գրեթե չեն կիրառվում:

Շատ ցածր է հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց իրավունքների, կարիքների, նրանց կարողությունների և հնարավոր ներդման վերաբերյալ, ինչպես նաև առկա ծրագրերի, ծառայությունների, օրենսդրական երաշխիքների վերաբերյալ իրազեկության մակարդակը, ինչը իր հերթին լրացուցիչ խոչընդոտ է հանդիսանում հաշմանդամների իրավունքների գործնական իրականացման ճանապարհին:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման, խտրականության բացառման ուղղությամբ ՀՀ-ն պարտավորություններ է ստանձնել մի շարք միջազգային-իրավական պայմանագրերով, այդ թվում՝ ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրերով, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով և այլն:

2007թ. մարտի 3-ին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, որով մի շարք պարտավորություններ է ստանձնել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց իրավունքները և հիմնարար ազատությունները ապահովելու ուղղությամբ՝ հաշմանդամության վրա հիմնված խտրականության բացառման սկզբունքի հիման վրա: Այնուամենայնիվ, այս կոնվենցիան մինչ օրս չի վավերացվել Հայաստանի Հանրապետության կողմից:

[23] 2009թ.-ի մայիսի 31-ի Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում «Ունիսոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված դիտարկման արդյունքների վերաբերյալ զեկույց:

Մարդու իրավունքների ազգային ծրագիրը, որը պետք է հաստատվի ՀՀ կառավարության կողմից 2010թ., ներառում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Ծրագիրը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների հավասարության ապահովման ուղղությունների լիարժեք իրականացմանը, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իմպլեմենտացման ապահովմանը: Որպես առանձին ուղղություն՝ նախատեսվում են հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց իրավունքների, կարիքների, նրանց կարողությունների և հնարավոր ներդման վերաբերյալ հասարակությունում իրազեկության բարձրացման, առկա ծրագրերի, ծառայությունների, օրենսդրական երաշխիքների վերաբերյալ տեղեկատվության տարածման, կրթական ծրագրերում հավասարության և հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքում լիարժեք մասնակցության սկզբունքների արտացոլման ուղղությամբ հստակ միջոցառումներ: Այս միջոցառումները մշակելիս պետք է հաշվի առնվեն նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության՝ որպես իրազեկության բարձրացման ինստիտուցիոնալ մեխանիզմի հնարավոր դերը և գործառույթները:

2009թ. Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվել է հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել այն հիմնական պարտավորությունները, որոնք Հայաստանի Հանրապետությունն ունի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների ապահովման առումով, ինչպես նաև վերլուծել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը՝ միջազգային իրավական պայմանագրերին համապատասխանության գնահատման տեսանկյունից: Հետազոտությունը բացի իրավականից ունի նաև սոցիալ-հոգեբանական ասպեկտներ և առաջիկայում կներկայացվի ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների հանձնաժողովի քննարկմանը:

4.4. Փախստականների իրավունքներ

Փախստականներից ստացված դիմում-բողոքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նախորդ տարիներին նրանց հուզող խնդիրները բովանդակային առումով նույնն են մնացել: Մի շարք դիմումատուներ խնդրել են միջամտել իրենց բնակարանային պայմանների բարելավման կամ բնակարանային խնդրի լուծման հարցերին:

Դեռևս 2008թ. տարեկան զեկույցում անդրադարձ էր կատարվել ՀՀ քաղաքացիություն ընդունելուց հետո նախկին փախստականներին «ճակատագրի քմահաճույքին» թողնելու և

փախստականների նատուրալիզացիայի իրականացման ոչ պատշաճ դրսևորումներին: Ցավոք, նման դրսևորումներ եղել են նաև 2009 թվականին:

Օրինակ՝ նախկին փախստականը 2004 թվականին ստացել է ՀՀ քաղաքացիություն և շարունակում է ապրել գյուղապետարանի վարչական շենքում, որտեղ չկան համապատասխան կոմունալ պայմաններ: 2005թ. բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրով իրեն առաջարկվել է բնակարանի գնման վկայագիր, սակայն ինքը հրաժարվել է տվյալ գումարից, քանի որ դրանով բնակարան գնել չէր կարող: Նման իրավիճակում գտնվող ընտանիքները (որպիսիք կան նաև հանրապետության մյուս մարզերում) մնում են դեռևս բնակարանի կարիքավոր:

Փախստականներով բնակեցված ավաններում, գյուղերում կամ քաղաքային թաղամասերում կարևոր հարցեր են շրջակա միջավայրի մաքրությունը, սանիտարահամաճարակային իրավիճակը, անհրաժեշտ նվազագույն կոմունալ պայմանների առկայությունը և այլն: Այս խնդիրների վերաբերյալ Պաշտպանը ստանում է թե՛ բանավոր, թե՛ գրավոր բողոքներ: Պաշտպանի միջամտությամբ լուծվել է փախստականներով բնակեցված Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի ջրամատակարարման պատշաճ կերպով կազմակերպելու հարցը:

Մեկ այլ գործով փախստականի կարգավիճակ ունեցող դիմումատուն բողոքել է, որ համատիրությունից տեղեկանք տրամադրելու համար իրենից պահանջել են 31.000 ՀՀ դրամ, որն իբր կոմունալ վճարների համար կուտակված պարտքն է: Միաժամանակ հայտնել են, որ այդ գումարը կարող է չվճարել՝ տեղեկանքը չպահանջելու դեպքում: Դիմումատուն խնդրել է Պաշտպանի աջակցությունը հարցի լուծմանը: Դիմողին ներկայացվել է իր իրավունքների պաշտպանության հնարավորությունները, քանի որ բողոքը ենթակա չէր Պաշտպանի քննարկմանը, և խորհուրդ է տրվել դիմել թաղային համայնքի ղեկավարին, վերջինի կողմից հարցը չլուծվելու դեպքում՝ դիմել Պաշտպանին: Թաղային համայնքի ղեկավարին դիմելուց հետո դիմումատուի հարցը դրական լուծում է ստացել, ինչի մասին նա տեղեկացրել է Պաշտպանին:

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի իրացումը խոցելի խմբերի, մասնավորապես՝ փախստականների համար անհապաղ լուծում պահանջող հարց է: Նախկին փախստականը, լինելով սոցիալապես անապահով և անօգնական, դիմել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ աջակցելու ՌԴ Կիսլովոդսկի երկրամասում գտնվող իր բազմազավակ և հիվանդ, սոցիալապես անապահով աղջկան՝ ստանալու պատշաճ բուժօգնություն և վերադառնալու Հայաստան:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությամբ հնարավոր է դարձել ՌԴ Կիսլովոդսկի երկրամասում ստացիոնար բուժման մեջ գտնվող Ն. Ր.-ի և նրա 7 անչափահաս երեխաների հայրենիք վերադարձնելու հարցի լուծումը: Քաղցկեղով հիվանդ Ն. Ր.-ին, ըստ նրա մոր հայտնածի, պատշաճ խնամք և բուժօգնություն չէր տրամադրվում ՌԴ-ում: Հարցի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել էր Ստավրոպոլի երկրամասի մարդու իրավունքների հանձնակատար Ա. Սելյուկովին: Ցուցաբերած միջամտության արդյունքում հնարավոր էր եղել ապահովել Ն. Ր.-ի նկատմամբ պատշաճ բուժօգնության իրականացումը: Հայաստան վերադարձած Ն. Ր.-ն Պաշտպանին հասցագրած շնորհակալագրով հայտնել է, որ իր և երեխաների վերադարձը հնարավոր է եղել բացառապես Պաշտանի միջամտության արդյունքում:

4.5. Ազգային փոքրամասնությունների իրավունքներ

2009թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է ակտիվ համագործակցել 24 հասարակական կազմակերպությունների հետ, որոնք ներկայացնում են ազգային փոքրամասնությունների 11 համայնքներ: Պաշտպանին կից փորձագիտական խորհրդին անդամակցում են Պաշտպանի կողմից ներգրավված ազգային փոքրամասնությունների 2 համայնքների ղեկավարներ:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների խախտման վերաբերյալ ստացված փոքրաթիվ դիմումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց իրավունքների խախտումները առավելապես կրել են ընդհանուր բնույթ և կապված չեն եղել նրանց՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ լինելու հանգամանքի հետ, նրանց բողոքներում ներկայացվել են նույնպիսի հարցեր (բնակարանային խնդիրների, սոցիալական ծառայությունների ոլորտում հանդիպող դժվարությունների, ՀՀ դատական մարմինների կողմից կայացված դատական ակտերից դժգոհությունների վերաբերյալ), ինչպիսիք բարձրացվում են մեր ազգաբնակչության դիմում-բողոքներում:

Ասվածը, սակայն, չի նշանակում, որ այս բնագավառում խնդիրներ չկան: Այս մոտեցումն է արտահայտել նաև Ռասայական խտրականության վերացման կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ 2002թ.-ի եզրափակիչ դիտարկումների 277-րդ կետով: Կոմիտեն նշել է, որ ռասայական խտրականության զոհերի կողմից բողոքների և

իրավական գործողությունների բացակայությունը կարող է մատչելի իրավական միջոցների իրազեկման պակասի հնարավոր ցուցանիշ լինել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպումների ընթացքում նրանց կողմից հստակ նշվել է, որ ծանոթ չեն ներպետական և միջազգային այն փաստաթղթերին, որոնք առնչվում են ազգային փոքրամասնությունների իրավունքներին և դրանց խախտման դեպքում իրավունքների պաշտպանության միջոցներին:

Այդ հանդիպումների ընթացքում նրանց ներկայացվել են իրավունքների և ազատությունների իրականացման հնարավորությունները և քննարկվել են ռասայական խտրականության հնարավոր դրսևորումների բացառման հարցերը, փոխադարձ հանդուրժողականության և ազգերի, ռասայական կամ էթնիկ խմբերի միջև հանդուրժողականության և բարեկամության, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագրի և «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիայի նպատակների և սկզբունքների կիրառելիությունը:

Պաշտպանը և /կամ աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են ազգային փոքրամասնությունների համայնքների բոլոր միջոցառումներին, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների (ԵՄ, ԵԽ, ԵԱՀԿ) կողմից ազգային փոքրամասնությունների հարցերով Հայաստանում և արտասահմանում կազմակերպված միջոցառումներին:

Ազգային փոքրամասնությունների համայնքների ներկայացուցիչների հետ Պաշտպանի և/կամ աշխատակազմի ներկայացուցիչների հանդիպումների ժամանակ ներկայացվել են նրանց հուզող հետևյալ հիմնախնդիրները.

ա) պետական բյուջեից ոչ բավարար ֆինանսավորումը, բ) ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին հարկային արտոնությունների տրամադրումը, գ) ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով հեռուստատեսային և ռադիոհաղորդումների և դրանց եթերաժամի ապահովումը, դ) ազգային փոքրամասնությունների պատմական հայրենիքի էլեկտրոնային և տպագիր ԶԼՄ-ների մատչելիության ապահովումը, ե) ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով դասագրքերի ստեղծման ու տպագրության գործում պետական աջակցության տրամադրումը, զ) ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով նախակրթարանների բացակայությունը, է) ընտրովի մարմիններում քվոտաների տեսքով պետական

կառավարմանը մասնակցելու սահմանափակ հնարավորությունը, ը) հայոց լեզվի ուսուցման դասընթացների կազմակերպման խնդիրները և այլն:

Հաշվի առնելով երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների փոքր թիվը, անհրաժեշտ է լրացուցիչ պետական օժանդակություն տրամադրել այս խմբերին իրենց լեզվական և մշակութային ինքնության պահպանմանն աջակցության նպատակով:

Հարկ է, նշել, որ ԵԽ Նախարարների Կոմիտեն դեռևս 2007թ. փետրվարին Հայաստանի կողմից Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ընդունված բանաձևում Հայաստանի իշխանություններին կոչ է արել քայլեր ձեռնարկել հետևյալ բնագավառներում. բարձրացնել իրազեկվածությունը ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հանրության, քաղաքական գործիչների և լրատվամիջոցների շրջանակում, առավել ջանքեր գործադրել ապահովելու բավարար և որակավորված ուսուցիչների և դասագրքերի մատչելիությունը փոքրամասնությունների լեզուների ուսուցման համար, միջոցներ ձեռնարկել նախադպրոցական կրթության ապահովման ուղղությամբ, հատկապես այն վայրերում, որտեղ զգալի թվով ազգային փոքրամասնություններ են բնակվում և այլն: Այս բանաձևով արձանագրվել է, որ ֆինանսական խնդիրները ազդում են ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը վերաբերող մի շարք ոլորտների առնչությամբ իշխանությունների ձեռնարկած միջոցների իրականացման արդյունավետության վրա:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից Պաշտպանի ստացած փոքրաթիվ դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են մարդու իրավունքների՝ ընդհանուր բնույթ կրող խախտումներին և կապված չեն եղել նրանց՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ լինելու հանգամանքի հետ: Այդուհանդերձ, մեկ բողոքով ազգային փոքրամասնությունների, մասնավորապես, եզդիական համայնքի ներկայացուցիչները բողոքել են, որ 1940թ.-ից Նորք-Մարաշ համայնքի այգիներում եղել է եզդիների գերեզման, սակայն այն մասամբ քանդվել է և տարածքում կատարվել է շինարարություն: Հարցի կապակցությամբ իրենք բազմիցս դիմել են տարբեր պետական մարմինների, սակայն պատասխան չեն ստացել: Խնդրել են Պաշտպանին Երևանի քաղաքապետարանի միջոցով ճշտել գերեզմանատան սահմանները, դրանց տալ իրավական ձևակերպում, ինչպես նաև պահանջել միջոցներ ձեռնարկել ապօրինի շինությունները քանդելու ուղղությամբ:

Դիմումը դեռևս քննարկման փուլում է:

4.6. Կանանց իրավունքներ

Թեև 2009թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը կանանց իրավունքներին առնչվող բողոքներ գրեթե չի ստացել, այնուամենայնիվ, ոլորտում առկա են ուշադրության արժանի մի շարք հիմնախնդիրներ:

Գենդերային հավասարության հիմնահարցերը կարգավորող համապարփակ օրենք Հայաստանի Հանրապետությունում դեռևս չկա, սակայն մշակման փուլում է գտնվում «Կանանց և տղամարդկանց հավասար իրավուքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Հասարակական նախաձեռնությամբ մշակման փուլում է գտնվում նաև «Ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ» ՀՀ օրենքի նախագիծը, որը հետագա ընթացքի համար պետք է ներկայացվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Կանանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված պետական քաղաքականության համակարգման նպատակով ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի թիվ 645-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը» և դրա միջոցառումների ժամանակացույցը:

Ծրագրով սահմանվել է Հայաստանի Հանրապետությունում կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ տարվող պետական քաղաքականության սկզբունքները, առաջնահերթությունը և հիմնական ուղղությունները: Սահմանվել են ըստ ժամանակացույցի իրականացման ենթակա հստակ միջոցառումներ՝ որոշումների կայացման մակարդակում և հասարակական, քաղաքական ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման, կանանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, կրթության, կանանց առողջական վիճակի բարելավման, կնոջ նկատմամբ բռնության երևույթի վերացման, կանանց և աղջիկների նկատմամբ թրաֆիքինգի երևույթի վերացման, կանանց հիմնահարցերի լուսաբանման և կնոջ ընդօրինակելի կերպարի ձևավորման գործում ՁԼՄ-ների և մշակութային հաստատությունների դերի բարձրացման, ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման բնագավառներում:

Ծրագրի շարունակականությունը ապահովելու նպատակով ներկայումս մշակվում է «Գենդերային քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ

կառավարության որոշման նախագիծը: Հայեցակարգի հիման վրա կիրականացվեն հաջորդ տարիների համար ծրագրի մշակման աշխատանքները:

«Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագրով» նախատեսված յուրաքանչյուր տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության նախարարությունների և մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) կողմից իրականացված աշխատանքների մասին հաշվետվությունները հաստատվում են ՀՀ կառավարության կողմից արձանագրային որոշումներով: Ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողության և գնահատման այլ մեխանիզմներ նախատեսված չեն:

Անդրադառնալով ինստիտուցիոնալ հատուկ մեխանիզմներին, պետք է արձանագրենք, որ Հայաստանում դեռևս գոյություն չունի «Պետական քաղաքականության բոլոր ոլորտներում գենդերային ռազմավարության մշակման և արդյունավետ իրականացման, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագրի» իրականացման համակարգումն ապահովող՝ կանանց դրության բարելավման արդյունավետ ազգային մեխանիզմ, որը կհամապատասխաներ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների պահանջներին:

Թեև հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման, կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք գործնական քայլեր, այնուամենայնիվ, այս ոլորտում դեռևս առկա են լուրջ հիմնախնդիրներ՝ երկրի քաղաքական կյանքում կանանց ոչ բավարար ներգրավվածության, կանանց շրջանում մեծ չափերի հասնող գործազրկության, զբաղվածության, կանանց սոցիալ-տնտեսական վիճակի, առողջության պահպանման իրավունքի լիարժեք ապահովման, կանանց նկատմամբ բռնության, ինչպես նաև թրաֆիքինգի երևույթի վերացման տեսանկյունից:

ՀՀ-ն վավերացրել է մարդու իրավունքների ոլորտում այդ թվում՝ ուղղակիորեն կանանց իրավունքներին առնչվող մի շարք միջազգային-իրավական պայմանագրեր, որոնց թվում են՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը, Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի

կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրությունը, Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին ԵԽ կոնվենցիան, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի և Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված մի շարք այլ պայմանագրեր:

2009թ. փետրվարին Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեն ՀՀ կառավարությանն է ներկայացրել իր եզրափակիչ հետևությունները՝ համատեղ ներկայացված երրորդ և չորրորդ միացյալ պարբերական զեկույցի վերաբերյալ, որոնք պարունակում են հստակ հանձնարարականներ իրականացման ենթակա միջոցառումների վերաբերյալ:

Կոմիտեի կողմից բարձրացված հիմնախնդիրների շարքում կարևորվել են հետևյալները՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիայի, Կամընտիր արձանագրության դրույթների, Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունների վերաբերյալ իրազեկության ցածր մակարդակը, ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված գենդերային քվոտավորման համակարգի անարդյունավետությունը, կանանց և տղամարդկանց փաստացի հավասարության ապահովմանն ուղղված այլ ժամանակավոր հատուկ միջոցների բացակայությունը, ընտանեկան բռնության վերաբերյալ հատուկ օրենսդրության բացակայությունը, թրաֆիքինգի երևույթի բուն պատճառների բացահայտմանն ու վերացմանն ուղղված արդյունավետ միջոցառումների բացակայությունը, թրաֆիքինգի և ընտանեկան բռնության զոհերի համար անհրաժեշտ քանակությամբ ապաստարանների բացակայությունը, Կանանց դրության բարելավման արդյունավետ ազգային մեխանիզմի բացակայությունը, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում գենդերային հիմնահարցերով մասնագիտացված պաշտոնի բացակայությունը, երկրի քաղաքական և հասարակական կյանքում կանանց անբավարար մասնակցությունը, առողջապահական ծառայությունների ոչ բավարար մատչելիությունը, կրթության և զբաղվածության ոլորտում առկա հիմնախնդիրները և այլն: Հաջորդ համատեղ պարբերական զեկույցը Կոմիտեին պետք է ներկայացվի 2013թ., որում կնկարագրվեն ձեռնարկված քայլերը վերոնշյալ հիմնահարցերի լուծման ուղղությամբ: